կարելու էր երկրներ, ինչպես Եվեյցարիան, Միացյալ Թագավորությունը, Ճապոնիան, Գանադան, Ֆրանսիան, Գերմանիան, Ավստրալիան, Բրազիլը և ուրիշներ ծրագրում էին նոր փող ունենալ:

Ավելի խորանալով՝ հայտնաբերեցի, թե մի քանի երկրներ արդեն տպագրել էին նոր փողեր՝ զանազան անվանումներով: Այդ փողերի մեծ մասն ուներ երկու նմանություն. առաջին, ազատ տարածություն 50 ցենտի տրամագծով, սովորաբար փողի ձայն կողմը, և երկրորդ՝ մետաղական երիզ, որ կարելի էր նկատել օդանավակայաններում և պետական սահմաններում տեղադրված հատուկ սարքերի միջոցով:

Դա միջազգայնորեն համաձայնեցված գործ էր, փողերը կարելի էր դուրոթյամբ միավորել՝ վերածելով միջազգային փողի:

Տարիներ անցան ու նոր թղթադրամի հրապարակումն ուշացավ: Տեղեկություններինս վրայ հիմնվելով կարող եմ ասել, եթե ապագային Աշխարհի կառավարությունը պիտի հիմնվի, հաջորդ քայլը պիտի լինի միջազգային փողի հրապարակումը:

Ամենայնդեպս, ելնելով բանկային էլեկտրոնային համակարգի արագ առաջընթացից և հաճախորդների կողմից նրա հեշտ ընդունումից, նոր փողի տեղ ընդունելու են էլեկտրոնային ձևը (ոչ կանխիկ), յուրաքանչյուր գնումից հետո անհատական տոմսը ստուգվում է հատուկ գործիքի միջոցով, և դրական ստուգումից հետո ապրանքի կամ ծառայության գինը ինքնաբերաբար գեղչվում է գնորդի բանկի հաշվից: Սպառողներն արդեն ընդունել են այս ձևը: «Էյ, Թի. էեղ Թի.» ընկերությունն իր հետատեսիլային գովազդը բնութագրել է այսպես. «Մեկ աշխարհ... մեկ տոմս»:

Երբ պարտավորագիրն ընդունվի բոլորի կողմից, ամեն բան պիտի լինի հստակ և վերջնական. այսինքն՝ յուրաքանչյուր անհատ պիտի ստիպվի ունենալ անձնական թվանշան և առանց այդ թվանշանի անկարող պիտի լինի գնել կան ծախել:

Էլեկտրոնիկ համակարգը օգտագործվում է մի շարք երկրներում:

Երբ ուսումնասիրում էի աշխարհի տնտեսական զարգացումները, նկատեցի, որ մեր փողը (*ԱՄՆ-ի դոլարը - խմբ.*) դեկա-

վարում են ընդամենը մի քանի անձեր, որոնց նպատակն է Աշխարհի կառավարությունը հիմնել:

Վերջերս ընդունված միջ-նահանգային օրենքը մեծ բանկերին հնարավորություն է տալիս առեղի արագությամբ կուլ տալ փոքր բանկերին: Օրինակ՝ Լյու Յորքից մինչև Երկու Գարուլիսա նահանգները ձգվող 12 նահանգներում երեք կուլ-յորքյան գերբանկեր հակակշռում են բանկային հարստության 85 տոկոսը:

Լախ նահանգային բանկերը գնեցին փոքրերին, ապա շրջանային բանկերը՝ նահանգայիններին: Վերջապես, կուլ-յորքյան հսկաները գնեցին բոլորին: Այս բոլորը կատարվեցին 1970-ականների վերջերին և 1980-ականների սկզբներին: Լույսը կատարվում է այսօր ամբողջ երկրագնդի մասշտապով:

Այն ժամանակ ես շատ քիչ բան գիտեի: Շուտով հայտնաբերեցի, որ այդ նույն ուժերը ամերիկյան բանկային համակարգը հակակշռել են Դաշնային պահեստի համակարգի (FED, Federal Reserve System) միջոցով: Այս է իրականությունը նրա ստեղծումից 1913-ից մինչև այսօր: Հակառակ կարծվածի, Դաշնային պահեստը կառավարական հաստատություն չէ: Դա անհատներից կազմված բաժնետերերի առևտրական ընկերություն է: Ամենայնդեպս, մի քանի տարի առաջ, ըստ ընդունված համաձայնության, որ կոչվում է «Դաշնային պահեստի մասին» օրենք, անհայտ էին այդ բաժնետերերի անունները: Այսօր նրանց անունները հայտնի են. ութը գլխավոր բաժնետերերն են Լոնդոնի և Քեդլինի «Ռոտչիլդ», Փարիզի «Լագարդ եղբայրներ», Իտալիայի «Մարչալ Մոսես սեյֆ», Ամստերդամի և Համբուրգի «Վորբուրգ», Լյու Յորքի «Լեյնս եղբայրներ», Լյու Յորքի «Քուին-Լեոք», Լյու Յորքի «Չեյ Մենեթթըն» և Լյու Յորքի «Գոլդման, Սաքս» բանկերը: Մոտավորապես 3 հարյուր ընդհանրապես խնամի բաժնետերեր տեր են ԱՄՆ-ի Դաշնային պահեստի համակարգին:

«Դաշնային պահեստի մասին» օրենքի ընդունումը մեծ բանկերի խաղերի և խաբեությունների արդյունքն էր: Սկզբնական գաղափարը առաջարկել էր Նեյտոն Ալտրիչը (Ռոքֆելլեր եղբայրների մեծ հայրը մորական կողմից), որի համար էլ կոչվում է «Ալտրիչի օրենք»: Կոնգրեսը, փոքր բանկերի օգնությամբ, և հա-

մօզվելուց հետո, որ ներքին խաղեր կան, մերժում է այս օրենքը: Հստ ԱՄՆ-ի Սահմանադրության, Դաշնային պահեստի համակարգը անօրեն ձևերով է: Ռոքշ ժամանակ անց, նույն օրինագիծը փոքր փոփոխություններով և ուրիշ անունով (Օուեն-Գլաս) օրենքի է վերածվում: «Ալտրիչի օրենքի» դեմ քվեարկողները կարծում էին, թե հաղթել են և հանգիստ սրտով գնացել էին Սբ. ծնունդը տոնելու, երբ 1913 թ. դեկտեմբերի 23-ին հարցը վերաքննարկվում է Կոնգրեսում և ընդունվում:

«Դաշնային պահեստի մասին» օրենքի սկզբունքներն այնպես են դասակարգվել, որ ով կտնօրինի Լյու Յորքի Դաշնային պահեստի բանկը, նա էլ կտնօրինի նաեւ ամբողջ համակարգը: Այսօր նրա տերն է «Լյու Յորք» բանկը և նա է՝ Դաշնային պահեստը: Այսօր ԱՄՆ-ի հարյուր մեծագույն բանկերը գտնվում են այս շրջանակում:

Դաշնային պահեստում բաժնետոմսեր ունեցող տասներկու միջազգային բանկերից միայն չորսը հաստատվել են ԱՄՆ-ի հողի վրա. մնացածները Եվրոպական են: Դրանցից ամենից ազդեցիկը լոնդոնյան «Ռոտչիլդն» է: Այս ընտանիքի հետ տարբեր ձևերով կապ ունեն նաեւ ԱՄՆ-ում հաստատվածները, ներառյալ Ռոքֆելլերները, որոնք ամենից ազդեցիկ բաժնետերերից են «Չեյ Մենեթթըն» բանկի միջոցով:

Ռոտչիլդ ընտանիքը Մասոնական կարգին (Ազատ մասոններ կամ Ազատ որմնադիրներ) միացել է 1700-ական թվականների վերջերին: Թե՛ս փառասեր, բայց և հարաբերաբար փոքր ընտանիք էր այն ժամանակ, հաստատված լինելով Ֆրանկոլորտում (Գերմանիա): Գործակցելով գաղտնի ընկերությունների հետ և օգտվելով Ազատ մասոնների միջազգային լայնատարած գործարար և քաղաքական կապերից, Ռոտչիլդները ընդարձակում են իրենց բանկային գործառնությունները Եվրոպայի տարածքին: Միւս կողմից, Ազատ մասոնները ֆինանսավորման կարիքն ունեին կառուցելու համար «Աշխարհի նոր կարգ»-ը (New World Order): Ռոտչիլդները հայրաթյամբ են գումարներ, այնպես որ օգուտը փոխադարձ էր:

1820-ին Ռոտչիլդները Եվրոպայի բանկային իշխող ընտանիքն էին, հակակշիռ հաստատած լինելով Ֆրանսիայի, Անգլիայի,

Ավստրիայի, Իտալիայի և Գերմանիայի արագորեն ընդարձակվող բանկերի վրա: Գործառնությունները ղեկավարում էին հինգ Ռոտշիլդ եղբայրները, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու էր մի երկրի: Այն բանկերը, որոնք դաշնակցեցին Ռոտշիլդների և Մասոնական կարգի հետ հաջողեցան:

1800-ական թվականների վերջերին Ռոտշիլդները սկսեցին ամերիկյան արդյունաբերությանը ֆինանսավորել: Երանք այդ գործարքները կատարում էին գերման Կորբուրգների միջոցով, որոնք Նյու Յորքի «Քուին-Լեոք»-ի բաժնետերերից էին: Այսպիսով, Ռոտշիլդ-մասոնական շահերը հաստատվում էին այս երկրի տնտեսության մեջ: Հետագային Կորբուրգները և «Քուին-Լեոք»-ը պիտի լինեին Դաշնային պահեստի գլխավոր բաժնետերերից, իսկ Պոլ Կորբուրգը պիտի դառնար Դաշնային պահեստի խորհրդի առաջին նախագահը:

Ռոտշիլդները ամերիկացի ու եվրոպացի գործակալների միջոցով ֆինանսավորում են Ռոքֆելլերների նավթային հարստությունը, Կառնեգիի երկաթի կայսրությունը, ինչպես նաև «Մարիման» երկաթգծի համակարգը: Ռոքֆելլերները խնամիրանալով Ռոտշիլդների հետ, միասնաբար ֆինանսավորում են մի շարք ամերիկյան գործարքներ «Չեյզ Մենեժերն» և «Միթի» բանկերի միջոցով, որոնք Ռոքֆելլերների ընտանեկան բանկերն են: Ժամանակի ընթացքում մի շարք նոր ընտանիքներ եւս խնամիրանում են Ռոքֆելլերների հետ: 1937-ին ամերիկացիների ամենահարուստ 30 ընտանիքները ազգակցական կապեր էին հաստատել նրանց հետ:

Շնորհիվ Ռոքֆելլերների կուտակած հարստության, այս ընտանիքները մտնում են հավատարիմ դաշնակիցները «ընտանիքին»: Ռոքֆելլերները, իրենց կարգին, շնորհիվ Ռոտշիլդների կուտակած վիթխարի հարստության, մտնում են հավատարիմ նրանց և երանք եվրոպական շահերին:

1890-ին Օհայոյի «Մասնագարտ օյլ»-ը, որ պատկանում էր Ջոն Դ. Ռոքֆելլերին, գտնում էր Ամերիկայի նավթի 90 տոկոսը: Կոնգրեսի կատարած ստուգումները չէին ազդում ընտանիքի առաջընթացի վրա: Երանք միշտ մի քայլ առաջ էին դաշնակցային կառավարությունից: Օրինակ 1911-ին բարձրագույն դատարանը որո-

շում է ընդունում, որ Նյու Ջերսիի «Մասնագարտ օյլ» խախտել է երկրի օրենքը: Ընկերությունը լուծարվում է և ունեցվածքը բաժանվում 33 տարբեր ընկերությունների միջև: Սակայն շուտով բացահայտվում է, թե այդ 33 ընկերությունները պատկանում են նույն անձերին (Ջոն Դ. Ռոքֆելլերն ուներ բաժնեմասերի 25 առ հարյուրը դրանցից յուրաքանչյուրի մեջ):

«Մասնագարտ օյլ»-ին են պատկանում Նյու Ջերսիի «Մասնագարտ օյլը» (այսօր «Էքսոն»), Նյու Յորքի «Մասնագարտ օյլ»-ը (այսօր «Մոբիլ»), Կալիֆոռնիայի և Բնդիանայի «Մասնագարտ օյլ»-երը, «Մարաթոն»-ը, «Ֆիլիպս 66»-ը և «Շելլոն»-ը:

1966-ին Տեխասի պատգամավոր Ռայթ Փուրմանի ղեկավարած խորհրդարանական ստուգումները բացահայտեցին, որ երկրակազմի նավթի մեծագույն յոթը ընկերությունները պատկանում են Ռոքֆելլեր ընտանիքին: Ըստ «Նյու Յորք թայմզ»-ի Նյու Ջերսիի «Մասնագարտ օյլ»-ը հակակշռում էր 321 տարբեր ընկերությունների:

1975-ին Ռոքֆելլերները հակակշռում էին նաև «Ատլանտյան ռիչֆիլդ»-ը (ARCO): Ենթադրվում է, որ նրանք հակակշռում են նաև «Թեքսաքո»-ն:

Դաշնային պահեստի համակարգը շատեր փորձել են լուծարել: Երանցից է Չարլզ Լինդբերգը, նշանավոր օդաչուի հայրը, որ կարողացավ քննություն կատարել, սակայն անօգուտ: Հետագայում նրա կյանքը զոճվարացրին:

Լինդբերգի ճիգերը շարունակվում է պատգամավոր Լուիս ՄակՖադենը: Երեք անգամ փորձում են վերջ տալ նրա կյանքին: Նախ փորձում են սպանել մայրաքաղաք Վաշինգտոնում, նրից փորձում են թունավորել բայց անհաջող: Վերջապես թունավորում են Նյու Յորքում:

1950-ականներին Թենեսիի պատգամավոր Կարոլ Ռիսը այնպիսի հայտնագործումներ կատարեց, որ նույնիսկ Կոնգրեսը չիսկառնաց:

Տեխասի պատգամավոր Ռայթ Փուրմանը շարունակում է բացահայտումները 1960-ականներին և 1970-ականներին, բայց անօգուտ: Ամենայնդեպ, նա առում է. «Դաշնային պահեստի հա-

մակարգի մասին մեր բացահայտումները ցնցիչ եւ գայթակեցուցիչ են, բայց միայն արձանագրվում են Կոնգրեսի օրակարգերում եւ ժողովուրդը չի իմանում դրանց մասին:

Պատգամավոր Լարրի ՄակՂոնալդը 1970-ականներին եւ 1980-ականներին հսկայական աշխատանք է կատարում «Աշխարհի նոր կարգ»-ի դեմ: Նա գրում է նախաբանը «Ռոքֆելլեր թղթածրար»-ի մի գիրք, որ բացահայտում էր Ռոքֆելլերների հարստությունն ու նպատակները: ՄակՂոնալդը զգուշացրեց ամերիկյան ժողովրդին՝ ասելով. «Ռոքֆելլեր թղթածրար»-ը երևակայությունն չէ, դա մեր ժամանակի ամենից ցնցիչ եւ սարսափելի պատմությունն է: Ռոքֆելլերների եւ նրանց դաշնակիցների նպատակն է հիմնել Աշխարհի կառավարությունը, միացնելով գերկապիտալիզմը եւ կոմունիզմը մեկ ծածկի տակ՝ իրենց հակազույն ենթակա»:

«Նրանք անցած մի քանի տարիներին օգտագործելով վիթխարի տնտեսական ուժ, փորձում են ստեղծել իրենց ենթակա քաղաքականություն նախ Ամերիկայում, ապա ամբողջ աշխարհում»:

«Նավադություն: Այո՛, ես համոզված եմ որ կա դավադրություն՝ իր ծավալով միջազգային, ծրագրված սերունդների կողմից եւ անհավատալիորեն չար՝ իր նպատակով»:

ՄակՂոնալդի զգուշացումը գրվել է «Կոնգրեսական» անվանաթղթի վրա, 1975 թ. նոյեմբերին: Նա տարիներ սպասել է, որ մամուլի արձագանգի իր հայտնաբերումներին, բայց անօգուտ: Ճարահատ իջնում է փողոց ու երկրի տարածքին սկսում է խոսել ժողովրդին: ՄակՂոնալդի քաջ կեցվածքը վերջ է գտնում 1983 թ. օգոստոսի 31-ին, երբ եւս զոհվեց կորեական 007 թռիչքի ընթացքում, որ «պատահականորեն» անցել էր խորհրդային սահմանը եւ «պատահականորեն» վար առնվել:

Այս դիպվածի մասին լուրերը կարճ էին եւ շուտով մոռացվեցին, հակառակ նրա, որ մամուլն ու մայրաքաղաքը լավ գիտեին ՄակՂոնալդի կատարած աշխատանքի մասին: ՄակՂոնալդը գլխավորում էր կոնգրեսական այն հանձնաժողովը, որն աշխատում էր մի վտանգավոր միջազգային դավ երեւան հանել:

ԱՄՆ կոնգրեսականի՝ խորհրդային բանակի կողմից վար առնվելից առևտրական ինքնաթիռում գտնվելու հավանականու-

թյունը մեկ միլիոներորդ է: Հաշվի առած որոշ կետեր՝ մեկ միլիարդեւորդ է: Հավատա՛նք, թե սա զուգադիպություն է, հավատա՛նք նաեւ, որ սենատոր Ջոն Հայնզի ու նախկին սենատոր Ջոն Թաուերի ինքնաթիռների խորտակումները նույնպես զուգադիպություններ են:

Թաուերը բացահայտրեն քննադատում էր Արեւելյան հաստատությանը (այդպես են կոչվում Մեկ-աշխարհի հետաքրքրությունները): Նա հարցեր ուներ Կոնգրեսում Մեկ-աշխարհի ջատագովների հետ: Նա գրեց մի գիրք, բացահայտելով իր կեցվածքը: Նրա ինքնաթիռը խորտակվեց 1991 թ. ապրիլի 5-ին, գրքի տպագրությունից անմիջապես հետո: Մեկ օր առաջ ապրիլի 4-ին, Ֆիլադելֆիայի մոտերը խորտակվել էր սենատոր Ջոն Հայնզի ինքնաթիռը:

Հայնզը եւ Թաուերը անդամ էին Մեկ-աշխարհի միաբանության, որ հայտնի է որպես «Արտաթիկ հարաբերությունների խորհուրդ» (ԱՀԽ): Նրանք շատ բան գիտեին: Արկածներ պատահում են, բայց այս բոլորը զուգադիպությունն էր են:

ՄակՂոնալդի մահից հետո նրա գործը շարունակեց սենատոր Ջեսսի Հովմբը: Ջարմանալիորեն, մինչև այսօր ոչ մի բան չի պատահել:

Այս նահատակների շնորհակալ աշխատանքը դանդաղորեն հասնում է ժողովրդին, սակայն, առանց զանգվածային լրատվամիջոցների օգնության անկարելի է մի տեղ հասնել: Ժողովուրդը պետք է իմանա իրականությունը, որպեսզի ճշնում բանեցնի Կոնգրեսի վրա: Բայց ինչպե՛ս ճշնում բանեցնել մի Կոնգրեսի վրա, որի անդամները հավատում են Մեկ-աշխարհի սկզբունքին:

Երբ շարունակեցի պրոպագանդան, գտա, թե ինչպե՛ս են փողը գործածում ժողովրդի վրա ազդելու համար:

Ղաշնային պահեստի բաժնետերերը ամեն տարի միլիարդավոր դոլարներ են «շահում»: Շահն առաջանում է ԱՄՆ-ի կառավարության ծախսերից եւ ամերիկացի քաղաքացու բանկային պարտքերի տոկոսներից, որոնց մի մասը մնում է Ղաշնային պահեստում: Այս գումարի մեծ մասը, ինչպես նաեւ նույն անձերին պատկանող մեծ ընկերություններից եւ բանկերից շահված բոլոր

գումարները, ներդրվում են հարկազերծ հաստատություններում, ապա վերաներդրվում ամերիկյան եւ օտար ընկերություններում: Այս խաբեությունից առաջացած բոլոր գումարները գործածվում են մեր տնտեսության վրա ազդելու համար:

Այսպիսով, մի փոքր խումբ, առերեսույթ նվիրված մարդկության բարօրությանը, հիմնելով Աշխարհի կառավարությունը, իշխում է աշխարհի տնտեսության վրա:

Ձուգադիպություն չէ, որ Դաշնային պահեստը հիմնած ուժերն անցկացրել են օրենքներ, որոնք թույլ են տալիս հարկազերծ հաստատություններ հիմնել: Հարկազերծ անհատական հաստատությունների գործառույթը միջազգային բանկերից զույգացած հսկայական շահը պահպանել է: Այդ գումարներով բացահայտորեն ազդում են ամերիկյան կյանքի յուրաքանչյուր երեսույթի վրա:

Ռիսի հանձնախումբը բացահայտում է Ռոքֆելլեր-Կառնեգի-Ֆորդ հսկաների անհավատալի ազդեցությունը հումանիտար գիտությունների եւ կրթության վրա: Նրանք հսկայական գումարներ են տրամադրում երկրորդական եւ միջակ կազմակերպությունների: Երկրորդական հաստատություններն են Միավորված ազգերի կազմակերպությունը եւ Արտաքին հարաբերությունների խորհուրդը:

Ռիսի հանձնախմբի նպատակն էր բացահայտել, թե այս մեծ ընկերությունների փողն իրապես ինչպե՞ս է ծախսվում: Օրինակ՝ հումանիտար գիտությունների պարագային հանձնախումբը գտնում է, որ Ռոքֆելլեր հաստատությունը ֆինանսավորում է ղոկատոր Ալֆրեդ Քինսիի սեռական հարաբերությունների վերաբերյալ ուսումնասիրությունները: Քինսին իր ոչ գիտական ուսումնասիրություններով քաջալերում էր սեռական ազատությունը (խառն սեքս): Եթե հաճախել ես ուսումնարան կամ համալսարան, մի կիստամյակ անպայման ուսումնաիրած կլինես Քինսիի գտածոները: Ես դրանք անցել եմ:

Կրթական դաշտը նույնպես ենթակա է Ռոքֆելլեր եւ ընկերների գումարներին: Իրականության մեջ շատ քչեր կարողացել են փախչել միջազգային ուժերի ճիրաններից: Ռիսի հանձնախումբը բացահայտել է. «Ազգային կրթական միությունը (Նաե՛ տարբեր

կրթական կազմակերպություններ) քաջալերում են աշակերտին ուսումնասիրել ընկերաբանություն եւ երկրաբանություն, որպեսզի սովոր լինեն Մեկ-աշխարհ գաղափարին»: Այնքան մեծ է այս հաստատությունների հակակշիռը կրթության վրա, որ կարելի է գիրք գրել միայն այս նյութի մասին:

Քայց ամենից ավելի Ռոքֆելլեր եւ ընկերներն ազդել են արտաքին քաղաքականության վրա: Այս ընկերությունն իր գաղափարները տարածում է Միավորված ազգերի կազմակերպության, «Խաղաղասիրական հարաբերություններ» հաստատության եւ Արտաքին հարաբերությունների խորհրդի միջոցով: սրանք ընդամենը մի քանի են, չթվելու համար բոլորը: Նրանց ազդեցությունը հասել է կառավարություն, Կոնգրես եւ պետություն:

Ռիսի հանձնախումբը հաստատել է, որ նվազագույնը մեկ օտար ընկերության մասնակցել է մեր արտաքին քաղաքականության ձեւավորմանը: Նա նշանավոր արդյունաբերող եւ համաշխարհայինական, բրիտանացի Մեսիլ Ռոդեսն է, որ Ռոտչլիզների եւ ազատ մասոնների դաշնակիցն էր: Նա իր հարստությունը դիզել էր Հարավային Աֆրիկայի ադամանդի հանքերից, սեւամաշկ գերիների քրտինքից ու արյունից: Նրա մահից հետո հիմնվում է «Ռոդես կրթական հիմնադրամ»-ը, որի նպատակը համաշխարհայնացումն է:

Մինչեւ 1953 թվականը, «Ռոդես կրթական հիմնադրամ»-ի 1372 ամերիկացի աշակերտներից 431-ը եղել են դասատու, 113-ը՝ կառավարական բարձր պաշտոնյա, 70-ը՝ մամուլի աշխատակից, 14-ը՝ հաստատությունների պատասխանատու, ինչպես «Ռոքֆելլեր հաստատության» նախագահը, «Գուգլենայմ հաստատության» տնօրենը եւ «Կառնեգի հաստատության» նախկին նախագահը:

Վերջերս նույնն է անում «Նորբլյան մրցանակի հաստատությունը»՝ պարզեւստրելով Մեկ-աշխարհը քաջալերողները:

Հակառակ այս քննադատություններին, Մեկ-աշխարհի քարոզողների ազդեցությունը տիրական է հումանիտար գիտությունների, կրթության եւ արտաքին քաղաքականության վրա, քանի որ լուրջ ընդդիմություն չկա: Եթե նույնիսկ ընդդիմություն գոյանա, բաղդատած նրանց ունեցած միջոցներին, դա ոչինչ է լինելու:

Չարի ուժերը միշտ ավելի գորավոր են, որովհետև գիտեն փող կուտակելու, ապա ուրիշներին օգտագործելու ձևերը:

Գլուխ 2

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս նույն ուժերը առաջ են մղում իրենց ծրագիրները ինչպես տնտեսության, այնպես էլ քաղաքակրթության մեջ: Առաջին փորձառությունս ունեցա Մայրագույն Արեւելքում: Պատահմամբ ծանոթացա մի կարեւոր գործարարի, որը միեւնույն ժամանակ «Աստիջեյտեղ պրես»-ի անդամ էր: Երբ նա տեսավ, որ մենք երկուսս էլ ունենք միեւնույն կարծիքը նույն հարցերի մասին, ցածր ձայնով սկսեց բացատրել, թե ի՞նչ է նշանակում «Մեկ-աշխարհ կառավարություն» միջազգային դավադրությունը: Նա պայուսակից մի քանի թղթեր հանեց և երկարեց ինձ: Այդ թղթերի վրա նշված էին ԱՄՆ-ի դավի մեջ ընդգրկված բաղաբացիների՝ ամերիկացի ղեկավարների, կառավարական բարձրաստիճան անդամների, արդյունաբերության, կրթության, մամուլի, բանակի և տնտեսության նշանավոր դեմքերի անունները: Սրանք այն նույն անձերն էին, ում են հանդիպել էի երբ աշխարհի տնտեսությունն էի ուսումնասիրել: Կարծես հասարակ հայտարար գոյություն ունեւ. ցանկում նշված անունները Արտաքին հարաբերությունների խորհրդի կամ Եռակողմ հանձնաժողովի անդամներ էին, երբեմն՝ երկուսը միասին:

Այդ գիշեր չկարողացա հանգիստ ընել: Ես ինձ հարց էի տալիս, ի՞նչ է նշանակում այս բոլորը և ինչպե՞ս այն կարող է ազդել իմ ապագայի վրա: Սա՞ էլ է գուցադիպություն:

ԱՄՆ վերադարձիս սկսեցի մանրակրկիտ կերպով ուսումնասիրել Արտաքին հարաբերությունների խորհուրդը, Եռակողմ հանձնաժողովը և հարակից կազմակերպություններն ու «Մեկ-աշխարհ» շարժումը: Ուսումնասիրությունը սպառիչ էր:

Երկու տարի ետք կարող էի ասել, թե ինչ են ԱՆԽ-ի նպատակն ու առաքելությունը և նրա ազդեցությունը ԱՄՆ-ի վրա:

Այս պատմությունը սկսվում է մի կազմակերպությամբ, որ կոչվում է «Լուսավորյալները» (Illuminati):

ԼՈՒՍԱՎՈՐՅԱԼՆԵՐԸ

Լուսավորյալները մի գաղտնի կարգ էր, հիմնված՝ Բեզլ-շտայտում (Բավարիա, Գերմանիա)՝ 1776 թ. մայիսի 1-ին, Ադամ Վայսհաուպտի կողմից, որ նշանավոր ազատ մասուն էր: Գազմակերպությունը բարձր կամ լուսավորյալ ազատ մասնություն է, կարեւոր կարգ է ընդհանուր դասավորման մեջ: Նրա գործունեությունը կապված է «Ֆրանսիական Մեծ Արեւելք» մասնական օթյակի հետ: Անունը նշանակում է «լուսավորվածները», որոնք սովորում էին Լուսավորիչի գաղտնիքներն ու լույսի աղբյուրը՝ ըստ լուսավորյալ ազատ մասունների ուսմունքի:

Վայսհաուպտը գրում է. «Մենք պետք է մեր կարելին անենք որպեսզի մեր անդամները բարձրագույն պաշտոնների հասնեն: Այդպիսով միայն մենք կկարողանանք ղեկավարել մարդկությանը: Գրավումը պետք է լինի ծրագրավորված ու գաղտնի»:

Չաջողելու միակ պայմանն էր՝ գործելակերպի ու անդամների անունները մտալու են գաղտնի: Սկսեակները ծանր երդում էին տալիս: Երգման մեջ հստակ սահման էր, թե ի՞նչ կարող է պատահել նրանց եթե թողնեն Կարգը կամ բացահայտեն նրա նպատակն ու ծրագիրները: Նամակագրությունը նշաններով և ծածկանուններով էր տեղի ունենում: Վայսհաուպտի ծածկանունը Սպարտակոս էր:

Չաջողությամբ պսակվեց 1782 թ. հուլիսի 16-ին գումարված մասունական համագումարը, որին մասնակցում էին բոլոր գաղտնի միաբանությունները, ինչպես Մարտինականները, Ազատ մասունները և Լուսավորյալները, որոնց թիվն աշխարհում հասնում էր երեք միլիոնի: Այս ժողովը Լուսավորյալներին առիթ ընձեռնեց իրենց հակակշիռը տարածել, որին մասնակցում էին բոլոր գաղտնի միաբանությունները, ինչպես Մարտինականները, Ազատ մասունները և Լուսավորյալները, որոնց թիվն աշխարհում հասնում էր երեք միլիոնի: Այս ժողովը Լուսավորյալներին առիթ ընձեռնեց իրենց հակակշիռը տարածել, որին մասնակցում էին բոլոր գաղտնի միաբանությունները, ինչպես Մարտինականները, Ազատ մասունները և Լուսավորյալները, որոնց թիվն աշխարհում հասնում էր երեք միլիոնի: Այս ժողովը Լուսավորյալներին առիթ ընձեռնեց իրենց հակակշիռը տարածել, որին մասնակցում էին բոլոր գաղտնի միաբանությունները, ինչպես Մարտինականները, Ազատ մասունները և Լուսավորյալները, որոնց թիվն աշխարհում հասնում էր երեք միլիոնի:

համեստ ազատ մասն էր Վիրեո Գոնտը, որ ժողովից հետո ասաց, ես ձեզ պիտի չասեմ այդ որոշումները, բայց նրանք շատ ավելի լուրջ են, քան դուք կարծում եք: Հուսովոր դավը այնքան լավ է մտածված, որ ոչ թագավոր ես ոչ էլ եկեղեցի կարող են փրկվել»: Դրանից հետո Գոնտը սուկումով էր խոսում ազատ մասունների մասին:

Այդ համագումարին որոշվում է Լուսավորչայ ազատ մասունների կենտրոնը Բավարիայից փոխադրել Ֆրանկֆուրտ, որ Ռոստիլիցների ամրոցն էր: Երկուսի համագործակցությունը կատարյալ էր և ազդեցությունը համապարփակ Եվրոպայի վրա:

Բավարիայի կառավարությունն անմիջապես հակազդում է, գրավում Կարգի գաղտնի փաստաթղթերը և պատճեններն ուղարկում Եվրոպայի ղեկավարներին: Այն ղեկավարները, որոնք Կարգի ազդեցության տակ էին գտնվում, անտեսում են փաստաթղթերը. մտացալն այնքան անիրական ու անհավատալի են գտնում որանք, որ կարեւորություն չեն տալիս:

Չհավատալը ազատ մասունների օգտին էր: Համեստ մարդիկ չեն կարող հավատալ, թե կարող է լինել անհատներ, ովքեր փորձեն հակակշիռ հաստատել աշխարհի վրա՝ սատանայի օգտին: Կարծեք ջենսբուրգյան ֆիլմի կյոթ է:

Անհավատայի թվագող, սատանայական «Աշխարհի նոր կարգ»-ը իրականություն է:

Բավարիայի կառավարությունը դատապարտում է Կարգի անդամների մի մասին: Վասիաուպտը պատսպարվում է մի իշխանի մոտ ու մնում նրա մոտ մինչև իր կյանքի վերջը 1811 թվականին:

Մինչ այդ, Լուսավորչայներից շատերը պատսպարվել էին տարբեր երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ-ում: Մինչև 1776 թ., ԱՄՆ-ի նվազագույնը երեք նախագահներ ժողովրդին զգուշացրել էին երկրում Լուսավորչայների գործունեությունից: Ջորջ Վաշինգտոնն զգուշացրել է մի քանի անգամ: Երանի ժամանակին լսեինք Վաշինգտոնի ասածները:

Թեև 1780-ականներին Լուսավորչայների ղեկավարությունը դադարում է գոյություն ունենալ, բայց «Աշխարհի նոր կարգ»-ը

կառուցելու գործը շարունակում է «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակը:

Ազատ մասունությունը իր անվամբ երբեք չի աշխատել: Որպեսզի հաջողացնի իր ծրագիրները, նա հիմնում է տարբեր կազմակերպություններ - ինչպես Լուսավորչայները - որոնց տալիս է հստակ ուղղություն: Այսպես, եթե նրանց գործունեությունը չհաջողվի՝ ազատ մասունությունն անվաս կմնա:

Լուսավորչայ ազատ մասունների առաջին գլխավոր «հաջողությունը» Ֆրանսիական մեծ հեղափոխությունն էր ժազգրին միաբանության և Լապոլեոն Բոնապարտի միջոցով: Լուսավորչայ ազատ մասունությունը օգտվել է Վոլտերից, Ռոբեսպիերից, Դանտոնից, Մարատից, որոնք մասուն էին: Ժազգրին միաբանության նպատակներն ու կապերը բացահայտվեցին երբ նրանք Վասիաուպտին «Մեծ հայրենասեր» կոչեցին:

ԱՄՆ-ի անկախության հայտարարությունից անմիջապես հետո, եվրոպական ուժերն սկսեցին միջոցներ որոնել Ամերիկայի երիտասարդ բանկային համակարգի վրա հակակշիռ հաստատելու համար:

Լուսավորչայ ազատ մասունները մասնակիորեն պատասխանատու են 19-րդ դարի կեսերին ԱՄՆ-ի քաղաքացիական կռիվների բռնկման մեջ: Չարլստոնում (Հարավային Կարոլինա) - որտեղ սկսվեց անջատողական շարժումը - էր գտնվում Շոտլանդական ծեսի ազատ մասունների կենտրոնատեղի, որ հետագային փոխադրվեց մայրաքաղաք Վաշինգտոն, որտեղ էլ մնում է մինչև այսօր:

Լախագահ Աբրահամ Լինկոլնը զգուշացնում էր ամերիկացի ժողովրդին՝ ասելով. «Փողը կուտակվելու է մի քանի հոգու մոտ և հանրապետությունը քանդվելու է»:

Վերջապես 1913-ին հաջողությամբ են պսակվում Լուսավորչայ ազատ մասունների ճիգերը. հիմնվում է Դաշնային պահեստի համակարգը, որով Եվրոպայի Լուսավորչայներին շնորհվում է մնալուն դեր այս երկրի (*ԱՄՆ - խոսք*) տնտեսության մեջ, հեարավորություն ընձեռնելով, որ հասնեն իրենց նպատակներին:

Այդ նպատակներից էր Արտաքին հարաբերությունների խորհրդի հիմնադրումը, որի կազմավորման մեջ մեծ դեր ունի էդուարդ Մանդել Նաուզը: Հաուզի հայրը, որ Ռոստիլոյի գործակա-տարն էր, քաղաքացիական պատերազմի ժամանակ մեծ հարստու-թյուն է դիզում՝ հարավին հայթայթելով կարեւոր ապրանքներ Ֆրանսիայից և Անգլիայից:

Գեղապետ Նաուզը (այդպես էին կրան կոչում) Ռոստիլո-Վորբուրգ-Ռոքֆելլեր խմբի գործակատարն էր Մալիտակ տան մեջ: Հաուզը նախագահ Վիլսոնի ամենից վստահելի խորհրդակակնն էր: Հաուզը այն էր ինչ հետազային շենրի Քիսիլսենը եղավ Ռիչարդ Ախսոնի համար: Հաուզի հաջողությունները շատ են: Նա համո-զում է Վուտրո Վիլսոնին, որ Դաշնային պահեստի մասին որոշու-մը վերածի օրենքի: Հետազային հասկանալով, թե ինչպիսի մեծ սխալ է գործել, Վիլսոնն ասում է. «Ես անգիտակցաբար կործանեցի իմ երկիրը»:

Վիլսոնը շուտով ԱՄՆ-ին մխրճում է Առաջին համաշխար-հային պատերազմի մեջ (1917 թ. ապրիլ): 1918-ին, պատերազմի ա-վարտից հետո, նա աշխուժորեն աշխատում է կազմակերպել Ազ-գերի լիգան: Ռոքֆելլեր և ընկերների փողով ֆինանսավորված լի-գան ծառայելու էր որպես քաղաքական առաջին քայլ դեպի Աշ-խարհի կառավարություն:

Այնուամենայնիվ, հակառակ Վիլսոնի ջանքերի, ԱՄՆ-ը չի մտնում Ազգերի լիգա: Ամերիկացի ժողովուրդը ճնշում է Կոնգրեսի վրա որպեսզի դեպի համաշխարհայնացում տանող շարժումը մեր-ծի:

Ազգերի լիգային ԱՄՆ-ի ցանանակցելը գորավոր հարված էր միջազգայնականներին: Աշխարհի կառավարություն չի կարող գո-յանալ առանց աշխարհի առաջին ուժին: Բայց այս պարտությունը ժամանակավոր էր: Համաշխարհայնականները հասկանում են, որ պետք չէ անտեսել ամերիկացի ժողովուրդի կամ Կոնգրեսի ուժը: Որ-պեսզի նման դեպք չկրկնվի, կրանք կազմակերպում են Արտաքին հարաբերությունների խորհուրդը (ԱՀԽ):

1921 թ. հուլիսի 29-ին կազմվում է Արտաքին հարաբերու-թյունների խորհուրդը:

Կազմակերպության հիմնադրամը գոյացնում են Ժ. Փ. Մոր-գանը, Ջոն Դ. Ռոքֆելլերը և ընկերները, այն նույն անձերը, ովքեր հիմնել էին Դաշնային պահեստը:

Արտաքին հարաբերությունների խորհրդի տնօրեններ են եղել Ադլայ Սթիվենսոնը, Մայրոս Վասերը, Ջրիգնիտ Բեթգինսկին, Ջորջ Բուշ ավագը, Շենրի Քիսիլսենը, Ռիչարդ Չեյնին և ուրիշներ:

Արտաքին հարաբերությունների խորհրդի ամենից ազդե-ցիկ դեմքը եղել է Դեյվիդ Ռոքֆելլերը՝ Ջոն Դ. Ռոքֆելլերի թոռնիկը: Նա կազմակերպությունը տնօրինել է երեսուվեց տարի, ապա նա-խագահել կրան 1970-1985 թթ., որից հետո մինչև այսօր մտում է կազմակերպության պատվով նախագահը, մինեւույն ժամանակ լի-նելով «Չեյզ Մենեթթըն»-ի նախագահը:

Ռոքֆելլերները շարունակում են տնօրինել Արտաքին հա-րաբերությունների խորհուրդը: Այսօր նոր սերունդը շարունակում է ավանդությունը:

Խորհուրդն այսօր ունի 670 անդամ, որոնք ԱՄՆ-ի ամենից երեւելի մարդիկն են կառավարության, ատենադի, կրթության, բա-նակի, լրատվության և բանկերի բարձր պաշտոնյաներ: Կենտրո-նատեղին գտնվում է Նյու Յորքում, ունի 38 մասնաճյուղեր ԱՄՆ-ի գլխավոր քաղաքներում:

«Լրանց նպատակն է ցնցել ԱՄՆ-ի անկախությունն ու ազ-գային ազատությունը», - ասում է կազմակերպությանը 16 տարի անդամակցած ադմիրալ Չեստեր Ուորդը:

Հետաքրքրականն այն է, որ շատ քչեր գիտեն այս կազմա-կերպության մասին, որի նպատակն է ԱՄՆ-ի տահմանադրական հանրապետությունը վերածել ստրուկ երկրի՝ «Մեկ-աշխարհ» բո-նատիրության մեջ:

ԱՀԽ-ի անդամ Ջեյմս Վորբուրգը 1950 թ. փետրվարին հաս-տատում է. «Մենք, ուզեք կամ ոչ, ձեր հավանությամբ կամ նվաճե-լով, ունենալու ենք «Մեկ-աշխարհ կառավարություն» »:

ԱՀՆ-ի լրաբերը «Ֆորեյն աֆֆերզ» հանդեսը 1974 թ. ապրիլի համարում գրում է. «Աշխարհի նոր կարգ»-ը կառուցվելու է ներքեվից դեպի վերև և ոչ թե վերեվից դեպի ներքև», տարբեր տեսողում՝ «Դա միջազգային կարգ է, որն ընդգրկելու է նաև կոմունիստական կոչված երկրներին»:

«Աշխարհի նոր կարգ» կամ «Միջազգային նոր կարգ» արտահայտությունն առաջին անգամ բացահայտորեն գործածվել է 1990 թ. աշխանք: Այսօր դա գործածվում է ամեն րոպե և գործածվելու է այնքան, որ մարդկության ակաեծները լցվեն ու ոչ ոք գարմանա երբ այդ օրը գա:

«Աշխարհի նոր կարգ» դարձվածքը գործածել էին ազատ մատենները Վայսհաուպտի ժամանակներից: Դա նշանակում էր Աշխարհի կառավարությունը, որը երբ հաստատվի, աշխարհում իշխելու է Հակաքրիստոսը:

Լուսավորյալ ազատ մատենների գաղտնի խորհրդանշաններից մին՝ երկմաս բուրգը, Ֆրանկլին Ռուզվելտի օրերին տպագրվել է դոլարի վրա (Ռուզվելտը 33 աստիճանի մասն էր և գործակից ԱՀՆ-ի): Բուրգի վերելում՝ անջատված մասի վրա նկարվել է Օգիրիսի կամ Բաաի (*Բաադ, Բեյ, Ներբոլթ՝ Չարի աստվածը - խոսք*) ամենատես աչքը: Բուրգի տակ լատիներեն գրված է «Novus Ordo Seclorum», որ նշանակում է «Ժամանակների նոր կարգ» կամ «Աշխարհի նոր կարգ»: Այս մատենական նշանը 1782-ին դրոշմվել էր ԱՄՆ-ի պաշտոնական կնիքի վրա: Այս նշանը գաղտնի չէր, բայց 150 տարի մնացել է անհայտ, մինչև որ տպագրվեց մեկ դուլանոցի Դաշնային պահեստի թողարկված փողի վրա:

Երբ այս խորհրդանշանը պատկերվում էր՝ «Աշխարհի նոր կարգ»-ը սկզբնական գաղափար էր. դա է նշանակում բուրգի վերի մասի անջատումը: Երբ «Աշխարհի նոր կարգ»-ը գործադրվի և մեկ կառավարություն լինի, բուրգի երկու մասերը միանալու են: Մասունական եվիրապետությունը և այլ գաղտնի ընկերությունների կարգը նման է բուրգի:

Երբ շարունակեցի պրպտումներս, պարզվեց որ ԱՀՆ-ը մի շարք նմանություններ ունի Լուսավորյալների հետ:

ԱՀՆ-ի սկզբունքն է գաղտնի պահել անդամների անունները. այդ պատճառով, ժողովուրդը շատ քիչ բան գիտի այս կազմակերպության մասին:

Այս գաղտնիության նպատակն է ազդել ԱՄՆ-ի քաղաքականության վրա: ԱՀՆ-ի անդամները նշանակվում են, առայժմ որպես խորհրդատու, մինչև որ լրիվ հակակշռի տակ առնեն կառավարությանը: Այս մարտավարությունը գործադրվում է նաև կրթության, լրատվության, ռազմական, բանկային բնագավառներում, մինչև զա ժամանակն ու հակակշռի տակ առնեն բոլորին:

Գործելակերպը պարզ է. ազդել հասարակության մտածելակերպի վրա մինչև մի օր արթնանալը և տեսնելը, որ Մեկ աշխարհի կառավարությունը իրականություն է, դա ուզենք կամ ոչ, ու փոխանցումը եղել է բնական:

Այս բոլորը կարծեք սուտ լինեն: Մակայն, էթե թափանցեց դրանց գաղտնիքների մեջ, պարզ կլինի, որ համաշխարհայնականները որքան գործ են կատարել:

ԱՀՆ-ն իր ծրագիրները հաջողացնում է մեծ ընկերությունների օգնությամբ: ԱՀՆ-ն 1920-1930-ականներին իր հակակշռն էր հաստատել Դեմոկրատական կուսակցության վրա, իսկ 1940-ականներին ոտք դրեց Հանրապետական կուսակցության ներսում: Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Ֆրանկլին Ռուզվելտի օգնությամբ ԱՀՆ-ը հակակշռի է հաստատում պետության և, հետևաբար, մեր արտաքին քաղաքականության վրա:

ՄԱԿ-ԿՈՒՎԱՏ ԱԳՁԵՐԻ ԿԱՅՄԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին ԱՄՆ-ը միացավ Միավորված ազգերի կազմակերպությանը (ՄԱԿ):

1945-ին ՄԱԿ-ի իմասարոման հանդիսությանը ԱՄՆ-ի պատվիրակության կազմում ընդգրկվել էին ԱՀՆ-ի 47 անդամներ:

Որպեսզի ԱՄՆ-ը չիբաժարվեր անդամակցել ՄԱԿ-ին, ինչպես եղել էր Ազգերի լիգայի պարագային, կենտրոնը հիմնում են ամերիկյան հողի վրա: Հողը, որի վրա հետագային կառուցվելու էր ՄԱԿ-ի շենքը, նվիրում է Ջոն Դ. Ռոքֆելլեր կրտսերը:

ԱՄՆ-ը անդամ դարձնելով ՄԱԿ-ին, ԱՆԽ-ը հաջողացնում է իր առաջին նպատակը: Օգտվելով կրթության և լրատվության վրա իր ունեցած ազդեցությունից, ԱՆԽ-ն սկսում է ամերիկացի ժողովրդին ՄԱԿ-ը ներկայացնել դրական ձևով:

ՄԱԿ-ի ղեկավարները կատարել են մի շարք հանցանքներ: Այլեր շիսը խորհրդային լրտես էր, Ու Տանը գովել է Լենինին որպես ազգերի խաղաղ գոյակցության ջատագովի, իսկ Քուրթ Վալդ-հայմը Երկրորդ համաշխարհային պատերազմին եղել է նացի բա-նակային: Հակատակ այս բոլորի, ամերիկացի ժողովուրդը ՄԱԿ-ին ընդունում է որպես «չավ կազմակերպություն»: Ջանգվածային լրատվամիջոցները ինչն էր կարող են իրականացնել:

ԱՆԽ-ն ոչ միայն հովանավորում է ՄԱԿ-ին, այլև ստեղծողն է մի շարք այլ խմբերի, ինչպես բիլդերբերգերները, Հռոմի ա-կումբը և Եռակողմ հանձնաժողովը: սրանցից յուրաքանչյուրն ու-նի հատուկ պաշտոն՝ կերտելու «Աշխարհի նոր կարգ»-ը:

Հաջողացնելու համար Աշխարհի կառավարությունը, նվի-րապետությունը երկրագունդը բաժանել է վարչական շրջանների: սա համապատասխանում է ՄԱԿ-ի հռչակագրին, որը քաջալերում է Աշխարհի կառավարության հաստատումը շրջանների հիմքի վրա [գլուխ 8, կետ 52 (2-3) և 53 (1)]: Ռազմավարությունը պարզ է. միացնել երկրները՝ կազմելով շրջաններ: Սա նշանակում է Աշ-խարհի կառավարության կազմության հեշտացում և ազգերի ինք-նիշխանության վերջ:

Այնուամենայնիվ, շուտով պարզվում է, որ քաղաքական տեսակետից անհետք է Աշխարհի կառավարություն կազմել: Հե-տևաբար, որոշեցին աշխարհը բաժանել տնտեսական տեսակե-տից, կազմելով շրջանային առևտրական միություններ:

«Բիլդերբերգեր» խմբի պարտականությունն է Եվրոպան տնտեսապես միացնել:

ԲԻԼԴԵՐԲԵՐԳԵՐՆԵՐԸ (Bilderbergers)

1954 թ.-ին «Բիլդերբերգեր» հյուրանոցում (Հոլանդիա) հա-վաքվում են ՆԱՏՕ-ի անդամ երկրների հայրուր ընտրյալ անդամ-

ներ և հիմնում են այս կազմակերպությունը, որ շարկապված է ԱՆԽ-ի նետ: Այս կազմակերպությանը ֆինանսավորում են մի շարք «Մեկ-աշխարհ» հաստատություններ, ինչպես Ռոքֆելլեր և Ֆորդ ընկերությունները: Նրա բացահայտ նպատակն է Եվրոպան մեկ տարածաշրջանի վերածել: Գաղափարը հղացել է «Ֆիատո»-ի ղեկա-վար Ջիովաննի Ագնելլին, որն ասել է. «Մեր նպատակն է Եվրոպան միավորել: Այնտեղ ուր ձախողվեցին քաղաքագետները, հույսով ենք որ մենք պիտի հաջողիք»:

Եվրոպական հասարակաց շուկան (որ նաև քաղաքական միություն է) «Բիլդերբերգեր» խմբի արտադրությունն է:

Բիլդերբերգերների և քույր կազմակերպությունների - ինչպես ԱՆԽ-ի և ՄԱԿ-ի - բացարձակ նպատակն է հաստատել Աշխարհի կառավարությունը: Բիլդերբերգերների փիլիսոփայու-թյունը հստակորեն բացատրել է խմբի առաջին նախագահ, հոլան-դիացի իշխան Բերնարը, որի ընտանիքը տերն է «Շելլ» նավթային ընկերության: Նա ասել է. «Մեր մեծագույն դժվարությունն է հաս-կացնել հասարակ ժողովրդին, որ իր ազգայնականությունից մի մաս կորցնելով շահելու է գերազգայնականություն... Սա է դժբախ-տությունը»:

Ամերիկյան նշանավոր բիլդերբերգերներ են Դեյվիդ և Նեյ-սոն Ռոքֆելլերները, Հեների Քիսինգերը, Ջրիգինի Բժձեհիսկին, Մայրոս Վանսը, Ռոբերտ Մակնամարան, Դոնալդ Ռամսֆելդը, Նախկին նախագահ Ջերալդ Ֆորդը և այլն: Ամերիկացի բիլդերբեր-գերները ԱՆԽ-ի ներկա կամ նախկին խորհրդականներ են, եվրո-պական անդամները վարչապետներ, արտաքին գործերի նախա-րարներ և տնտեսության ղեկավարներ են, ինչպես Հելմուտ Շմիդ-տը, բարոն Էդմոնդ Ռուչիլդը, Վալերի Ժիսկար դ'Էստենը, հիշելու համար մի քանիսին:

ՀՌՈՄԻ ԱԿՈՒՄԲԸ (Club of Rome)

Սա մի ուրիշ կազմակերպություն է, որի անդամների մեծ տոկոսը ԱՆԽ-ի անդամներ են: Հստ նրանց՝ այս ակումբը անպաշ-տոն կազմակերպություն է, անդամները հարյուրի չեն հասնում,

որոնք... «գիտնականներ, դասախոսներ, տնտեսագետներ, բանասերներ, արդյունաբերողներ և ազգային ու միջազգային քաղաքական ծառայության պաշտոնյաներ են»... ներառյալ Ռոբինլլեր ընտանիքի անդամները: Հռոմի ակումբին մաս են կազմում ԱՆՆ-ի 25 անդամներ:

1968 թ. ապրիլին տասը երկրների ղեկավարներ հավաքվում են Հռոմում: Հանդիպումից հետո հայտարարում են, թե աշխարհի խաղաղության ու զարգացման լավ լուծումներ ունեն: Ամեն ղեկավար, կրանց լուծումներն ունեն մի ուղղություն՝ ազգային անկախությունների հաշվին հիմնել Աշխարհի կառավարությունը:

Հռոմի ակումբը մեղադրվում է նաև աշխարհը շրջանների բաժանելու, ապա վերամիացնելու մեջ: Մեկ-աշխարհի կառավարության ծրագրավորումը կատարում է Հռոմի ակումբը:

Ակումբի ուսումնասիրություններն ու հանձնարարականները գաղտնի տեղեկագիրներով ուղարկվում են հատուկ մարդկանց գործադրվելու համար: 1973 թ. սեպտեմբերի 17-ին Ակումբը հրատարակում է «Համաշխարհայնացած համակարգի շրջանային ընդունված ձևը» կոչվող տեղեկագիրը, որը պատրաստվել է Մի-հայլա Մեսարոփիչը և Էդուարդ Փեսթելը: Տեղեկագիրը հայտնում է, թե Ակումբը աշխարհը բաժանել է տասը քաղաքական-տնտեսական շրջանների, որոնք կոչվում են «թագավորություններ»:

1974-ին Մասարոփիչը և Փեսթելը հրատարակում են իրենց ուսումնասիրությունը, որ կոչվում է «Մարդկությունը շրջադարձի վրա»: Գրքի 161-164-րդ էջերում գծագրվել են այդ տասը շրջանները, բայց այս անգամ նրանք ընջել էին «թագավորություն» բառը: Պարզ է, նրանք չէին ուզում, որ մարդկությունն իմանա Ակումբի քաղաքական փառասիրության մասին:

Մտահոգիչն այն է, որ Հռոմի ակումբը ընտրել է հոգեւոր ուղղություն, խորհրդապաշտ ոգեկանություն: «Մարդկությունը շրջադարձի վրա» գրքի 151-152-րդ էջերում շատ հստակ բացատրված է համաստվածությունը - «Նոր դար»-ականների հավատքը - այսինքն՝ հաղորդակցությունը բնության և Գերազույնին հետ, գործածելով «ՆՕՕՍՖԵՐ» (NOOSFERE) եզրը, որը մատնանշում է մարդկային ցեղի հավաքական խելացությունը: Այս արտահայտու-

թյունը բառարանում չէր գտնի: Գործածելով «ՆՕՕՍՖԵՐ»-ը, սրանք ընդունում են փիլիսոփայությունը ֆրանսիացի ցիգվիտ կղերական (մասնացած) Պիեռ Թեյար դը Շարդենի, որի տարօրինակ գաղափարներն ու գրությունները մեծ ազդեցություն են գործել «Նոր դար» շարժման վրա:

Իրականության մեջ՝ Շարդենն է ուղղություն տալիս նրանց: Գրքի եզրակացության մեջ նշվում է. «Փիլիսոփաները, հին ժամանակներից, գոյության միությունը և բնության տարրերի կապակցությունն են շեշտում, մարդ էլ մտածում: Այնուամենայնիվ, նրանց սովորեցրածը քիչ է անդրադարձել քաղաքական և սոցիալական հարցերի վրա: Հռոմի ակումբը և նրա մասնաճյուղերը ուզում են այս բոլորը փոխել»:

Հռոմի ակումբի «Նոր դար» շարժման անդամների շարքին են ԱՄՆ-ի չորս կոնգրեսականներ, ՄԱԿ-ի պատասխանատուներ և մարդիկ, որոնք կապ ունեն «Կառնեգի» ու «Ռոբինլլեր» հաստատությունների հետ:

Այս մարդիկ են «Աշխարհի նոր կարգ»-ը հաստատողները: Չսխալվե՞ք, նրանք քաղաքական նպատակներ են հետապնդում:

ԵՆԱԿՈՂՄ ԶՆՁՆԱԺՈՂՈՎԸ

1950-ական և 1960-ական թվականներին, Դանսային պահեստի համակարգի դեմ պայքարող նույն կոնգրեսական ղեկավարներն սկսեցին բացահայտել ԱՆՆ-ին: Նրանք իրենց կողքին ունեին հարցին էությունը հասկացող քաղաքացիների օգնությունը: Այս ճիգերի որպես արդյունք 1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին կատարված կոնգրեսական ստուգումների իրականությունը, հակառակ լրատվական միջոցների լուրջության, սկսում է հասնել ամերիկացի ժողովրդին: Առաջին անգամ ամերիկացիների մեծամասնությունն իմանում է, թե ԱՄՆ-ի արդյունաբերության մեծամասնությունը ղեկավարում են ընդամենը մի քանի հաստատություններ:

Համաշխարհայնացումը ծրագրավորողներն անմիջապես հասկանում են, որ պետք է նոր միջոց հնարել անցյալ 50 տարիների

հաջողությունը պահպանելու համար: Նրանք ամերիկյան ու եվրոպական զուսարներ են հուսեցնում ճապոնացի արդյունաբերողների և արաբ ջոջերի գրպանները, որպեսզի վերջիններս արևմտյան ընկերություններ և հողեր գնեն: Այսպես, եթե ամերիկացի ժողովուրդը պիտի այպանի մեկին իր ղժվար ժամանակների համար, դա ճապոնացիներն ու արաբներն են և ոչ թե Ռոբֆեյլերներն ու նրանց դաշնակիցները, մինչդեռ, իրականության մեջ, հենց նրա նր են պատասխանատուները:

Թեև արաբ ղեկավարները որեւէ ժամանակ իրար հետ համերաշխ չեն եղել, հանկարծ մի օրվա մեջ միանում են և 1973-ին աշխարհը ենթարկում են նավթի ճգնաժամի: Նրանց հասարակ հայտարարը իսլամական կրոնն էր: Բայց այդ կրոնը անցյալին նրանց միավորմանը երբեք չէր օգնել: Նույնիսկ այսօր համերաշխ չեն: Մյուս միակ հասարակ հայտարարը նավթն էր, որը պեղում, արտահանում և ծախում են ամերիկյան ու եվրոպական ընկերությունները: Արաբ ղեկավարների միակ գործն էր նստել ու դիտել, թե ինչպես իրենց լուռ գործակիցները հարստացնում են իրենց: Իրականությունն այն էր և է, որ արաբ իշխանները իրենց հարստության համար պարտական են Ռոբֆեյլերներին և նրանց դաշնակիցներին:

Այս հարստության մի մասը անմիջապես վերադարձվեց ամերիկյան ու եվրոպական գերբանկեր, ինչպես «Չեյզ Մեմեբերն»-ը, ուր մի քանի շեյխեր փոխնախագահ նշանակվեցին: Մնացալ փողի մեծ մասը վերաներդրվեց ամերիկյան արդյունաբերության և անշարժ կալվածների մեջ:

ՕՓԵՔ-ի ստեղծած նավթի ճգնաժամը ճապոնիային հսկա դարձրեց: Ճապոնական փոքր ավտոմեքենաները պատրաստ էին: Ամերիկացի սպառողները սկսեցին գնել այս էժան և խնայողական մեքենաները: Ճապոնական արդյունաբերությունը չէր հասցնում բավարարել պահանջը: Այս բոլորը կատարվում էին ամերիկյան ազատ-վաճառականության օրենքի ծիրում: Միե՛նույն ժամանակ, ԱՄՆ-ի ավտոմեքենաշինական արդյունաբերությունն ընկրկեց, որից չի կարողացել վերականգնվել մինչև այսօր:

Ճապոնացի արդյունաբերողներն իրենց փողը ներդնում են տարբեր արտադրությունների մեջ և շուտով Ամերիկյան հեղեղում էժան էլեկտրոնային և այլ ապրանքներով: Այս շահույթի մեծ մասը, ինչպես արաբներն էին արել, վերաներդրվեց ամերիկյան և ամբողջ աշխարհի անշարժ կալվածների գնումների մեջ:

Այժմ պարզ է բոլորին, որ նավթի ճգնաժամը օգնում է «Աշխարհի նոր կարգ»-ի արագնթացին, այնքան արագ, որ նույնիսկ իրենք ճգնաժամն ստեղծողները չէին հուսացել:

Արաբ և ճապոնացի գործընկերությունը համաշխարհայնականների առիթ է տալիս, որ առանց որեւէ մտատուրի առաջ մղեն իրենց օրակարգը: Աշխարհի հարստության վերաբաշխումը պիտի որդեգրի նոր ձև, որն է «աշխարհի տնտեսական անկախություն»-ը: Մա մի միջոց է, որ պիտի փաստի, թե Աշխարհի կառավարությունն անպայման պետք է ստեղծի:

Այս նոր մտածումները գործադրելու համար, 1973-ին, նավթի ճգնաժամից և Ճապոնիայի հեղեղից առաջ, Դեյվիդ Ռոբֆեյլերը կազմում է Եռակողմ հանձնաժողովը:

Եռակողմ հանձնաժողովի նպատակն է պատրաստել Աշխարհի կառավարությունը: Եռակողմ հանձնաժողովն էլ նախընտրել է տարածաշրջանային ձևը, ինչպես իր քույր կազմակերպությունները Բիլդերբեքերները և շումի սկոմբերը: Ձրիզինե Բժե-զինսկին պատրաստում է Հանձնաժողովի սկզբունքները և նա էլ ժողովի առաջին տնօրեն է ընտրվում (1973-1976):

Նևտազային Ջիմի Կարտերի Ազգային անվտանգության խորհրդատու նշանակված Բժեզինսկին գրել է մի քանի գրքեր, որտեղ բացատրում է իր մտածումները: 1970-ին գրված «Երկու աշխարհների միջև» գրքում նա պահանջում է հիմնել միջազգային նոր փող և ընդունել հարկերի համաշխարհային նոր համակարգ ու տալիս է իր տեսակետը Կարլ Մարքսի փիլիսոփայության մասին:

Եռակի հանձնաժողովը Արտաքին հարաբերությունների խորհրդի կրկնօրինակն է, ղեկավարվում է նույն անձերի կողմից, ունի նույն փիլիսոփայությունը և ֆինանսավորվում է նույն աղբյուրներից, ինչպես «Ֆորդ հաստատություն»-ը:

Ինչպես ԱՀԽ-ի, նույնպես եւ ԵՀ-ի կենտրոնը գտնվում է Ելու Յորք քաղաքում: Մակայն, ի տարբերություն ԱՀԽ-ի, որի անդամները միայն ԱՄՆ-ից են, ԵՀ-ի ղեկավարությունը երեք տնտեսապես զերհսկա տարածաշրջաններից է կազմված -Հյուսիսային Ամերիկա, Արեւմտյան Եվրոպա եւ Ճապոնիա - եւ ճիշտ այդպես «եռակողմ» [արժե նշել, որ այս տարածքները առաջին երեք շրջաններն են (թագավորությունները), որոնք ներկայացվել են Հոուի ակումբի պատրաստած «Աշխարհի նոր կարգ»-ի մեջ]:

Մի տարբերությունն էս. ԵՀ-ը շատ ավելի փոքր է, քան ԱՀԽ-ը, որն ունի 2500 անդամ: ԵՀ-ը ունի միայն 325 անդամ, որոնցից 98-ը Հյուսիսային Ամերիկայից են, 146-ը Եվրոպայից, իսկ 81-ը Ճապոնիայից: Անձ զույն հաշվով ճապոնիան ունի ամենաշատ թիվը, եւ ճապոնական գրեթե բոլոր մեծ ընկերությունները ներկայացված են:

Հանձնաժողովի Հյուսիս Ամերիկայի նախագահը հենց նույն Դեյվիդ Ռոբինսոնն է, Եվրոպայի նախագահն է Ջորջ Քերթիս, իսկ Ճապոնիայինը Իսամու Յամոշիտան: Արժե նշել, որ եթե ոչ բոլորը, բայց գոնե Ֆրանսիայի անդամները պատկանում են ազատ մասունակալ «Մեծ Արեւելք» օրյակին:

1970-ականների վերջին եւ 1980-ականների սկզբին ղեկավար էր անտեսել ԵՀ-ի ազդեցությունը մեր (ԱՄՆ-ի - իմ/բ) կառավարության վրա: Հետեւաբար, այս կազմակերպությունների կողմից մտածող խորհրդականների թիվն սկսել էր շատանալ: 1981 թ. փետրվարի 4-ին պատգամավոր Լարրի ՄակԴոնալդը հարցը դնում է Կոնգրեսի առաջ եւ պահանջում, որ ամբողջական ստուգումի ենթարկվի այդ կազմակերպությունների ազդեցությունը ԱՄՆ-ի քաղաքականության վրա:

Հակառակ գանգվածային լրատվամիջոցների լուրջության եւ Կոնգրեսի անտարբերության, ՄակԴոնալդը մերժում է հանձնվել: Նա իր կարելին է անում բացառապես դավը մինչեւ կորեական ինքնաթիռի ջախջախման հետեւանքով իր մահը 1983-ին:

007 «արկածի» հակազդեցությունը հասնում է պետության: Շատեր, գայրացած ՄակԴոնալդի մահից եւ գանգվածային լրատվամիջոցների լուրջությունից - որոնք չէին ուզում գրել դավադրու-

թյան եւ վարագույրի ետին ընթացող պայքարի մասին - Կոնգրեսին ստիպում են հակազդել:

Առաջին նահանգը լինում է Ինդիանան, որն ընդունում է թիվ 773 որոշումը:

1985 թ. ապրիլի 3-ին Ինդիանայի Ներկայացուցիչների տունը թիվ 19 որոշումով պահանջում է ԵՀ-ի եւ ԱՀԽ-ի ամբողջական ստուգումը: Մակայն, ինչպես մյուս խորհրդարանական ստուգումները, սա էլ մնում է անպատասխան, մեծ մասամբ Կոնգրեսի վրա ժողովրդի ճնշման թուլության պատճառով, որն արդյունք է ԼԲԱ-ՏԿԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԼՈՌՈՒԹՅԱՆ:

ՄակԴոնալդի մահը բացալերում է շատերին շարունակելու պայքարը: ՄակԴոնալդը գլխավորն էր, բայց միակը չէր, որ ուզում էր բացառապես Աշխարհի կառավարություն ստեղծելու դավը: Կորեական ինքնաթիռի «արկածից» հետո շատեր ընկրկեցին, ուրիշներ ավելի աշխույժ սկսեցին պայքարել, ինչպես սենատոր Ջեյմս Հեյզը եւ այլն:

ՔԱՅԻ ԵՐ ԴԵՊԻ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրման թվ.	Կազմակերպություն	Կենտրոնատեղին
1913	Դաշնային պահեստի համակարգ	Վաշինգտոն
1920	Ազգերի լիգա	Փենն
1920-1921	Միջազգային հարցերի արքայական հաստատություն	Լոնդոն
1921	Արտաքին հարաբերությունների խորհուրդ	Ելու Յորք
	Մասնաճյուղեր	
	Խաղաղասիրական հարաբերությունների հաստատություն	Ելու Յորք
	Արտաքին քաղաքականության ուսումնասիրությունների կենտրոն	Փարիզ
	Արտաքին քաղաքականության հաստատություն	Համբուրգ
1945	Միավորված ազգերի կազմակերպություն	Ելու Յորք
1954	«Բիլդերբերգեր»-ի խումբ	Օսթրոբրոք, Հոլանդիա
1968	Հոուի ակումբ	Հոուս
1973	Շոակոլով հանձնաժողով	Ելու Յորք

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Արտաքին հարաբերությունների խորհրդի եւ Եռակողմ հանձնախմբի նամակագրական ցանկի վրա լինելով, տարիներ շարունակ ստացա երանց տարեկան տեղեկագիրներն ու գրականությունը: Պատրաստ էի ուսումնասիրելու, թե այս հաստատությունները ո՞րքան հակակշիռ ունեն ամերիկյան քաղաքականության վրա: Գիտեի, թե ուժղ են, բայց այսքա ն:

Վերջապես հասկացա, թե ամերիկացիների մեծամասնությունն ապրում է «կեղծ իրականության» մեջ: Մենք ժողովուրդը կարծում է, թե քանի իրավունք ունենք քվեարկելու եւ ընտրելու, իշխում ենք երկրում: Իրականությունն այդպես չէ:

Ֆրանկլին Դ. Ռուզվելտի ժամանակներից ԱՆԽ-ի ազդեցությունը կառավարության վրա շարունակում է աճել: Նիքսոնի վարչակարգի գործադիր իշխանության մեջ գործում էին ԱՆԽ-ի 115 անդամներ: Կարտերի ժամանակ մի երկվեցյակ Եռակողմականներ նշանակվեցին վարչակարգի բարձր պաշտոններում: Կարտերն ինքը անդամ էր: Փոխնախագահ Ռոյլթեր Մոնդելլը անդամ էր երկուքին էլ՝ ԱՆԽ-ին եւ ԵՆ-ին: Երեւելի անդամներից էին Ազգային անվտանգության խորհրդական Ջրիգինի Բժեգինսկին (ԱՆԽ եւ ԵՆ), պետական քարտուղար Մայրոս Վանսը, (ԱՆԽ եւ ԵՆ), պաշտպանության նախարար Հարոլդ Բրաունը (ԱՆԽ եւ ԵՆ), Կենտրոնական հետախուզական վարչության տնօրէն Ստանֆիլդ Տերները (ԱՆԽ):

Ընդունված կարգ է, որ երբ Եռակողմականը պետական պաշտոն է ստանձնում, հրաժարվում է Հանձնաժողովից: Նույնը ձիշտ է նաեւ ԱՆԽ-ի անդամների համար: Բայց հրաժարական երբեք չի նշանակում, որ նրանք այդ նույն կազմակերպությունների ազդեցության տակ չեն:

Ավանդությունը շարունակվեց Ռեյգանի տարիներին: Թեւ Ռեյգանը պայքարում էր այս երկու կազմակերպությունների դեմ, բայց ընտրվելուց հետո ԱՆԽ-ի եւ ԵՆ-ի 75 անդամների նշանակեց կարեւոր պաշտոններին: Բուշի (*հեղինակը նկատի ունի ներկայիս*

նախագահի հորը՝ Ջորջ Բուշ ավագին – խմբ.) վարչակարգը կարեց բոլոր մրցակիշները, ԱՆԽ-ի եւ ԵՆ-ի ավելի քան 350 անդամներ աշխատում էին գործադիր իշխանության մեջ, ինչպես հենց ինքը նախագահ Ջորջ Բուշը (ԱՆԽ եւ ԵՆ), պաշտպանության նախարար Ռիչարդ Չեյնիս (ԱՆԽ) (2000 թ.-ից՝ ԱՄՆ փոխնախագահ – խմբ.), սպայակույտի պետ Քոլին Փատելը (ԱՆԽ) (Ջորջ Բուշ կրտսերի նախագահության առաջին քառամյակում՝ պետական քարտուղար – խմբ.):

Կարճ ժամանակ անդամակցելով անկարելի է իմանալ այս կազմակերպությունների վտանգն ու նպատակը: Ոմանք դրանք միանում են համբավի, ուրիշներ ապացայի հաջողության համար, այլոք էլ իրավիրվում են «ցուցադրության» համար: Մարդ պարզամիտ կամ տկար իմացականության տեղ պետք է լինի չհասկանալու, թե անդամակցողների նպատակը ԱՄՆ-ի կառավարման հասնել է:

Բոլոր գործադիր իշխանությունները ղեկավարվում են այս մարդկանցով: Երկար ժամանակ այդպես է եղել: Պետական քարտուղարությունը ամենից ավելի ներթափանցվածն է: Պետական քարտուղարը անդամ չէ, բայց տեղակալն ու մի շարք ղեսպաններ անդամ են:

Գանձատան բաժանմունքը նույնպես ղեկավարվում է ԱՆԽ-ի եւ ԵՆ-ի անդամներով: Դաշնային պահեստի ղեկավարությունը շատ սերտ հարաբերություններ ունի գանձատան հետ:

Գանձատան բաժանմունքի եւ Դաշնային պահեստի համակարգի միջոցով Ռոքֆելլերներն ու ընկերները ուղղում են Ամերիկայի ելեմուտքն ու ֆինանսական քաղաքականությունը՝ դրանք նույնացնելով իրենցինքին:

Ազգային անվտանգության կարեւոր պաշտոնները զբաղեցնում են այս մարդիկը – Նենի Քիսինջեր, Ջրիգինի Բժեգինսկի, Քոլին Փատել:

Մեր ազգային պաշտպանությունը՝ նույնպես:

Նույն խումբերը հակակշռում են պաշտպանության նախարարությունն ու բանակի բոլոր կարեւոր պաշտոնները:

ԱՍՏՕ-ի մեջ գործող ԱՄՆ-ի բոլոր դեսպանները ԱՆԽ-ի կամ ԵՆ-ի անդամ են: Կենտրոնական հետախուզական վարչությունը (ԿԿՀ, CIA) նույնպես, նրա 13 տնօրեններից 9-ը եղել են ԱՆԽ-ի անդամ: Ծարքը երկար է:

1920-ից սկսյալ գանձատան 21 նախարարներից 15-ը եղել են ԱՆԽ-ի անդամ: Այսպես, 1944-ից սկսած 14 պետական քարտուղարներից 12-ը, 12 պաշտպանության նախարարներից 11-ը:

Նույն շրջանին, այս կարևոր պաշտոնները զբաղեցնող 60 անհատներից 48-ը եղել են ԱՆԽ-ի անդամներ: Սա արդեն 80% է:

Եթե այս բոլորը անհնազանդացվիչ չեն, նկատի ունեցեք հետևյալը.-

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընտրված նախագահները, բացառությամբ Ջոն Քենեդու եւ Ռոնալդ Ռեյգանի, եղել են ազատ մասն, ԱՆԽ-ի կամ ԵՆ-ի անդամ: Ջորջ Բուշը (*ափազր - խմբ.*) ամենից նշանավորն է, նա եղել է ԳԱՆԿ եւ ՈՍԿՈՐ-ՆԵՐ՝ գաղտնի կազմակերպության անդամ, ԱՆԽ-ի տնօրեն (1977-1979) եւ ԵՆ-ի ցանկում նշվել է որպես «ժողովրդի ծառայության նախնին անդամ»:

Հետևյալը ցանկ է վերջին իննը նախագահների նախնին կամ ներկա պատկանելության.-

Ֆրանկլին Դ. Ռուզվելտ	-	Մասոնական օթյակ
Հերրի Դ. Տրումեն	-	ԱՆԽ
Ջոն Ֆ. Քենեդի**	-	ԱՆԽ
Լինդոն Բ. Ջոնսոն	-	Մասոնական օթյակ
Ռիչարդ Մ. Նիքսոն	-	ԱՆԽ
Ջերալդ Ռ. Ֆորդ կրտսեր	-	Մասոնական օթյակ, ԱՆԽ
Ջեյմս Ի. Գարսեր կրտսեր	-	ԱՆԽ/ԵՆ
Ռոնալդ Վ. Ռեյգան	-	Մասոնական օթյակ

* Գանկ ու Ոսկորներ - Մասոնների գաղտնի խորհրդանշաններից մեկը:

** Քենեդու անունը ԱՆԽ-ի ցանկում չկա: Նա թերևս մի ժամանակ անդամակցել է, ապա հրաժարվել:

Ո՛չ միայն նախագահները, այլև նախագահական թեկնածուները, առանց բացառության, եղել են այս կազմակերպությունների անդամ: 1980-ին, նախագահական հինգ թեկնածուներն էլ այս կազմակերպությունների անդամ էին:

Ռոնալդ Ռեյգանը անդամ չի եղել եւ խոստացել էր պայքարել նրանց դեմ, բայց ընտրվելուց հետո ո՛չ մի բան չարեց, թերևս փոխնախագահ Բուշի ներկայությունը բավարար էր կազմակերպության համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ա՛յս է վիճակը: Սպիտակ տան ժամանակավոր տերը իրեց ներկայացուցիչ է:

Եթե դու զարմանում էիր, թե անկախ ընտրյալից, ամեն բան ընթանում է նույն ձևով եւ նույն ուղղությամբ, սա՛ա պատճառը: Ուրեմն ԱՆԽ-ը եւ ԵՆ-ը ղեկավարում են մեր կառավարությունը: Նախագահական թեկնածու դառնալու կամ բարձր պաշտոն ստանալու պայմանը այս կազմակերպություններին անդամակցելն է: Այսպե՛ս են խորտակում մեր քաղաքականությունը:

Եթե նույնիսկ այս խմբերը աշխատում են ամերիկացի ժողովրդի օգտին, այդ ամբողջ հզորությունը պետք չէ մեկտեղված լինի: Կենտրոնացված քաղաքական համակարգը ժողովրդի օգտին չէ: Անկախ նրանից, թե ո՛վ է ընտրվում, նույն օրակարգն է առաջ մղվում, որովհետև երկու կուսակցությունները նույն դպրոցից են եւ ունեն նույն կողմնորոշումը՝ Համաշխարհայնացում, այսինքն՝ տիեզերական «փրկության» ուսմունք: Ջանազանելու առիթ չեն տալիս մեզ: Մա ժողովրդավարություն չէ՛: Մա քաղաքական խարդախություն է:

Եթե Ավետարանական եկեղեցին, որ ամենից տիրական է այս հողի վրա, այս նույն ձևը որդեգրի որևէ հարանվանության նկատմամբ, մամուլը պիտի գոռա՝ «դավաճանություն», մինչև որ սխալն ուղղվի:

Մեր ղեկավարության 80 տոկոսը նույն հարանվանության է պատկանում, սակայն եկեղեցին չի օգտագործում այդ առավելությունը: Եկեղեցիներ կան, որոնք ունեն հարյուր հազար, նույնիսկ

միլիոնավոր հավատացյալներ, իսկ ԱՆԽ-ն եւ ԵՆ-ը միասնաբար երեք հազարից քիչ անդամներ: Մեր ղեկավարության մեկ խմբի պատկանելությունը զուգադիպություն չէ եւ, զարմանալիորեն, մտահոգություն չի պատճառում: Ուրեմն ինչու զանգվածային լրատվամիջոցները մեզ չեն տեղեկացնում այսպիսի կարևոր հարցի մասին: Այս հարցումին պատասխանը հստակացավ երբ շարունակեցի անդամների ցանկն ստուգել:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՉՈՑՆԵՐԻՑ

Ռոբֆէլլերներին հիացող մի լրագրող ասում է. «Ռոբֆէլլերները ազգի մնայուն հաստատությունն են. կառավարությունները փոփոխական են, տնտեսությունը էլեւէջների մեջ է, արտաքին դաշնակցությունները հաստատուն չեն, Ռոբֆէլլերները տիրում են:

Ես գիտեի, թե տեղեկատվական արդյունաբերության որոշ անհատներ Ռոբֆէլլերների ազդեցության տակ են, բայց նորից զարմացա այդ ազդեցության անազնության վրա: Գլխավոր երեք ցանցերից մեկն ամբողջությամբ ԱՆԽ-ի եւ ԵՆ-ի անդամների տիրապետության տակ է: Այս կազմակերպությունների ազդեցության տակ գտնվող լրագրողների ցանկն այնքան երկար է, որ հարց էի տալիս, թե «ո՞վ այդ ցանկի մեջ չէ»:

Ոչ միայն պարբերական մամուլը, այլև հեռուստատեսությունն ամբողջությամբ Ռոբֆէլլերների բանկի տիրապետության տակ է: 1974-ի խորհրդարանական տեղեկագիրը նշում է, թե Ռոբֆէլլերներին պատկանող «Չեյզ Մենեթթըն» բանկը առանձին 28 հեռուստաընկերությունների մեջ բաժնեմասեր ունի: Մա 1970-ականների տեղեկագիր է: Այսօր այդ հակակշիռն անհամեմատ աճել է: Ռոբֆէլլերներին պատկանող մյուս բանկերի բաժնեմասերը հայտնի չեն: Ռոբֆէլլերների դաշնակիցները որքան բաժնեմաս ունեն անհայտ է: Միայն մեկ ընտանիքի ազդեցությունը հեռուստատեսային արդյունաբերության վրա իսկապէս ստակալի է:

Ռոբֆէլլերների հակակշիռն ենթակա ԱՆԽ-ը տերն է երկրի տեղեկատվական ցանցի մեծագույն մասի, որի միջոցով լուրերը

մեզ են հասնում: Օրինակ՝ «Աստղիեղետ պրես»-ի եւ «Ռոյթերզ»-ի տնօրենները ԱՆԽ-ի անդամներ են:

Ուրախ եմ հայտնելու, թե «Աստղիեղետ պրես»-ի մեջ աշխատող մի պատասխանատու ինձ տրամադրեց այս տեղեկությունները: Մա ցույց է տալիս, որ ղեռ ունենք մի քանի լավ լրագրող:

Անկախ թերթերը նույնպես ենթակա են այս հաստատության: 1983-ին, երկրի 1700 օրաթերթերից 531-ը պատկանում էին անհատներին (մեծ մասը տպագրվում են ավաններում եւ անկախորէն ազդելու ազգի մտածելակերպի վրա): 1945-ին 1381 օրաթերթեր պատկանում էին անհատների: Թվեմ մի քանի գլխավոր լրաբերներ, որոնք գտնվում են ԱՆԽ-ի ազդեցության տակ՝ «Նյու Յորք թայմզ», «Նյուգուդիք» (Վաշինգտոն), «Ուոլ սթրիթ ջուռնալ», «Բուստոն գլոբ», «Բալթիմոր սան», «Չիկագո սան թայմզ», «Լոս Անջելոս թայմզ», «Հյուսթոն փոստ», «Միննեսոտայիս սթար/Թրիբյուն», բոլոր մեծ քաղաքների թերթերը: ԱՆԽ-ն իր 38 մասնաճյուղերով ազդում է լրատվության վրա:

Թվեմ մի քանի հանդես ու պարբերաթերթ՝ «Ֆորչյուն», «Թայմ», «Լայֆ», «Մանի փիփլըլ», «Նյուգուդիք», «Բիզնես ուլիք», «Ռիդերզ դաջեստ», եւ այլն:

Այս հրատարակությունների վրա մեծ է ազդեցությունը բանկերի, հաստատությունների եւ ընկերությունների, որոնք գովազդներից առաջանում են հսկայական գումարներ: Դրանց շարքին են «Միթիկորպ», «Չեյզ Մենեթթըն», «Քնիքլը բանկ», «Մորգան գարանտի», «Էքսոն», «Մորիլ», «Թեքսաքո», «Ա. Բի. Էմ.», «Էյ. Թի. Էնդ Թի.», «Ջեներալ էլեկտրիկ», «Ջեներալ մոթորզ», «Ֆորդ մոթորզ» եւ «Գրայդլեր»: Միայն Ռոբֆէլլերներին պատկանող կամ նրանց ենթակա եւ վճայիս ընկերությունները չեն, որ գովազդներ են պատվիրում, այլ նաեւ գերիառութների (հայպերմարկետ) ցանցը, որոնց վերելում միշտ բազմամ է ԱՆԽ-ի մի անդամ: Այս ցանկին պետք է ավելացնել Ռոբֆէլլերներին պատկանող հարյուրավոր ընկերություններ, որոնք նույնպես գովազդներ են պատվիրում: Հեռուստացանցերի, լրաբերների եւ պարբերաթերթերի կողքին, «Ռոբֆէլլեր հաստատություն»-ն իր հակակշիռն հաստատել է նաեւ

հրատարակչատների վրա, որոնցից շատեր մասնագիտացած են դասագրքերի հրատարակության մեջ, ինչը շատ ավելի կարևոր հանգրվանի է բերում մեզ:

Եթե գանգվածային լրատվության արդյունաբերությանը տիրապետել են անհատներ եւ կազմակերպություններ, որոնց նպատակն է հիմնել Աշխարհի կառավարությունը, մեզ մտում է ազգին զգուշացնել կրթարաններում: Բայց ինչպե՞ս, երբ հրատարակչատներն էլ հակակշռի տակ են:

Այս գաղտնի ազդեցության հայտնաբերումն ինձ քաջալերեց, որ ավելի լրջորեն քննարկեմ ժողովրդական կրթությունը: Ինչ որ գտա՝ շատ ավելի հուսահատական է, քան լրատվությունը: Գիտե՞ի, որ ժողովրդական կրթությունն անցնում է դժվար ժամանակներից, բայց չգիտե՞ի, թե այնպե՞ս են նպատակադրել, որ այն քանդվի: Ես վերջապես հասկացա, թե ինչու է մեր դպրոցները գտնվում են այսպիսի վիճակում:

ԳՈՐՍԱՏՈՒՄ ԵՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

1902-ին Ջոն Դ. Ռոքֆելլերն առնում է առաջին քայլը եւ կազմում է Հնդիանուր կրթության վարչությունը (ԸԿԿ): Որպեսզի կարողանա հակակշռի հաստատել այս հարկազեծ հաստատության վրա, Ռոքֆելլերը ԸԿԿ-ի նախագահ է նշանակում իր օգնականին:

1902-1907 թվականներին Ջոն Ռոքֆելլեր ավազը ԸԿԿ-ին տալիս է 43 միլիոն դոլար, իսկ իր գավակը՝ Ջոն կրտսերը՝ 200 միլիոն: Կրթության վրա հակակշռի հաստատելու համար 1902-1930 ժամանակահատվածում Ռոքֆելլերների տված գումարը այսօրվան փոդով 2 միլիարդ դոլարի համարժեք է: Այս անհավատալի նվիրավությունը կատարվում է որպեսզի դպրոցներում ուսուցանեն համաշխարհայնացումն ու սոցիալիզմը, եւ դա այնպիսի ժամանակաշրջանում, երբ ընդդիմություն ընդհանրապես գոյություն չուներ: 20-րդ դարի առաջին երրորդին Կառնեգի-Ռոքֆելլեր գույքը նվիրաբերում է ընդհանուր ծախսի 20 տոկոսը եւ դառնում է մի տեսակ ԱՄՆ-ի կրթության նախարարություն:

1930-ական թվականներին այս նույն կազմակերպությունները հսկա գումարներով օգնում են Ջոն Դիոլի սոցիալիստական փիլիսոփայության հաջողությանը: Դիոլին այսօր ճանաչվում է որպես «առաջադիմական կրթության հայր», ինչ որ ազդում է ամերիկյան կրթության մտածողության վրա: Այսօր շատ քչեր անդրադառնում են, որ եւս Ամերիկայի գլխավոր անաստվածն է եղել: Եւ գրել է. «Ո՛չ Աստված եւ ո՛չ էլ հոգի չկա: Հետեւաբար, պետք չկա ավանդական Եկեղեցուն պահպանել: Հավատքը եւ դավանանքը ընդունելով՝ անսասան ճշմարտությանը մեղցնում եւ թաղում ենք: Դեռք չկա հաստատուն բնական օրենքի կամ մնայուն բացարձակ քարոյականություն»:

Դիոլի փիլիսոփայության որպես արդյունք տեսնում ենք այսօր քառսի մեջ տվալտող մեր կրթական համակարգը:

Դիոլին եղել է չորս Ռոքֆելլեր եղբայրների ուսուցիչը:

Դիոլին երկար տարիներ վարեց Կոլումբիայի համալսարանի ուսուցչանոցի բաժնի պատասխանատու պաշտոնը: Այսօր ամերիկյան դպրոցների վերակացուների 20 տոկոսը եւ ուսուցչանոցների տնօրենների 40 տոկոսը Կոլումբիայից շրջանավարտ են:

Արտաքին հարաբերությունների խորհուրդը 1934-ին որդեգրում է Դիոլի «մարդկայնություն, սոցիալիզմ եւ համաշխարհայնացում» փիլիսոփայությունը եւ ուղարկում է դասարան: Հետաքրքրական է իմանալ, որ երբ այս բոլորը կատարվում էին այստեղ, Դիոլին հաջողում է ժամանակ գտնել գնալու Ռուսաստան՝ օգնելու կազմակերպել մարքսիստական կրթության համակարգը:

Ռոքֆելլերները ո՛չ միայն հակակշռում են ուսուցչանոցները, այլեւ ծախսում են միլիոնավոր դոլարներ՝ պատմությունը վերստին գրելու համար եւ ստեղծում են գրքեր, որոնք հիմքից քանդում են հայրենասիրությունն ու նախաձեռնությունը:

Ռոքֆելլերների փոդով տպագրված գրքերի երկար շարքից մեկի անունն է «Կառուցեք Ամերիկան»: Այս գիրքն այն աստիճանի մարքսիզմ է քարոզում, որ Կալիֆոռնիայի օրենսդիր կազմը մերժում է այն տպագրել:

«Ռոքֆելլեր հաստատության» ազդեցությունը շարունակեց աճել անցյալ մի քանի տասնամյակներին: Հանրային կրթության

վրա նրանց հակակշիռն այսօր գրեթե ամբողջական է: Մա պարզ իրականություն է, բոլոր մեծ կրթական հաստատությունների պատասխանատուները ԱՀԽ-ի ակադեմիան են: Հիշենք մի քանիսին Կոլումբիայի, Նյու Յորքի, Նորթ Վեմի, Ստանֆորդի, Յեյլի, Չիկագոյի, Վիսկոնսինի եւ Վաշինգտոնի համալսարանները:

Այս բոլոր կարևոր կրթական օճախները համաշխարհայնացողների ազդեցության տակ լինելով, նրանց ճիշտ ուղի վերադարձնելն անկարելի աշխատանք է այլևս:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵՐՐ

Մեր քաղաքական համակարգի վրա «Ռոքֆելլեր հաստատության» ազդեցությունը բացահայտելով, շղայնացա: Իմ ուշիմությունն անպատվվել էր: Իմ ամբողջ կյանքի ընթացքում այս մասին ոչ մի բան չէի լսել: Նույնիսկ մի քանի տարի առաջ չգիտի ԱՀԽ-ի կամ ԵՀ-ի անունները:

Մտակացի երբ հայտնաբերեցի գանգվածային տեղեկատվության վրա այս հաստատության ունեցած ազդեցությունը, բայց հիմա հասկացա թե ինչու ավելի շուտ չէի իմացել այս դավադրության մասին: Ռոքֆելլերները տիրապետություն են հաստատել տեղեկատվական արդյունաբերության յուրաքանչյուր մասնիկի վրա հեռուստատեսությունից մինչև կրթություն: Ժողովուրդը պետք է հասկանա ու բացահայտի դավադրությունը: Բայց ինչպե՞ս: Պարզապես մի քանի հոգի պետք է համաձայնվեն եւ յուրաքանչյուրն զբաղի մի հարցով, ինչպես ես անում եմ, որովհետեւ միջոց չկա բոլորն ու ամեն բան իմանալու:

Երբ շարունակում էի ուսումնասիրել «Մեկ-աշխարհ» շարժումը, մի հարց անընդհատ տանջում էր ինձ. «Ո՞ր է Ամերիկան այս նվիրապետության մեջ: Ի՞նչ դեր է վստահվել նրան»:

Խորանալով այդ հարցում, համոզվեցի, որ Ամերիկայի պարտականությունն է Աշխարհի կառավարությունը հաջողացնելու միջոցներ գտնել, իսկ դրան հասնելուց հետո մարդկությանը առաջնորդել դեպի «Աշխարհի նոր կարգ»-ը: Միայն Ամերիկան, իր ուղղամտությամբ եւ ղեկավարելու կարողությամբ (որպես Առաջին

ու Երկրորդ համաշխարհային պատերազմների հերոսի եւ մարդկային իրավունքների պաշտպանի) կարող է այսպիսի գործ հաջողացնել:

Նախագահ Բուշը 1991 թ. հունվարի 29-ին շատ հստակ ասաց. «Երկու դար Ամերիկան ծառայեց աշխարհին որպես ազատություն եւ ժողովրդավարություն ներշնչող օրինակ: Մերունդներ պայքարեցին ազատությունը պահելու եւ երկարացնելու համար: Այսօր արագորեն փոփոխվող աշխարհում Ամերիկայի առաջնորդությունն անհրաժեշտ է: Ամերիկացիները գիտեն, որ այդ առաջնորդությունը ծանր է եւ գոհողություններ է պահանջում: Բայց մենք գիտենք, թե մարդկությունը ինչու է իր հույսը մեր վրա դրել: Մենք ամերիկացի ենք, մենք ազատության դժվար աշխատանքը հաջողացնելու հատուկ պատասխանատվություն ունենք»:

Ավանդելով Մոցի պատերազմին, Բուշն ասաց. «Մենք գիտենք, թե ինչու ւ այնտեղ ենք: Մենք Ամերիկացիներս, մեզանից մեծ մի բանի մասն ենք: Գրավը այդ փոքր երկիրը չէ, այլ այն մեծ գաղափարը՝ «Աշխարհի նոր կարգ»-ը, ուր տարբեր ազգեր պիտի միանան՝ մարդկության տիեզերական տեխնալը հաջողացնելու համար... Հետևաբար, աշխարհը պետք է օգտվի այս առիթից երկար սպասված «Աշխարհի նոր կարգ»-ը հաջողացնելու համար... Աշխարհի բոլոր ժողովուրդների մեջ միայն ԱՄՆ-ն ունի դա կատարելու բարոյական ու միջոցները: Մենք այս երկրագնդի միակ ազգն ենք, որ կարող ենք խաղաղաբար ուժերը մեկտեղել...»

«Աշխարհի նոր կարգ»՝ ազատության եւ ժողովրդավարության անվան տակ, մի սերունդ առաջ դրան ո՞վ կհավատար:

Թարուն ուժերի միակ հույսն է հակակշիռ հաստատել ԱՄՆ-ի վրա եւ գործածել նրա տնտեսական ազդեցությունը՝ մյուս ազգերը դեպի «Աշխարհի նոր կարգ» առաջնորդելու համար:

Միայն Ամերիկան իր հսկայական միջոցներով կարող է հաջողացնել երկրագնդի համակարգը: Նյու Յորք հաստատված միջազգային բանկերն ու ամերիկյան համակարգչային ընկերությունները կարող են կենտրոնացնել աշխարհի բանկերին ու մեր հեռահաղորդակցության ընկերություններին, որոնք արբանյակներ են

սարքել՝ Աշխարհի կառավարության համակարգը ստեղծելու համար:

Միայն Ամերիկյան կարող է առաջացնել աշխարհը գերկապիտալիստների միջոցով գնելու տնտեսական ուժը: Մի շարք երկրներ եւ գործարարներ, որպես հաստատության խոնարհ դաշնակիցներ՝ հարստացան: Այս հարստության որպես արդյունք անզլերենը աշխարհի տնտեսական լեզուն դարձավ, իսկ ԱՄՆ-ի դուլարը գրեթե ամբողջ աշխարհի փողամիջոցը:

Բոնաստորությունը կարելի չէ Մեկ-աշխարհի կառավարությունը հիմնել: «Աշխարհի նոր կարգ»-ը կհանդիպի միայն հենվելով վստահելի ժողովրդավարության վրա: Ամերիկյան բավարարում է այս պայմաններին՝ որպես աշխարհի ազատության պատվարը, որպես մարդկության վերջին հույսը: Ավելին՝ Ամերիկյան սարքեր ազգերի խառնուրդ է - յուրաքանչյուր անհատ ընկեր կամ բարեկամ ունի ԱՄՆ-ում: Այս բոլորը հուսադրիչ եւ ընդունելի են «Աշխարհի նոր կարգ»-ի համար:

Օսցի պատերազմը նպատակին հասնելու վերջին ռազմավարությունն էր:

Պատերազմը մի քանի նպատակ ունի: Բարձրացնել նավթի գները՝ հաստատության նավթային ընկերություններին նոր միլիարդներ հայթայթելով: Բայց կա ավելի կարեւորը, նա կարող է ազգերը միացնել մեկ թշնամու դեմ, ինչը հարկավոր է մարդկությունը Մեկ-աշխարհի համակարգին հասցնելու համար: Սադրամ Հուսեյնը հոյակապ խաղաց բոլորին համար առեղի անպիտանի դերը (ինչպես Հիտլերը):

Պատերազմը կարող է վերահաստատել Ամերիկային որպես երկրագնդի առաջնորդի եւ «Աշխարհի նոր կարգ»-ի պաշտպանի, նաեւ բոլորին զգուշացնելով, թե ինչ կարող է պատահել եթե հակառակվեն գալիք աշխարհի համակարգին: Կարող են իսկական հայրենաստերը, նա՝ ով հակառակվում է «Աշխարհի նոր կարգ»-ին, վերածել ոչ-հայրենասերի, միեւնույն ժամանակ մյուսներին հայրենասեր դարձնելով: Կարող են ամեն բան խառնել:

Ես որեւէ հակառակություն չունեմ ամերիկյան ղեկավարության հետ եթե նա աստվածային սկզբունքներ է հետապնդում եւ

ազնիվ օրինակ է հանդիսանում մյուս ազգերի համար: Ես ուզում եմ հայրենասեր լինել Աբրահամ Լինկոլնի, Լուիս ՄակՖադենի, Լարրի ՄակՌեանդի եւ մյուսների նման: Բայց կրակեք պետք չէ երազեն նյութապաշտ, կաշտակեր, անասոված Ամերիկա, որը գաղտնի հավաքակախությունների պատտարան լինի եւ մի ազգ, որ չպարտադրի Աշխարհի կառավարությունը մեացյալին: Ես հավատում եմ, որ ամերիկացիների մեծամասնությունը համաձայն է ինձ հետ այս հարցերի շուրջ:

«Աշխարհի նոր կարգ»-ի կառուցման մեջ Ամերիկայի դերին մասին բավական լուսաբանվելուց հետո, մնում է մի հարցում. «Իր պարտականությունը կատարելուց հետո ի՞նչ է պատահելու ԱՄՆ-ին»: Այս հարցն ուսումնասիրողները տարբեր կարծիքներ ունեն: Ոմանք կարծում են, թե երբ մարդկությունն ընդունի «Աշխարհի նոր կարգ»-ը, Եվրոպան պիտի լինի Աշխարհի կառավարության կենտրոնատեղին: Ուրիշներ, ընդհակառակը, կարծում են, թե Աշխարհի կառավարության կենտրոնատեղին լինելու է ԱՄՆ-ում, մասնավորաբար Նյու Յորք քաղաքում:

Բոլոր երևույթները ցույց են տալիս, թե Նյու Յորքը բնական մայրաքաղաքն է: Նա աշխարհի ամենից ուժեղ եւ ազդեցիկ քաղաքն է. այստեղ են գտնվում Միավորված ազգերի կազմակերպությունը, Արտաքին հարաբերությունների խորհուրդն ու Եռակողմ հանձնաժողովը: Բոլորի կենտրոններն այստեղ են: Այնուամենայնիվ, Եվրոպայի գաղտնի նվիրապետությունը, որ թերեւս բացարձակ ղեկավարն է, թերեւս տարբեր ծրագիր է մշակում: Եթե նպատակադրել են աշխարհի մայրաքաղաքը տեղադրել Եվրոպայում՝ միջոցը կգտնեն: Այդպիսի մի որոշում կարող է Նյու Յորք քաղաքը տնտեսապես քայքայել եւ ֆիզիքապես կործանել: Այդ կարելի է հաջողացնել զանազան ձևերով. արժեթղթերի շուկայում տնտեսապես ծրագրված տկարացումով կամ մեր ազգային պարտքի որպես արդյունք փողի ծայրահեղ արժեզրկումով կամ ֆիզիքապես, ինչպես սահմանափակ ատոմական պատերազմով: Հավատում եմ, թե ինչ որ եվրոպական նվիրապետությունը որոշել է, այն էլ կկատարվի:

Նյու Յորքի ճակատագիրը կործանումն է: Այս հարցումին պատասխանը չգիտեմ եւ ոչ էլ ուզում եմ, որ այդ քաղաքում ապրող ժողովրդին վատ բան պատահի: Բայց զուգահեռը Նյու Յորքի եւ նշանավոր բայց չար քաղաքի, որը որպէս Առեղծված Բարեւոյն է նկարագրված պատմության մեջ՝ դժվար է անտեսել: Հուսամ սխալ եմ:

Գլուխ 4

«ՆՈՐ ԴԱՐ» ԵԱՐԺՈՒՄԸ

Աշխարհի կառավարությունը ստեղծելու քաղաքական եւ տնտեսական աշխատանքը կատարում են հոգեւոր ուղղություն ընդունած կազմակերպություններ, որոնք միասնաբար ճանաչվել են որպէս «Նոր դար» շարժում (ՆՂԸ, New Age): Իմ առաջին փորձառությունն ստացա երբ որպէս գործարար հարեան քաղաքը գործուղման գնացի: Հանդիպումից հետո ընկերության ներկայացուցչի հետ գնացիք ճաշելու: Երբ ճաշը մատուցին, իմ հյուրընկալը պարզեց ձեռքերը եւ սկսեց աղոթել: Քրիստոնեյա լինելով՝ ուրախ էի որ իշ հավատացյալի ընկերակցությունից, ինչն ընդհանրապէս քիչ է պատահում գործարար հանդիպումներում: Ճաշի ընթացքում, գանազան հարցերի շարքին, իմ հյուրընկալը հետեւեալը պատմեց.

- Բարեգործական մի կազմակերպություն ամառական ժողովների համար սեյսյակ է խնդրում ընկերությունից: Ինդրանքը բավարարվում է: Ըստ պայմանագրվածության, ընկերության ներկայացուցիչը միշտ պետք է ներկա լինի ժողովների:

Կարճ ժամանակում հարցը պարզվում է: Կազմակերպությունը ընտրվում էր ձեռք եւ միջոցներ «Նոր դար»-ի գաղափարը եւ գործունեությունը փոխանցելու համայնքին խաղաղության եւ միության նշանաբանի տակ, բավարարելով նաեւ համայնքի կարիքները: Առաջին հայացքից՝ մադրասիական գործ, խաբկանքի աներեսայթ է:

Ընկերությունը հետաքրքրված էր այս ժողովներով, որովհետեւ չէին լսել «Նոր դար» շարժման մասին: 1980-ականներին քչեր գիտեին այս ցանցի մասին:

Ընկերության ներկայացուցիչները սեղմ ժողովի են հրավիրվում հասկանալու, թե ինչ է այս շարժումը: Հրավիրում են մի քանի քրիստոնեյայի, ովքեր տեղյակ էին շարժման գործունեության մասին եւ կարող էին բացատրություններ տալ: Գիտե՞նալով իմ հետաքրքրությունների մասին, ինձ էլ հրավիրեցին:

Ես չէի լսել «Նոր դար»-ի մասին եւ չէի հասկանում, թե ինչն է այս անագանքը: Երկու ժամ ավտոմեքենան վարելուց հետո ներկա եղա ժողովին:

Պատրաստ չէի այս ժողովի ծանրության: Երբ բացատրություններ վերջ գտան, հարցումներից ուղեւս պայտում էր: Դասախոսը շատ լավ էր ուսումնասիրել Շարժումը: Վերջում պարզվեց, որ «Նոր դար» շարժումն իրական էր եւ մեծ վտանգ էր ներկայացնում մեր հավաքականության: Հետագայում մենք գործակցեցինք եւ Շարժումն ուսումնասիրեցինք:

Ձարմանալին այն է, որ իմ ծանոթությունը նոր փողի, համաշխարհայնացնողների եւ «Նոր դար» շարժման հետ տեսել էր ութը ամիս: Հիշյալ երեք գործոններն ինձ հունից դուրս էին հանել: Աստված ինձ ուղղություն էր տալիս: Կյանքս նույնը չէր այլեւս: Մկսեցի շատ լուրջ ուսումնասիրություններ կատարել:

Մի քանի ամսվա ընթացքում մինչեւ ականջներս խրվել էի «Նոր դար»-ն ուսումնասիրող նյութերով: Մկսեցի մի շարք առողջապահական սենդի պահեստներ այցելել: Դասախոսն ինձ տեղեկացրել էր, թե «Նոր դար» շարժումը հաճախակի օգտագործում է սննդի պահեստները՝ իր գրականությունը բաժանելու եւ իր գաղափարախոսությունը քարոզելու համար:

Առաջին պահեստում գտա ամեն բան՝ «Նոր դար» պարբերականից մինչեւ «Մայր Երկրի լուրերը»: Պահեստի տիրուհին այնքան խանդավառով էր իմ հարցերով, որ մի քանի պարբերական ձրի տվեց ինձ:

Հաջորդ այցն ավելի վատ էր: Պահեստը լի էր աղաղակող նյութերով: Նույնիսկ փակցրել էին մի ազդ, որտեղ գրվել էր, թե

ինչպե՞ս կարելի է միանալ Կախարդների ազգային կազմակերպության: Ազդի տակ նշել էին՝ «*Լուրջ Ուսանողներ Միացե՛ք*»: Չէի հավատում այդերիս:

Մի քանի շաբաթվա ընթացքում փոքր գրադարան կազմեցի: Տարբեր անուններ գործածելով՝ հայտնվեցի նամակագրական ցանկում: Այսպիսով հեարավորություն ընձեռնվեց իմանալ, թե ո՞վ ում հետ էր հաղորդակցում և թե ո՞ր կազմակերպությունները նույն ցանկում էին:

Վեց ամսվա ընթացքում սկսեցի «Լոր դար»-ական գրականություն ստանալ երկրի տարբեր կողմերից, մի տարի անց նույնիսկ անկարելի էր թերթատել ուղարկված կտրթերը: «Լոր դար»-ական գրականությամբ լի բազմաթիվ արկղեր դիզվեցին իմ տան մեջ:

Շատ լավ էի խաղում «Լոր դար»-ականի իմ դերը և երկար գրույցներ էի ունենում «Լոր դար»-ական գրախանութների տերերի հետ: Լպատակադրել էի իմանալ, թե այդ գրականությունը որտեղից էր գալիս և թե իրենք ինչի՞ են հավատում: Օգտվում էի դասախոսի և նրա ընկերների ուսումնասիրություններից: Մեր բոլորի նպատակն էր սեւ ուժերը հայտնաբերել:

Գրեթե երկու տարի տքնաջան աշխատելուց հետո զգացի, թե կարողացել եմ թափանցել նրանց ներքին աշխատանքին: Լպատակիս հասել էի: Այլեւս չեմ ուզում այդ էջերը կարդալ: Այդ գրականությունն այնքան սեւ է և ճնշող, որ միշտ ընկճված էի գոում: Ո՛չ մեկին չեմ հանձնարարի, որ այսպիսի աշխատանք կատարի՝ եթե Աստուծո կամքը չկա այնտեղ: Ռոպեսդի ինքներդ ձեզ կարողանաք վերականգնել նույնքան Սբ. գիրք պետք է կարդաք: Ի՞ գուր չեն ասել, թե սատանան վարպետ խաբերա է: «Լոր դար» շարժման գրությունների մի մասն այնքան սատանայական է, որ չի վախեցնում, մինչ ուրիշներ գրվել են այնքան հաշվենկատորեն ու խաբկանքով, որ կարող են ամենակատարյալ հավատացյալին իսկ շարքից հանել: Կրկնում եմ՝ թեթևակի չվերաբերվել այսպիսի կտրթերի հետ:

Անկարելի է «Լոր դար» շարժման գործունեությունը պարփակել այս գրքի էջերում: Շուկայում կգտնեք մեծ թվով և կա-

րետր գրքեր, որոնք շատ լավ են բացատրում «Լոր դար» շարժման միտումները: Բայց ահա թե ես ի՞նչ սովորեցի:

«ԼՈՐ ԴԱՐ»-Ի ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

«Լոր դար»-ի կրոնը համաստվածությունն է, այսինքն՝ ինչ որ գոյություն ունի, ապրում է՝ աստված է: Ըստ նրանց Աստված չկա. փոխարենն ընդունում են աստված-ուժը (կյանք-ուժը): Նրանք ուսուցանում են, որ կենսատուժը կամ աստված-ուժը հոսում է բոլոր ապրող էակների – բույսերի, անասունների և մարդ էակի - միջից: Այստեղից հետևեցնում եմ՝ քանի որ աստված-ուժը հոսում է բոլորի միջից, ուստի մենք աստված ենք կամ Աստուծո մի մասը:

Համաստվածության հավատացողների մեծամասնությունը պիտի պաշտպանի Մեկ-աշխարհի կառավարությանը, որովհետև համաշխարհայինացումը կարելու է աստված-ուժի բնական հոսքի համար: Ապա մարդկությունը ենթադրաբար հսկա ցատկ պիտի կատարի դեպի ավելի բարձր գոյություն, և հանկարծ պիտի ստանա խորհրդապաշտական գորություն կատարելու այն, ինչը երբեք չէր կարողացել կատարել. պիտի ծնի «Լոր դար»-ի լուսավորությունը՝ «Աշխարհի նոր կարգ»-ը:

Համաստվածականներն ուսուցանում են, որ մենք երբեք չենք մեռնելու, հետեւաբար, Աստուծո կողմից չենք դատվելու, վերադառնալու ենք կյանքի՝ տարբեր ձևերով, որովհետև մենք «բնություն ենք»:

Ձարմանալի է, թե մարդ ինչպե՞ս կարող է այսպիսի գաղափարի հավատալ: Համաստվածության հիմքը սատանայի երկու ստերն են, միեւնույն ստերը, որ խաբեցին Ադամին ու Եւային: Օձն ասաց էր՝ ուտեք արգելված պտուղը 1) պիտի չնահանաք եւ 2) պիտի լինեք Աստուծո նման:

Մարդը միշտ էլ փորձել է փախչել իր վերադասին հաշիվ տալուց: Համոզումը որ հաշիվ չես տալու Աստուծո՝ համաստվածության գլխավոր թերությունն է:

Բացահայտեցի նաև, որ համաստվածության գաղտնի գործունեությունները շատ պարզ երեւում են կախարդության մեջ:

Հակառակ ընդունված կարծիքի՝ կախարհները սատանային չեն հավատում, ոչ էլ կարծում են, թե սատանայական ծիսակատարություն են կատարում: Կախարհներն ու փնուկները կարծում են, թե օգտագործում են բնության ուժը, այսինքն՝ աստված-ուժը – Համաստվածությունը:

Համաստվածությունը սատանայի կրոնն է: Թեև կան սատանայի հետևորդներ (սատանայապաշտություն), բայց վերջինս ընդհանրացած չէ, որովհետև շատ չար է: Փոխարենը մարդիկ համաստվածությունն են նախընտրում:

Եթե համաստվածությունը գաղտնի կիրառություններ է կատարում, հետեցնում ենք, որ արևելյան համաստվածյան կրոնների ղեկավարները նույնպես գաղտնի ձեսեր էին կատարում:

Բոլոր նրանք, ովքեր ընդգրկվել են «Լոր դար»-ի գործունեության մեջ, արևելյան կրոնների ղեկավարներին ընդունում են որպես իսկական հեղինակություններ. հետևաբար, հեղկական ավամիներն ու յոզիները մեծաքիչ հետևորդներ ունեն Արեմոնություն: «Լոր դար»-ի հետևորդների համար, կրոնի ամենից նշանավոր ուսուցիչները տիբեթյան վանականներն են ու նրանց հոգևոր առաջնորդ Դալայ Լաման: «Աստվածիմաստության ընկերության» (Theosophical Society) մի շարք ներկայացուցիչներ, ինչպես Ալիս Բեյլին և Էլենա Դետրովնա Պլավատսկայան – որոնց գրությունները մեծ ազդեցություն են ունեցել «Լոր դար» շարժման վրա – Օայ-րագույն Արևելքի վարպետների մոտ են ուսանել:

Չհասկանալով խորհուրդը և խորհրդապաշտությունը գաղափարների իմաստը, ժողովուրդը չի կարողացել տարբերել համաստվածությունն ու գաղտնիությունը: «Լոր դար»-ականների մոտ խորհուրդն ու գաղտնիքը հումանիշներ են: «Լոր դար»-ականների՝ Նելի Դրոպիի պատրաստած ամենից ընդհանրացած բառարանում՝ «Խորհրդապաշտության և գաղտնիության բառարան»-ում, այս բառերը նույնացվել են, հումանիշ են:

Խորհրդապաշտությունը գաղտնիությունն անելու մեղմ ձևն է: Ժողովուրդը շփոթեցնողը «Լոր դար»-ն է, որ թեև ավելի լավ է հնչում, բայց հումանիշ է խորհրդապաշտության և գաղտնի-

ության: Արդի լեզվով՝ լինել խորհրդապաշտ թե գաղտնիապաշտ՝ «Լոր դար»-ականն նույն իմաստն ունի:

Այս շփոթության պատճառով, «Լոր դար»-ին միացողներից շատեր չգիտեն, թե գաղտնիության գաղափարն են ընդունել: Ժամանակի ընթացքում ինքնաբերաբար հասկանում են իմաստը, բայց արդեն ուշ է լինում և չեն ուզում վերադառնալ: Գաղտնիապաշտը մոլորեցնող է և անհավատալիորեն մոլի, էլ ավելի մոլի, քան թմրեցուցիչները: Ամենից մոլորեցուցիչ և վտանգավոր վիճակն են ընդունում, երբ նրանք այլափոխվում են: «Լոր դար»-ականների համար՝ այս վիճակը գլխավոր միավորող ազդակն է:

Մենք ստեղծվել ենք բնական պաշտպանությամբ, որպեսզի կարողանանք դիմադրել այս բոլորին: Եթե դիմադրականությունը կորցնենք՝ մութ ուժերի (սատանայի) ազդեցության տակ կընկնենք: Կենտրոնացումն ու մտահայեցումը կալլափոխեն մեզ:

Որոշ այլափոխիչողներ (վերացողներ) անմիջապես չեն զգա արարքի ազդեցությունը, ուրիշներ անմիջապես հասկանում են, թե ինչ է պատահում: Այս երևույթն ընդգրկում է նաև մարմնից դուրս ճամբորդությունը («Լոր դար»-ականներն այս վիճակը կոչում են «աստղային ռոտում» կամ «տիեզերական ճամբորդություն»): Հիպոնոսը ճանապարհորդություն է դեպի «անցյալ կյանքերը», հստակ տեսիլք, մի տեսակ գուշակություն, ուղղակի միաձուլում ոգիների հետ (ընդհանրապես կոչվում է «առաջնորդ ոգի»):

Այլափոխվելը վտանգավոր է: Հնդկաստանի գուրունները նախագգուշական միջոցներ են որդեգրում, երբ շատ են խորանում մտահայեցման մեջ:

Շատեր կարծում են, թե վերանալով առիթ են տալիս սատանային, որ նա ազդի մեր մտածման վրա: Կերացած վիճակը պաշտպանությանը քայքայում է: Հոգեբանները փաստել են, որ վերացած վիճակը տրամաբանությանը տկարացնում է: Սատանան հիմար չէ. նա այս բոլորը հասկանում է: Այս վիճակում ոչ ոք կարողուն չունի լավի ու վատը ընտրելու. անում են այն, ինչ հիպոնոսացնողն ասում է:

Օրինակ՝ հիպնոսի ընթացքում եթե թեզ ասեն, որ երեք հեծանիվ էիր վարում կհավատաս: Ուղեղը դա ընդունում է որպես

իրականություն: Այս վտանգավոր ուժը երևում է հետեւյալ օրինակում.

Մի քանի տարի առաջ, հիպնոսի մի նշանավոր մասնագետ հրավիրվում է մի դպրոց իր «արվեստը» ցուցադրելու: Նա կանավորներ է հրավիրում հարթակ եւ հաջողում է երանց վերացման վիճակի հասցնել: Երկու տարի անց նորից է հրավիրվում նույն դպրոցը եւ ցույց է տալիս, որ իր ուժը տակավին ի գործ է այն նույն տղաների վրա, ում երկու տարի առաջ վերացման էր հասցրել: Նա պարզապես ասում է «պահված» բառը, եւ իր ձայնի ազդեցության տակ նույն տղաքը նորից են վերանում: Այս դեպքն անշուշտ մեծ ազդեցություն է թողնում աշակերտների վրա:

Հիպնոսացնողն իբր բարի է տրամադրվել: Իրականության մեջ դա խաբեություն է: Լավ խաբկանք կամ սպիտակ կախարհություն չկա: Ո՛չ որ թող չմտածի, թե գործածելով խաբկանքի ուժը կարող է «դրական փոփոխություն» առաջացնել:

Երբ քննում էի այս հարցը, մի բան էլ հայտնաբերեցի. Ուղեղի վրա ազդող թմրեցուցիչները հազարավոր տարիներ գործածվել են վերացման հասցնելու համար: Անցյալին հույն փիլիսոփաները թմրեցուցիչ էին գործածում՝ վերանայու համար: Այդ թմրեցուցիչն աճում էր ցորենի դաշտերում եւ գործածվում էր հունական մեդիսաներում:

Պատահական չէ, որ թմրեցուցիչի գործածությունը եւ խաբկանքի կիրառումը այս երկրում (*ՄՄՆ-ում - խմբ.*) սկսվեց 1960-ական թվականներին: Երկուրը միասնաբար: Թմրեցուցիչները ծուլերն են գործածում՝ վերանայու համար: Թմրեցուցիչները մոլորեցնում են: Ես գիտեմ մեկին, որ փորձելուց հետո, թե կարող է նույն վերացական վիճակին հասնել, թմրեցուցիչը մտահայեցությամբ է փոխարինել: Այս ձևը ավելի էժան է եւ իբր անվնաս է... Մոլպես է համոզվել:

Բոլոր նրանք, ովքեր կանոնավորապես վերանում են, ասում են, թե ոգիների են հանդիպում: Եթե դա ճիշտ է, դրանք դեռել են եւ կարող են որևէ կերպարանք ստանալ:

Փիլիսոփա եւ հոգեբան անհատներ իրենց վերացման ընթացքում ունեցել են այդ փորձառությունը եւ հանդիպել ոգիների,

որոնց կոչում են նախատիպ պատկեր կամ «իդեալական ձև»: Մտասպանանց մարդաբանը չի հավատում ոգիների գոյության, եւ եթե ճիշտ է համարում նրանց գոյությունը, նրանց անվանում է «արտերկրային էակներ», որոնք եկել են տարբեր աշխարհներից, ունեն զարգացման բարձր աստիճան ու կարող են հաղորդակցվել այնպիսի ձևերով, որոնց մարդկությունը տակավին չի հայտնաբերել:

Կարճ, սատանաներն ասում են մարդուն այն, ինչ որ ուզում են լսել եւ ընդունել: Չարմանալի բան. շատեր, ովքեր չեն ընդունում Աստուծո գոյությունը, այսպիսի ստեղծի են հավատում: Դարերը մարդի մեջ ոչ մի բան չեն փոխել: Թերեւս ապրում ենք Հին Կտակարանի շրջանում:

Կարելի է իմանալ, թե անցյալի բոլոր խորհրդավոր կրոնները համաստվածային են եղել: Համաստվածությունը ստեղծվել է Միջագետքի Բաբելոն քաղաքում եւ արագորեն տարածվել աշխարհի չորս ծագերում: Հնդդականությունը բաբելոնյան համաստվածության տարբերակն է (արիացիներն են տարել): Բուդդայականությունը հինդուականության տարբերակն է: Արեւելյան բոլոր կրոններն ունեն Բաբելոնի կնիքը, ուր Աստուծո դեմ ապստամբությունն սկսվել էր ցրիէլեդից առաջ: Այնտեղ էր այս ամբողջ խառնիճաղանջը: Եղել են եգիպտական կրոնը (ծանոթ է որպէս Օգիրիսի խորհրդապաշտություն), արաբական, բաբելոնյան եւ պարսկական կրոնները (Չրադաշտականություն), ասորեստանյան ու փյունիկյանը (ներառյալ՝ Բաալի պաշտամունքը), հետագային՝ հունականն ու հռոմեականը: Այս բոլորի ավունքը հին Բաբելոնն է, Նեմրոսի օրերից:

Աստված Բաբելոնի աշտարակի պատճառով բաժանեց ժողովրդին, սակայն խորհրդապաշտությանը վերջ չդրեց, այլ դրա ընթացքը դանդաղեցրեց: Հետագային նոր քաղաքակրթություններ ծաղկեցին Եգիպտոսում, Պարսկաստանում, Հնդկաստանում եւ այլ երկրներում, բայց հին սովորությունները վերագարծեցին: Ժողովուրդն իր հետ էր տարել իր հավատքն ու կիրառությունները:

Չանագան լեզվական խմբերի ստեղծած նոր քաղաքակրթություններում թեւ որոշ փոփոխություններ կատարվեցին այս

«նոր» խորհրդայնացաշտությունների մեջ, բայց հիմնականը մնաց նույնը: Անցյալի բոլոր կրոններն ունեցել են խորհրդավոր քրմություն, որն իշխում էր երկրի կամ կայսրության վրա, ընտրելով իրենից մեկին որպես քուրմ-թագավոր: Քուրմը պարտավոր էր գաղտնի ծեսեր եւ խորհուրդներ սովորել: Երբ նորընծան հասնում էր քրմության վերին աստիճաններին, գաղտնի ուսմունքը բացատրվում էր նրան: Այդ կրոնների ակբաժանելի մասն էր սատանայի պաշտամունքը, սատանան կոչվում էր գերեզմանի կամ ներքաշխարհի աստված եւ պատկերվում էր օձի կամ վիշապի տեսքով:

Քրմայետները խորը վերացած վիճակում իրենց հրահանգներն առնում էին սատանայից կամ նրա ներկայացուցիչներից: Խորը վերացման արվեստի գաղտնիքը միայն քրմայետները գիտեին: Հետագայում այս արվեստը փոխադրվեց գաղտնի ընկերություններին: Նույն արվեստը կամ նրա տարբերակը ոչ վաղ անցյալում, միայն մի քանի սերունդ առաջ փոխանցվեց արեւմտյան հավաքականություններին:

Քրմերի հետ հաղորդակցվող չար ոգիները աստվածներ եւ աստվածուհիներ էին: Հավատում են, որ կուռքերը սատանաների իրական պատկերներն են: Ուրեմն, նրանք սատանային էին պաշտում:

Վերանայը կրակի հետ խաղալ է:

Սատանան իր սպասավորների միջոցով պիտի փորձի «Աշխարհի նոր կարգ»-ը պարտադրել:

Գաղտնի նմիքապետությունը, օգտագործելով քրիստոնյաներին, իր ծրագիրները առաջ է տանում համակարգված ձևով:

Անհնար է իմանալ, թե ԱՄՆ-ում քանի՞ հոգի է հետեւում գաղտնի իտկումների, սակայն հաստատ կարող եմ ասել, որ նրանք հազարներով բազմապատկվել են վերջին երեք տասնամյակներին: Այս շարժումն ունի իր ղեկավարությունը, որն իր հետևորդների համար հսկայածավալ գրականություն է տպագրում: Եթե փորձեն կարող են այսպիսի գործերով զբաղվող հազար կազմակերպությունների ցանկ ներկայացնել ձեռք: Այդ խմբերի մի մասն զբաղվում է փոքր համայնքներով: Քաղաքների մեծ իրատարակչություններն ունեն հազարավոր նամակագրական ցանկեր:

«Նոր դար» շարժման ղեկավարությունը գիտի, թե ի՞նչ է անում եւ ո՞ւմ հետ է հաղորդակցում (չար ոգի), բայց հետևորդներից շատեր չգիտեն, թե սատանային են պաշտում:

«Նոր դար»-ականների մեծ մասն անգիտակցաբար է միացել շարժմանը՝ աշխարհին խաղաղություն բերելու եւ յոգա ու վերացական խոկում կատարելու միջոցով սուրբ առողջություն ձեռք բերելու համար: Ես խղճում եմ այդպիսիներին, որովհետեւ չգիտեն, թե ի՞նչ են անում:

Այս շարժմանն ավանդաբար առաջնորդում է «Աստվածի-մատության ընկերություն»-ը, որը կարևոր դեր է խաղում մարդկությանը համոզելու, որ «Աշխարհի նոր կարգ»-ն ընդունի: Կազմակերպությունը հրատարակել է մի շարք գրքեր, թվենք դրանցից մի քանիսը. «Ազգերի ճակատագիրը», «Քրիստոսի վերահայտնությունը», «Նոր դարի աշակերտությունը եւ գաղտնի ուսմունքը», հեղինակ՝ ընկերության հիմնադիր Էլենա Պետրովնա Պլավատսկայա:

Իր «Գաղտնի ուսմունքը» գրքում Պլավատսկայան գրում է (էջ 53). «Ավելի լավ է իշխել դժոխքում, քան ծառայել դրախտում» կամ՝ «Լավ է լինել մարդ (երկրի արտադրությունների թագը) եւ թագավորել, քան կորչել սուրբ հոգիների դրախտում»: Նույն գրքի 76-րդ էջում կարդում ենք. «Նա (սատանան) իդեալների մեծագույնը, զոհաբերության գագաթնակետը – աստվածացումը – մարդկության իմացակառության անկախության համար...»:

Գիրքը շատ մեծ ազդեցություն է թողել Հիտլերի վրա: Պլավատսկայան գիտի, թե Աստված զոյ է, սակայն ըմբոստանալով անցնում է սատանայի կողմը: Նա կարճ ժամանակի համար հրատարակում է «Սատանա» հանդեսը, բայց ժողովրդի ճնշման տակ պարբերականը շուտով դադարում է լույս տեսնել:

Աստվածիմատության ընկերության մյուս ղեկավարը՝ Ալիս Բեյլին հիմնում է (1920-ի մոտ) «Սատանայի մամուլը»՝ ընկերության գրականությունը տպագրելու եւ բաժանելու համար: Նորից ժողովրդի ճնշման տակ նա փոխում է անունը, որը դառնում է «Լյուսիի մամուլը», իսկ այժմ կոչվում է «Լյուսիի ժառանգությունը»: Ընկերության կենտրոնը Նյու Յորքում է, ՄԱԿ-ի հրապարակում:

Ընկերությունն ունի ավելի քան վեց հազար անդամ: Նա հովանավորում է Մեկ-աշխարհի շարժմանը:

1920-1930-ական թվականներին «Աստվածիմաստության ընկերությունը» հիմնում է մի քանի սատանայական ընկերություններ, ինչպես Արգան (գաղտնի) դպրոցները (Նյու Յորք, Լոնդոն, ժնև և Բուենոս Այրես), «Եռանկյունիներ»-ը և «Բարյացակամ աշխարհ»-ը: Արգան դպրոցները մարզումի հստակ կենտրոններ են, որտեղ պատրաստվում է «Նոր դար»-ի ղեկավարությունը: «Եռանկյունիներ»-ը «Աշխարհի նոր կարգ»-ը քաջալերող մեկ այլ կազմակերպություն է: «Եռանկյունիները» վերացումով գրադոլ 3 հոգիանոց հարյուրավոր խմբեր են, որոնք փոխադարձաբար երեսակայում են լույսի եռանկյունիներ և արտասանում Քրիստոսին (հակաքրիստոսին) վերադարձնելու «Մեծ աղերս»-ը: 1933-ին հիմնված «Բարյացակամ աշխարհ» խմբի - որին կոչում են նաև «Աշխարհի ծառայության նոր խումբ» - պարտականությունն է ամբողջ աշխարհին աստվածիմաստապատկերային սատանայական գրականություն ցրվել: «Բարյացակամ աշխարհ»-ը 1961-ին միավորվեց «Աշխարհի միություն» կազմակերպության հետ, որի հետ միասնաբար այսօր պատրաստում են Աշխարհի կառավարության ծրագրավորումն ու գործադրությունը:

«Նոր դար»-ական կազմակերպությունները, ինչպես «Լյուսիի ժառանգությունը» և «Աշխարհի միությունը», լավ կապեր ունեն Մեկ-աշխարհի քաղաքական ընկերությունների հետ, որոնք մշակում են «Աշխարհի սահմանադրություն և խորհրդարանական ընկերակցություն», որոնց պարտականությունը պիտի լինի կամ է՝ արդեն մեզ ուղղակիորեն տանել դեպի «Աշխարհի նոր կարգ»-ը:

ԱՄԵՐԻԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԵՈՐՀՐԿԱՐԱՄԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Աշխարհի սահմանադրությունը և խորհրդարանական ընկերակցությունը» (ԱՄՆԸ) հիմնադրվել է 1959-ին, Լեյքվուդում (Կոլորադո նահանգ): Այս կազմակերպության հիմնադրման ու զարգացման մեջ մեծ դեր է խաղացել Ֆիլիպ Այզլին, որ 1966-ից

եղել է ԱՄՆԸ-ի գլխավոր քարտուղարը: Այզլին 1982-ից սկսած կանոնավորապես կազմակերպում է «Աշխարհի ժամանակավոր խորհրդարան»-ի հավաքները, որտեղ ընդունվում են մի շարք «Աշխարհի օրենսդրական նախագծեր»: Չորրորդ հավաքը տեղի է ունենալու շուտով: Ըստ ծրագրի, հինգ նստաշրջաններից հետո պիտի ընդունվի «Աշխարհի նոր կարգ»-ը:

1987-ին կայացած երրորդ նիստին նշանակվել են Աշխարհի ժամանակավոր նախագահն ու Աշխարհի դաշխժը: Վերջինս գործադիր մարմին է, որի պաշտոնն է Աշխարհի կառավարությունը կազմավորել: ԱՄՆԸ-ը սուպարել է Աշխարհի սահմանադրությունը և այն բաժանել ազգային խորհրդարաններին ու կառավարություններին, որոնց մեծ մասը այս խմբերի անդամների ազդեցության տակ են: Վերջնական ուղղումներն ու սրբազրությունները կատարվել են 1991-ի գարնանը Պորտուգալիայում կայացած «Աշխարհի սահմանադրականների հավաք»-ին:

Շարքը շատ լուրջ է: Կիսադեղն է: Դա կախյալ է ժողովուրդների գիտակցությունից: Եթե իմանաք, թե ովքեր են ընդգրկվել այս դավադրությանը, լրջությամբ կմտնե՞նք սպառնալիքին:

ԱՄՆԸ-ի եւ նրա մասնաճյուղերի ռազմավարությունը լուր աշխատել է, ոչ ոք գիտի նրանց ծրագրերի մասին: Մրանք «Նոր դար»-ի օգնությամբ արագորեն պիտի գործադրեն ծրագիրը, հիմնելով Աշխարհի կառավարությունը, այնքան արագ, որ մարդիկ ժամանակ չունենան մտածելու, թե ի՞նչ է կատարվում և փորձեն ընդդիմանալ:

ԱՄՆԸ-ը չի սիրում «դավադրություն» բառը, իր գործունեությունը բացատրելու համար նա նախընտրում է գործածել «գործակցել» կամ «աշխատել փոփոխության համար» արտահայտությունները:

Այս բոլորը անցյալ 30 տարիներին կատարվում էին ժողովրդավարության անվան տակ, բայց ամերիկացի ժողովուրդը տեղյակ չէ կատարվածից: Օգտվելով ԱՄՆ-ի սահմանադրության ընձեռնած բարիքներից, սրանք Աշխարհի սահմանադրությունն են գրում:

Նման մարդկանց մոտիկ անցալում դատում էին դավադրության հանցանքով և կախում հրապարակում: Անցյալ երեք տարուղներին խելացի, ծրագրավորված քարոզչությունը ժողովրդին ընտելացրել է գաղափարին, և թիում է, թե հասել է ժամանակը իրենց արածները հայտարարելու և դրանք մարդկությանը ընդունել տալու համար:

ԱՄԽԸ-ի նպատակն է երկրագունը վերածել 10 շրջանների. Այս միտքը վերցրել են Հոռոմի ակումբի ձեռնարկից: ԱՄԽԸ-ի ծրագրողներին է միջազգային փողի համակարգի՝ «Աշխարհի նոր տնտեսական կարգ»-ի ստեղծումը. Սա եւս Հոռոմի ակումբի գործածած ճիշտ և ճիշտ կոչի բառերն են:

ԱՄԽԸ-ի մասին առաջին անգամ լսել եմ 1987-ին, իմ մի ընկերից, որ թափանցել էր կազմակերպության մեջ որպէս «Լոռ դար»-ական: Ընկերս հրավիրվել էր «Աշխարհի ժամանակավոր խորհրդարան»-ի երրորդ նիստին, որ տեղի էր ունենալու հունիսին, Մայամի բիչում: Ընկերս ինձ էլ հրավիրեց: Լրացրեցի դիմումագիրը, փորձելով ինքս ինձ ներկայացնել որպէս համաշխարհայնական և «Լոռ դար»-ի կողմնակից: Միջազգային առևտուրի մասնագետի իմ աշխատանքի ու հարավսլավ-գերմանացի ծնողներ ունենալու փաստերը հեշտացրին գործը: Ես իրենց փետած անձն էի, իմ դիմումագիրն ընդունվեց:

Չկարողացա ժողովին մասնակցել, բայց սկսեցին ԱՄԽԸ-ի գրականություն ուղարկել: Ձարմանում էի. այնտեղ հստակորեն գրվել էր կազմակերպության նպատակը՝ հիմնել Աշխարհի կառավարությունը: Նույնիսկ քաջալերում էին պատվիրակների գալվակների ներկայությունը ու հստակ պաշտոններ էին տալիս: ԱՄԽԸ-ի պաշտոնական «հոգեկան կապը» հնդիկ յոգ Շանթ Սվարուպը «Երևիաների խաղաղ օդակ» հավաքներն էր կազմակերպում:

Ելույթ ունեցողների մեծամասնությունը Օայրագույն Արևելքի յոգերն ու սվամիներն էին: Մրանց կողքին ցանկում էր գտնվում նախագահական թեկնածու՝ վերապատվելի Ջեսսի Ջեկսոնը, որ Արտաքին հարաբերությունների խորհրդի անդամ է: Նա այն մի քանի աֆրո-ամերիկացիներից էր, որ ընդգրկվել էր այս գործում:

Այգլին շատ հանգիստ էր գգում: Նիստի ավարտին ես պատգամավորներից պահանջում էր ժողովի որոշումները տարածել:

Մայամի բիչի նիստից հետո շարունակեցին ուղարկել տեղեկություններ, իսկ ես շարունակեցի իմ դերը խաղալ: 1989-ին ես 1990-ի սկզբին ոչ մի տեղեկություն չստացա: Ձարմանալի էր: 1991 թ. մարտի 14-ին, հարաբերությունները շարունակելու և վստահեցնելու համար, թե ես «իրեցից եմ», կապվեցի Այգլին հետ: Երկար խոսեցիք, զգացի, թե նա չի կասկածում իմ վրա: Այգլին վերջին տրոյությունները փոխանցեց ինձ: Նա ասաց, թե տարեվերջին տեղի է ունենալու մի մեծ հավաք, որտեղ վերջնականապէս ընդունվելու է Աշխարհի սահմանադրությունը: Այդ հավաքը տեղի էր ունենալու Եգիպտոսում՝ Ալեքսանդրիայում:

Այլեւս չէի կարող սպասել, պետք է բացահայտել իմ գիտցածները: Գնացի Հանսինգտոն հրատարակչատուն: Հունվարին սկսեցի աշխատել այս գրքի վրա:

1991-ի ձմրանը որոշել էի մասնակցել «Աշխարհի սահմանադրական հավաք»-ին: Փետրվարի վերջերին ստացա մի փաթեթ, որտեղ ստում էին, թե ժողովի վայրը փոխվել է. այն տեղի է ունենալու Պորտուգալիայում՝ Լիսաբոնի մոտ: Ուսումնասիրելով փաթեթը, նկատեցի, թե մասնակցության նոր և խիտ պայմաններ են դրվել, մասնավորաբար պահանջվում էր «փաստել», թե քաջալերում եմ հավաքը ու երա նպատակադրած Աշխարհի կառավարությունը:

Դա կարելի էր անել մի քանի ձևերով. 1) հավաքել 7 հարյուր կամ ավելի ստորագրություն, 2) հրատարակել ձանուցումներ 25 հազար օրինակից ավելի տպագրվող թերթերում, 3) գտնել 5 հազար եւ ավելի անդամ ունեցող կազմակերպություն, որ վավերացնի Աշխարհի միությունը և ընդունի Աշխարհի սահմանադրությունը:

Դժվար էր: Չէի կարող ստորագրություններ հավաքել մի քանի համար, որին ես չեմ հավատում, մասնավորաբար այսպիսի ստանալական միջոցառման համար:

Երկար մտածելուց հետո որոշեցի չմասնակցել: Սակայն եթե անի ճշմարտությունը (այսինքն՝ ես ժողովին չեմ մասնակցելու որովհետեւ խիղճս հանգիստ չէ եւ գրում եմ մի զիբբ, որը պիտի

բացահայտի ձեր կազմակերպության գործունեությունը, եսայն, թերեւս ողջ չմնայի ձեզ փոխանցելու համար այս պատգամը (գիրքը):

Երկար մտածելուց հետո, մի նամակ գրեցի: Նամակը բնադատական էր: Գրեցի Ալզլիին. «Ինչ որ անում ես շատ փտանգավոր է: Դու փտանգում ես բեզ ենթակա մարդկանց ֆիզիքական եւ հոգեկան գոյությունը, քո աշխատանքը սխալ հիմքերի վրա է դրված, դա համաստվածություն է: «Լոր դար» շարժումը միայն քառս եւ կործանում պիտի առաջացնի: Բարեհաճի՛ր քո արածները վերաբնեւէլ:

Բոլոր նրանք, ովքեր կարդում են այս գիրքը, թող իրենց կարծիքը նամակով հայտնեն Ալզլիին, ստիպեն որ ետ կանգնի իր վատ նպատակներից: Հասցեն ու հեռախոսի համարները կցտեսեք գրքի վերջում: Եթե վախենում եք ձեր անունը հայտնելուց, մի նշեք ձեր անունն ու հասցեն: Բայց շատ գրեցե՛ք: Եթե իմանան հակաճառողների թիվը՝ իրենց գործունեությունը թերեւս կդադարեցնեն:

Ես շատ չավ եմ ուսումնասիրել սրանց գործունեությունը, եւ վստահ կարող եմ ասել՝ համաշխարհայնացնողների վերջնական նպատակն է իրագործել Մեկ-աշխարհ կառավարությունը եւ գործադրել «Աշխարհի նոր կարգ»-ը:

ԿԱՊԵՐԸ

ԱՄՆԸ-ի նպատակակետն է աշխարհի միությունը: Ըստ 1987 թ. փետրվար-ապրիլի տեղեկագրի, «Աշխարհի միության» գլխավոր քարտուղար Արի Ա. Բ. Պատելը ԱՄՆԸ-ի պատվակալ նախագահն է, իսկ Միության առնետպետ Լ. Ա. Բասն՝ ԱՄՆԸ-ի երկու փոխ-նախագահներից մեկը: Ֆիլիպ Ալզլին էլ «Աշխարհի միության» անդամ է: «Աշխարհի միության» նոր գլխավոր քարտուղարն է Սամար Պաան, որ ԱՄՆԸ-ի պաշտոնյա է:

«Աշխարհի միությունը» 1961-ին միացել է «Լյուսիի ժառանգության» հիմնած «Բարյացական աշխարհ» ընկերության հետ: Ինչպես նշել ենք վերեւում, «Լյուսիի ժառանգություն»-ը «Աստվածինաստության ընկերության» մասնաճյուղն է, որ ազատ մաստնու-

թյան բարձրագույն աստիճաններին է հասել: «Լյուսիի ժառանգության» անցյալ եւ ներկա անդամներ են Ռոբերտ Մակհամարյան, Ռոնալդ Ռեյզանը, Հենրի Քիսկեդերը, Դեյվիդ Ռոքֆելլերը, Պոլ Ռուկերը, Ջորջ Շուլցը – այն նույն մարդիկը, ովքեր ղեկավարում են Արտաքին հարաբերությունների խորհուրդն ու Ետակոլմ հանձնաժողովը:

ԱՀԽ/ԱՄՆԸ-ի, «Լյուսիի ժառանգության» եւ «Աշխարհի միության» միջեւ գոյություն ունեցող կապը շատ հստակ է: Պետք չէ մոռանալ, որ ԱՀԽ-ը Միավորված ազգերի կազմակերպության ետին կանգնած իսկական ուժն է:

Մեկ ուրիշ կազմակերպություն, որն աշխատում է Ալզլիի ԱՄՆԸ-ի հետ, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդն է (ԵՀԽ): ԵՀԽ-ի նախագահ Մինտրա Ռեդդը «Աշխարհի ժամանակավոր խորհրդարան»-ի պատվակալ նախագահներից է 1975 թ.-ից: Մա ԵՀԽ-ի գաղտնի ծրագրի ամենաբացահայտ ապացույցն է: Այս կազմակերպության մաս է կազմում Ամերիկայի Ավետարանական եկեղեցու ղեկավարությունը, որը փորձում է Հռոմի եկեղեցուն միանալ: ԵՀԽ-ի նպատակն է «միավորել» քրիստոնեությունը որպեսզի կարողանա հեշտությամբ հիմնել «Աշխարհի նոր կարգ»-ը: Այսպիսով ավելի հեշտանում է հասկանալը, թե Նորհուրդն ինչու է քաջալերում միահավատությունը (աշխարհի բոլոր կրոնների միավորումը): Այս միավորումը հարկավոր է որպեսզի մարդկությունն ընդունի Աշխարհի կառավարությանը:

ԱՄՆԸ-ի մասին կարող եք պարզ գաղափար կազմել իմանալով, թե նրա նախագահը քանի՞ կազմակերպության անդամ է: Ալզլին անդամ է «Աշխարհի միության», «Մանկավարժների միջազգային ընկերության», «Միջազգային ներում» կազմակերպության, «Ամերիկյան քաղաքացիական ազատությունների միության», «Քաղաքական եւ սոցիալական գիտությունների ամերիկյան ակադեմիա»-ին, «Աշխարհի մանկավարժների ընկերության», «Արբանյակային ընկերության», «Միջառնի ապագա ցանց»-ին, հիշելու համար մի քանիսին: Դժվար է երեւակայել, թե նա զբաղած լինելով իր բուն պաշտոնով, ինչպե՞ս է ժամանակ գտնում ուտելու կամ քնելու, տակավին՝ 1958 թ.-ին Կոնգրեսի թեկնածու լինելու:

Երեւոյթները ցույց են տալիս, որ «Ապագա աշխարհի ընկերություն»-ն է Հռոմի ակումբի կողմից մկրտված «Աշխարհի աստղեր»:

Մեկ-աշխարհ կառավարության քաղաքական, տնտեսական եւ հոգեւոր նպատակները միանում են «Ապագա աշխարհի ընկերության» մեջ, որը համաշխարհայնացնող բոլոր ընկերությունների հասարակ հայտարարն է:

«Ապագա աշխարհի ընկերության» հետ պետք է զգուշ լինել:

«Նոր դար»/Մեկ-աշխարհ շարժումը իր նիստերին քննարկում է ամերիկյան դավադրությունը, միջազգային կառավարման ապագան, համաշխարհային մտածողությունը, եւ այլն: Նրա ամենից նշանավոր նիստը տեղի է ունեցել 1984 թ.-ին, որի ընթացքում քննարկվել է Աշխարհի կառավարության ծրագրավորումը: Այս ժողովից է ծնվել ԱՄՆԸ-ը, որի պարտականությունն է հաջողացնել «Աշխարհի նոր կարգ»-ը:

ԱՄՆԸ-ն ստեղծեցին որպէսզի ժողովուրդը չընդվզի եւ տրվի այն երեւոյթը, թէ սա ժողովրդական շարժում է: Այդ իսկ պատճառով՝ մյուս կազմակերպությունների ժամանակավոր հանգիստ տվեցին: Արտաքին երեւոյթը սա է «Մենք՝ ժողովուրդը» այս պատմական շարժման, «աշխարհի խաղաղության եւ միության» տերն եք:

1984-ի ժողովին ներկա են եղել «Ամերիկյան հումանիստական ընկերություն»-ը, Հռոմի ակումբը, ԱՀԽ-ը, «Աշխարհ 2000 ծրագիր»-ը, «Համաշխարհային խաղաղություն»-ը, «Մասկավարժների միջազգային ընկերություն»-ը, «Կանանց ազգային կազմակերպություն»-ը, «Մովալների ծրագիր»-ը, Միջազգային արժութային հիմնադրամը, Համաշխարհային բանկը, Եռակողմ հանձնաժողովը, եւ «Ապագա աշխարհի ընկերություն»-ը: Բազմաթիվ ընկերությունների շարքին ներկա էին «Էլ, Թի, Էնդ Թի»-ն, «Ջեներալ էլեկտրիկ»-ը, «Ջեներալ մոթորզ»-ը, «Այ, Բի, Էւ»-ը եւ «Քսերոքս»-ը: Նշենք, որ «Ջեներալ էլեկտրիկ»-ը, «Ջեներալ մոթորզ»-ն ու «Քսերոքս»-ը Դեյվիդ Ռոքֆելլերի Եռակողմ հանձնաժողովի նեցուկ են:

Ներկաները նախօրոք գիտէին, թէ քննարկվելու է Աշխարհի կառավարության ծրագիրը: Հետեւաբար, բոլորն էլ պաշտպանում էին «Ապագա աշխարհի ընկերության»-ն ու ԱՄՆԸ-ի Աշխարհի կառավարությանը:

Վերելը շարադրվածները ԱՄՆԸ-ի գործունեության մի մասն են: Դրանք ստացալեռի երեսացող մի մասն են: Այս դավադրության մեջ հարյուրավոր ընկերություններ ընդգրկված են:

Գլուխ 5

ԱՁԱՏ ՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ - ԹԱՔՆՎԱՏ ՈՒԺԸ (Արագացուցիչը)

ԱՄՆԸ-ի գործունեությունն ուսումնասիրել սկսելուց երկու տարի ատջ գտա, որ «Աստվածիմաստության ընկերություն»-ն ու նրա քույր կազմակերպությունները կարելու դեր են ստանձնել «Նոր դար» շարժման հիմնադրության մեջ: Սա պարզ է, նորություն չէ «Նոր դար» շարժման ուսումնասիրողների համար: Մակայն, 1985-ին սկսեցի կասկածել, թէ գոյություն ունի ավելի կարելու մի տեսիլնող, որ դեկավարում է Մեկ-աշխարհ կառավարության տնտեսական, քաղաքական եւ հոգեւոր տարրերը: Կասկածն սկսեց, երբ խոսում էի իմ դասընկերներից մեկի հետ: Նա ուզում էր գովազդ տեղադրել զանազան պարբերականներում, այդ թվում՝ «*Հորը դարը*» հանդեսում (այժմ դարձել է «*Սթրոքիչ ռայթ*» [*Հռոյախղական ծես*] - *խմբ./* հանդես): Իր հարցին պատասխանում են մատնական վերտառություն կրող նամակով: Նամակի վերջում գրվել էին՝ «Աշխարհի Գլխավոր մայր խորհուրդ», «33-ի Գլխավոր խորհուրդ» եւ «Վերջին աստիճան»:

Ի՞նչ կապ կար «Նոր դար» շարժման եւ ազատ մատնության միջեւ: Ամիսներով սերտեցի այս հարցը: Նախ ենթադրեցի, թէ հանդեսին անունը պատահական նմանություն է եւ ոչ մի կապ գոյություն չունի երկուսին միջեւ: Մակայն, «Լյուսիի ժառանգության» հրատարակած, Ալիս Բլոյիի երեսուն տարիների աշխատանքի ամ-

փոփոխման եղող «Երեսույն Տարիների Աշխատանք» գիրքը հակառակն էր փաստում (Ալիս Բեյլին եղել է «Աստվածիմաստության ընկերության» ղեկավարը, նաև «Լյուսիի ժառանգության» ու Արգան (գաղտնի) դպրոցների հիմնադիրը): Ըստ այդ հրատարակության, Ալիս Բեյլին հաճախակի ցուցմունքներ է ստացել իր հոգևոր առաջնորդ, ազատ մասն Ջվալ Խուլուից, որին դիմում էին որպես «Տիբերյան վարպետ»:

Ալիս Բեյլին գրել է նաև «Նվիրապետության արտաքին մարմնացումը» գիրքը:

Երբ շարունակեցի ուսումնասիրություններս, բացահայտեցի, որ Բեյլիի նախորդները տիկին Պլավատսկայան, «Աստվածիմաստության ընկերության» հիմնադիրը էր նրա հաջորդը Աննի Բեսանթը նույնպես ընդգրկված են եղել ազատ մասնության շարքերում (պատմականորեն՝ միայն տղամարդիկ ընդունվում էին մասնության շարքերում. ֆրանսիական «Ազատ մտածողներ» օթյակը 1893 թ.-ին որոշում է նաև իգական սեռին ընդունել):

Կասկած չարթնացնելու համար, Լուսավորյալ ազատ մասնները որոշում են «Նոր դար» շարժման կազմակերպումը մասն կանանց հանձնել (Պլավատսկայա, Բեսանթ, Բեյլի):

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ

Համոզվելով, որ ազատ մասնությունը շատ մոտ կապեր ունի աստվածիմաստության եւ, հետեւաբար, «Նոր դար» շարժման հետ, որոշեցի շատ ավելի մոտիկից ծանոթանալ մասնական կազմակերպությանը, ուսումնասիրել նրա ծնունդը, նպատակը եւ հավատքը: Լավ հասկանալու համար այս կյուրերը, հարցաքննեցի ներկա եւ նախկին մասններ, որոնցից ութն 32 կամ 33 աստիճան ունեին: Այդ խոսակցություններից եզրակացրի, որ Մասնական կարգին միանում են օթյակի ճնշման տակ կամ անդամակցելու սիրով: Ուրիշներ միանում են իրենց սոցիալական վիճակը բարելավելու համար. նշանավոր գործարարներ եւ պետական պաշտոնյաներ մասն են: Կա նաև ժառանգակաությունը:

Գործող մասնների վկայությունը հիմնականորեն տարբերվում է Կարգը թողածների վկայությունից: Գործող մասնները գաղափար անգամ չունեին Կարգի կրոնական նպատակներից: Նրանք հավատարիմ են օթյակին, եւ ասում են, թե ազատ մասնությունը բարեգործության վրա հիմնված միջազգային գաղտնի եղբայրակցություն է: Մյուս կողմից, նախկին մասններն ասում էին, թե կազմակերպությունը հակաքրիստոնեական է եւ շատ վտանգավոր, մասնավորաբար բարձր մակարդակներում, ավելացնելով, որ նա սատանայական ներշնչում ունի:

Չկարողացա հասկանալ, թե ինչն է այսբան տարբերություն կար նախկին եւ ներկա անդամների համոզմունքներում: Դրանից եզրակացրի, որ գործող անդամները երդման տակ են եւ չեն կարող բացահայտել ինչ որ զին են մինչեւ հասնեն մի տեղ, ուր Կարգի իսկական նպատակները կբացահայտվեն նրանց:

Այս երկրում գտնվող երեք միլիոնից ավելի անդամների մեծամասնությունը կարծում է, թե ազատ մասնությունը վեհանձն ու առաքինի ընկերակցություն է: Մինչդեռ կուրորեն երդվելուց ու եւթարկվելուց առաջ լավ կանեն որ Կարգի թաքուն ծրագիրները իմանան:

Մասնն լինելու համար պայման է երաշխավորի միջոցով դիմում ներկայացնել: Նոր անդամը նախ միանում է կապուլյա օթյակին: Կազմակերպությունը բաղկանում է 3 աստիճաններից. 1) աշակերտ, 2) արհեստակից, 3) Վարպետ մասն: Նորեկներին ասում են, թե յուրաքանչյուր աստիճան բարոյական դասեր է սովորեցնում: Աստիճանն անցնելու պայմանն է մասնակցությունը լուսաբանող ծեսերին:

Երբ անդամն ստանա երրորդ աստիճանը, նա անցնում է Հառաջացած մասնության երկու ճյուղերին. դրանք են Շոտլանդական ծեսը (Scottish Rite) եւ Յորքյան ծեսը (York Rite): Շոտլանդական ծեսն ունի 29 աստիճան՝ 4-րդից 33-րդ աստիճանները, եւ, հավանաբար, երկու ճյուղերից ավելի հոգրն է:

33-րդ աստիճանը չես կարող շահել Շոտլանդական ծեսի մյուս աստիճանների նման. դա ընծայվում է Գլխավոր խորհրդի անդամի կողմից: Այսպիսով, Խորհուրդն է ընտրում թե ով է լինելու

ներքին շրջանակի մասնակից: Ըստ Հյուսիսային իրավասության Գլխավոր խորհրդի՝ այս աստիճանը տրվում է այն անդամին, որ «եղբայրակցությանը կարելու է ծառայություն է մատուցել կամ այդ ծառայությունը վարել է բերել Կարգին»:

Եթե մասնը նախընտրում է առաջանալ Յորքյան ծեսում, պետք է ստանա եւս 10 աստիճան՝ հետևելով ձեռքով: 4) Արժանի վարպետ, 5) Անցյալ վարպետ, 6) Հոյակապ վարպետ, 7) Թագավորական կամար, 8) Թագավորական վարպետ, 9) Ընտրյալ վարպետ, 10) Գերեզյակապ վարպետ: Իշխանության աստիճաններն են. 11) Կարմիր խաչի ասպետ, 12) Մալթայի ասպետ եւ 13) Տաճարի ասպետ:

Շտյանդական ծեսի 33-րդ աստիճանի հասնողներն ու Յորքյան ծեսի Տաճարական ասպետները ընտրությունն ունեն միանալու Խորանին եւ պաշտոնապես կոչվում են Հին արաբական կարգի խորհրդավոր խորանի ազնվականներ:

Տարբեր մաստնական մասնաճյուղեր ընդունում են նաեւ ԳՐՈՏՏՈՆ եւ Լիբանանի բարձր մայրիկ:

Տիկինների խմբերն ընդգրկված են «Արևելյան աստղ», «Անթաամ» ու «Ճշմարիտ բարեկամ» կարգերում: Տղաքը կարող են միանալ «Ղը Մուլա» եւ «Շինարարներ», աղջիկները «Յուստեր» եւ «Շյաձան» կարգերին:

Աշխարհի գաղտնի ընկերությունների մեծ մասը ազատ մաստնությանն ընդունում է որպես մայր կազմակերպության, որտեղից բխում են իրենց արարողությունները, ծեսերը եւ հավատքը:

Նախկին մաստները ինձ ասացին, որ ընթերցեմ որոշ մաստնական գրքեր, ինչպես «Բարդակալություն եւ ուսմուկը» եւ Մակ-Քեյի «Ազատ մաստնության հանրագիտարան»-ը: Այս գրքերում կարելի է ազատ մաստնության մասին ամեն բան գտնել: Հակառակ իմ գործ դրած ջանքերի, այն ժամանակ չկարողացա այդ գրքերը գտնել: Այդուհանդերձ, գտա «Ազատ մաստնությունը եւ ինչ աստվածները» գիրքը՝ առաջին անգամ տպագրված 1921-ին:

Այս գիրքը «Նոր դար»-ի հանդես է: Նրանում շատ հստակ նշումներ կան գալիք մեկ-աշխարհ կրոնի մասին, որը ազատ մաստների նպատակն է: Այս եւ այլ մաստնական գրություններ

ցույց են տալիս, որ ազատ մաստները արհամարհում են մարդին (մարդը բարձրացնում են Աստուծո զատիճանին) եւ հավատում են աստղաբաշխության:

Արևելյան ջանքերս՝ էլ ավելի խորացա ազատ մաստնության պատմության մեջ:

ՄԱՍՏՆՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԸ

Ամիսներ ապարդյուն աշխատելուց հետո 1986-ին վերջապես մի դուռ բացվեց: Մի կիրակի օր եկեղեցի էի գնացել: Ինձ մտնեցավ մի ծեր կին եւ հարցրեց, թե որեւէ բան գիտե՞մ ազատ մաստնության եւ «Նոր դար»-ի վրա նրա ազդեցության մասին: Պատասխանեցի, թե կապ գոյություն ունի՝ բայց դեռես ինձ համար հասկանալի չէ Մաստնական կարգի դերն այդ բոլորի մեջ:

Տիկինն ինձ ասաց, թե անցյալ քսան տարիներին ուսումնասիրել է Մաստնական շարժումը եւ ունի նյութերի հավաքածո (մեծ մասը մահացած մաստների այրիներից): Նա պատրաստ էր ինձ հանձնելու ինչ ուներ: Բոլորը վերցրի:

Հաջորդ ամիսներին ուսումնասիրեցի մաստնության մասին գրված հայտնի գրքեր բոլոր հրատարակությունները: Անընդհատ հանդիպում էի հետևյալ անուններին՝ Լուսավորյալներ, Տաճարական ասպետներ, Վարդախաչյաններ, որոնք նախապես ինձ թվում էին, թե առասպել են: Բայց շուտով համոզվեցի, որ ո՛չ միայն նրանք գոյություն ունեն, այլ՝ որ ազատ մաստնությունը գնաստիկության եւ հին խորհրդավոր կրոնների շարունակությունն է:

Շատեր ազատ մաստնության ծնունդը տեղադրում են 1717-ին, բայց մաստնական տեղեկագիրներ նշում են, թե կազմակերպության պատմությունը շատ ավելի հին է:

Մի շարք սուտ կրոններ եւ ընդհատակյա շարժումներ էլ ազդել են Մաստնական կարգի վրա, բայց նշվածներն են այն գլխավոր աղանդներն ու կրոնները, որոնք վրա հիմնվել են ազատ մաստնությունը եւ «Նոր դար» շարժումը: Անունները փոխվում են, սակայն գաղափարը, ռազմավարությունն ու նպատակը մնում են նույնը:

Ազատ մասնության եւ կազմակերպված խորհրդապաշտության պատմությունը նույնն է, մասնավորաբար արեւմտյան աշխարհում: Կազմակերպված խորհրդապաշտության համապարփակ պատմությունը տվել է Ալբերտ Փայրը իր «Ազատ մասնության Շուտանդական ձեռքի հին եւ ընդունված բարոյականության ուսմունքը» 861 էջանոց գրքում: Փայրը, օգտագործելով իր տրամադրության տակ գտնվող աղբյուրները (ևս եղել է ազատ մասնության երկար տարիների ղեկավարը 1859-1891), կարողացել է արձանագրել խորհրդավորությունների ժամանակագրությունն ու տարածումը հին Բաբելոնից մինչև մեր օրերը: Գրեթե նույնը կա «Ազատ մասնությանի ազդարարը» գրքում:

Այս բոլորը կարելի է գտնել մասնական գրադարաններում, օրինակ՝ Եվրոպայում՝ «Ազատ մասնությանի սրահ» կոչվող գրադարանում, «Գրեյ» բուին՝ փողոց, Լոնդոնի սրտի վրա: Գրադարաններ կան նաև ԱՄՆ-ում, մեծագույնը գտնվում է մայրաքաղաք Վաշինգտոնի Տաճարի տան մեջ, որը Ազատ մասնության Աշխարհի Մայր Գերագույն խորհրդի (մասնաճյուղի կառավարությունը) կենտրոնատեղին է, որտեղ գտնվում են հոյակապ կառուցված Մասնական խորանը եւ հսկա գրադարանը (50-60 հազար գիրք):

Եթե ազատ մասնությունը սոցիալական կազմակերպություն է, ինչպես փորձում են փաստել, ապա ինչպե՞ս բացատրել անհավատալի թվով գրքերի գոյությունը: Ո՞ր սոցիալական կազմակերպությունն ունի երկուբուկեն միլիոն փաստաթուղթ՝ եւ 60 հազար տպագրված գիրք: Մա մասնով է տալիս, թե պարզ հասարակության ծառայության համար հիմնված մի խմբից շատ ավելի մեծ մի քան է ազատ մասնությունը:

Այս բոլորի սկիզբը հին քուրմերն են: Ժամանակի ընթացքում գաղտնի ձեսերն ու հավատքը գրանցվել եւ հասել են հին հույն փիլիսոփաներին: Ըստ մասնական աղբյուրների՝ այս տեղեկությունները սերնդից սերունդ անցել են խորհրդապաշտ քահանաների միջոցով: Մասնական կարգը հավակնում է լինել այդ շղթայի վերջին օղակը, որ պահում ու պահպանում է այդ հին գիտելիքները:

Կարգի ստանալական ժառանգության մանրամասնությունները տվել են մատու պատմաբաններ Փայրը, Մակելեյը, Հելվոդը եւ Հոլը: Այնուամենայնիվ, հասկանալու համար Մասնական կարգի ամբողջական դերն ու տեղը, մի քիչ խորանալ է պետք աշխարհի պատմության մեջ:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԳՆԱԿ

Ջրհեղեղից հետո աշխարհը մարքավել էր ամեն տեսակ կեղտից: Մնացել էր միայն մեկ ճշմարիտ ընտանիք: Բարկացած մարդկանց կատարած մեղքերից Աստված պատժել էր նրանց: Բայց մի քանի սերունդ հետո մարդը նորից սկսել էր զեղծել, մեղք գործել: Դա է փաստում Բաբելոնի աշտարակի կառույցը, որն առաջին զիկկուրատն էր (պաշտամունքի աշտարակ, որի գագաթին կառուցվում էր խորանը): Համաստվածության հովանու տակ թաքունն ու խորհրդավորությունն սկսեցին տարածվել: Աբրահամի ժամանակ մարդկությունը խաթարված էր: Սոդոմ եւ Գոմորի օրերն էին, որտեղ անասնությունն ու անբարոյականությունը բարձր համեմատությունների էին հասել:

Աստված Մովսեսի միջոցով մարդկությանը պարտադրեց գոհ մատուցել մեղքերի քավության համար: Մարդկությունը շարունակեց մեղք գործել: Աստված ուղարկեց իր Որդուն եւ գոհաբերեց Նրան՝ մարդկության մեղքերը քավելու համար:

Ներելու եւ հավիտենական կյանքի խոստումը Հիսուսի միջոցով փոխանցվեց մարդկության: Շատեր չեն ընդունել Հիսուսին, Իրան ու Հեղկաստանը մերժել են այդ խոստումը: Այսօր, քսան դար ենթ, Մայրագույն Արևելքը չի ընդունում Քրիստոսին: Հնագույն համաստվածությունը՝ հինդուականությունը շարունակում է իշխել հնդկ ժողովրդի վրա:

Միջերկրականի ժողովուրդները ավելի հեշտ ընդունեցին Աստծուն, եւ, մի քանի սերունդ անց, Հունաստանի, Հռոմի եւ Եգիպտոսի քրմերը կորցրին իրենց հակակշիռ ժողովուրդների վրա ու անցան ընդհատակ, իրենց հետ տանելով գաղտնիքներն ու ավանդությունները:

Այդ գաղտնիքները սերնդից սերունդ փոխանցվելով անցան Աբեմուտք: Այսօր այն ավելի լավ սերտվել է, քան քրմերի օրերին: Սատանայի նպատակն էր գաղտնի ուսմունքն ու քրմերին կենդանի պահել մինչև նրանց թիվն ու ուժը կբավարարեն վերատիրանայու կորցրածին: Գնոստիկությունը համաստվածության ամենից ազդու և քնդունված ձևն է: Խելացի է և խաբերա:

Ըստ Ալբերտ Փայքի՝ «Գնոստիկությունը Կաբբալայի մեկ ճյուղն է: Կաբբալան գաղտնի գիտությունների բանալին է: Գնոստիկությունը ծնվել է Կաբբալայից»:

Կաբբալան խորհրդավորությունների միակ մեկնությունն է և ուրի պարտականությունն է խաբել Աստուծո ընտրյալներին: Հրեաները Կաբբալան գործածում էին մարգարեների հայտնություններին հակաճանաչելու համար:

ԳՆՈՍՏԻԿՈՒԹՅՈՒՆ

Մատնական գրականության մեջ հատուկ տեղ է հատկացվել գնոստիկության: «Բարոյականություն և ուսմունք» գրքի 40 էջեր տրամադրվել են գնոստիկության և ազատ մատնության կապը բացատրելու համար:

Գնոստիկությունը զարգացել է գանազան աղանդներում, ինչպես 3-րդ դարի մանիքեությունը (որը սովորաբար կապում են գնոստիկության հետ), 7-րդ դարի պավլիկյանները և 9-րդ դարի բոգոմիլները: Անկարելի է այս գրքի շրջանակում խոսել գնոստիկության բոլոր մասնաճյուղերի մասին, բայց բոգոմիլների ուսմունքը կարող է որոշ գաղափար տալ, թե ինչի՝ էին հավատում Տաճարական ասպետները, ովքեր ազատ մատնեների ուսուցիչներն են եղել:

«Գերագույն հայրը՝ Աստված ուներ երկու որդի. մեծը կոչվում էր Սատանա, իսկ փոքրը՝ Հիսուս: Մատանուլը նստում էր Աստուծո աջ կողմը և կառավարում էր երկնային աշխարհը: Նա գոռոզ էր, և, ընթրատանալով Աստուծո աջն, վտարվեց դրախտից: Հետո Սատանա էլը ստեղծեց տեսանելի աշխարհը, արեւը, լուսինը, աստղերը, ապա ստեղծեց մարդին և օձին, որին իր նախարար

ևշանակեց: Ապա եկավ Քրիստոսը, որ ցույց տա դրախտի ճանապարհը, բայց Նրա մահը ազդեցություն չթողեց սատանայի վրա: Եվ երբ Նա դժոխք իջավ՝ չկարողացավ Սատանա էլի տեղը գրավել: Ուրեմն, սատանան ոչ միայն «այս աշխարհի իշխանն է», այլև արարիչը: Հետեւաբար, սատանան ամենից ուժեղն է ու սիրելին»:

Գնոստիկությունը սատանայապաշտություն է, միեւնույն ժամանակ՝ հակաքրիստոսություն:

Այս զգացումն ու հավատքը 12-րդ դարում անցան Տաճարական ասպետներին:

ՏԱՃԱՐԱԿԱՆ ԱՍՊԵՏՆԵՐ

«Տաճարական ասպետներ»-ը (Knights of the Temple) գինվարական և կրոնական մի կարգ էր: Հիմնվել է Երուսաղեմում 1118 թ.-ին, ինը ֆրանսիացի ասպետների կողմից, Հույզ դը Պայեն դը Շամպայնի և Գոդրիքուս դը Սեն-Օմերի ղեկավարությամբ: Նպատակն էր իսպանիաների օրերին Սուրբ երկիր ուխտի գնացողներին պաշտպանել: Նրանք իսպանիաների հետ ճակատամարտերի մասնակցեցին և հռչակվեցին իրենց կատարած քաջագործություններով: Երուսաղեմի թագավոր Բաղդուին Բ-ը իր պալատի - որ կառուցվել էր Սողոմոնի տաճարի վայրում - քառօրյա տվեց ասպետներին: Այստեղից էլ՝ նրանք կոչվում են Տաճարի կամ Տաճարական ասպետներ:

Ակրբանական շրջանում միայն ազնվականները կարող էին անդամակցել Տաճարական ասպետներին: Հետագայում կարգն իր շարքերը բացեց բոլոր նրանց առաջ, ովքեր կարող էին նրա նպատակները հաջողացնել: Կարգը արագորեն մեծացավ և Հռոմի պապի հատուկ պաշտպանության տակ մտավ 1128-ին:

Իսպանիաների ժամանակ Տաճարական ասպետները յուրաքանչյուր քրիստոնյա երկրում ունեին գրասենյակներ, ուր հավաքագրում էին իսպանիաների բանակներին և նյութական օգնություն էին հավաքում ուխտագնացների համար: Ուխտագնացներն, իրենց հերթին, նվերներ էին տալիս կարգին, որպեսզի Երուսաղեմ էրթո ու դարձի ճանապարհին պաշտպանվեն:

Մեծամասնությամբ ազնվականներից բաղկացած Տաճարականները հողային նվերներ էին ստանում եվրոպական երկրների իշխանություններից: Այս հողային և կուլթական նվերները Տաճարական ասպետներին հարուստ և հզոր դարձրին:

1187 թ.-ին Մակեդոնիոնը գրավեց Երուսաղեմը: Կարգը իր կենտրոնատեղին փոխադրեց Աքրա: Երբ 1291 թ.-ին մուսուլմանները գրավեցին Աքրան, նրանք Կիպրոս տեղափոխվեցին: Մակայն, մինչ այդ, Տաճարականները Եվրոպայի բանիչ էին վերածվել, Կարգն այլևս զինվորական չէր: Նրանք ազդեցիկ էին մասնավորաբար Իսպանիայում, Ֆրանսիայում և Անգլիայում: Յուրքաանյուր բաժանումներ ենթակա էր Կարգի Մեծ վարպետին:

«**Բարոյականություն և ուսմունք**» գրքում կարդում ենք. «Նրանց նշանաբանն էր այնքան հարստանալ, որ կարողանան աշխարհը գնել»: Այդպես էլ լինում է 1312 թ.-ին միայն Եվրոպայում նրանք ունեին 9000 ավաստապետություն, այսինքն՝ ազնվականի կամ իշխանի պատկանող հողատարածք:

Տաճարական ասպետները մերձավորարևելյան ժամանակաշրջանին ազդվել էին գեոստիկներից և հաշվաշին/աստասեններից (արաբական զինվորական մի դաժան խումբ): Փաստ է, որ Տաճարական ասպետների հիմնադիրների մի մասը մարզվել էր հաշվաշինների մոտ: Տաճարականները թեև ընդունել էին գեոստիկների հավատքը, բայց կազմակերպչական և քաղաքական հատկանիշները ընդօրինակել էին հաշվաշիններից:

Տաճարականներն են աշխարհը գրավելու առաջին փորձը կատարողները:

1307-ին Կարգի մի նախկին անդամ Տաճարականներին ամբաստանում է հերետիկոսությանը և անբարոյականությանը: Ֆրանսիայի Ֆիլիպ Դ թագավորը քննել է տալիս հարցը: 1307 թ. հոկտեմբերի 13-ին թագավորը բանտարկում է Տաճարականներին, իսկ հավատարենիչը նրանց բանադրում է: Ասպետները խոստովանում են մի շարք ոճիրներ և ընդունում են, որ անդամակցության ժամանակ երդվում էին Քրիստոսի դեմ: Կղեմես Ե պապը մեղքում է նկատի առնել հարցը և նույնիսկ նրանց խոստովանությունները: Նա շարունակում է պաշտպանել Կարգին: Մակայն,

երեւելի որոշ անհատների ճնշման տակ ընդունում է նրանց հարցաքննել նեղ շրջանակում: Մի ասպետ խոստովանում է, որ եղբայրակցության անդամության ընդունման ժամանակ պարտավոր են թթել խաչի վրա և գանազան անթոքեն ու անպատշաճ արարքներ կատարել: Մրա վրա, պապը որոշում է ֆրանսիացի 72 ասպետների հարցաքննել: Տաճարականների Մեծ վարպետ ժակ դը Մոլան և Կարգի ֆրանսիացի ղեկավարները հարցաքննվում են 3 կարդինալների, 4 նոտարների և ուրիշների ներկայությամբ: Հարցաքննության ընթացքում տաճարականները նորից խոստովանում են իրենց ոճիրները (թագավորի առաջ խոստովանել էին ծեծով, իսկ այստեղ՝ արդեն առանց ծեծի): Հարցաքննությունը բացահայտում է, որ Տաճարական ասպետները խաբեբարության վարպետներ են եղել նրանք ատերեույթ ծառայում էին Քրիստոսին, իսկ ծեսերում պաշտում էին սատանային:

Այդուհանդերձ, պապը մեղքում է դատապարտել ամբողջ Կարգին՝ մի վարպետի և մի քանի եղբայրների գործած հանցանքների համար: Նա որոշում է պապական հանձնաժողով կազմել հարցը քննելու համար Փարիզում, 1309-ին: Մինչ այդ, լուրը տարածվել էր, բողոքներն սկսել էին բազմանալ: Իտալիայի և Ֆրանսիայի նման, Անգլիայի, Գերմանիայի, Իսպանիայի և Պորտուգալիայի տաճարականները դատվում են, բայց մեծամասնությունը անպարտ է արձակվում: Ֆրանսիայի Ֆիլիպ Դ-ը միակն է, որ շարունակում է հավանել Կարգի անդամներին և շատերի դեմ մահավճիռ է արձակում՝ նրանց մեղադրելով դավաճանության և սատանայապաշտության մեջ և 1310 թ. մայիսի 12-ին Փարիզում 54 տաճարականների ողջ այրել է տալիս: 1312-ին Կղեմես Ե-ը որոշում է Կարգը վերացնել: 1314 թ. մարտի 18-ին Մեծ վարպետ ժակ դը Մոլային և նրա երեք պաշտոնակատարներին այրում են (վերջիններիս որպես հիշատակ անվանել են «Ղը Մոլա» մատնական կարգը պատանիների համար):

Ղը Մոլայի մահից հետո մեծ թվով տաճարականներ պատանակում են Պորտուգալիայի Դինիզ Բ թագավորի մոտ: Կարգը ժամանակավորապես նահանջում է: Հսկայական հողատարածք-

ներ գրավվում են: Տաճարականներն անցնում են ընդհատակ եւ շարունակում են գործել այդ պայմաններում:

Չմահացած, Դը Մոլան հիմնում է չորս Ոստանական օր-յակներ: Նեապոլը՝ Արեւելքի, Էդինբուրգը՝ Արեւմուտքի, Մոսկովի-ւրը՝ Հյուսիսի եւ Փարիզը՝ Հարավի համար:

Մա՛ է արդի ազատ մաստնության սկիզբը:

ՎԱՐՈՒՆԱԾՅԱՆՆԵՐ

Տաճարական ասպետների մնացորդացը 1300-ականների սկզբներին հիմնում է մի նոր գաղտնի կարգ (կամ միավորվում է նրա մեջ), որին կոչում են Վարդ-Խաչ կարգ (Rosecrucians, Ռոզե-կրեյցերներ կամ Վարդախաչյաններ): Շատ քիչ բան հայտնի է այս կարգի ծննդի մասին, քանի որ հիմնադիրները կարողացել են թա-րուն ու ծածուկ աշխատել: «Վարդականությունը եւ ուսմունքը» գիրքը հաստատում է կապը վարդախաչյանների եւ տաճարականների միջեւ:

Տաճարականների ջնջումից 300 տարի հետո՝ 1600-ական-ների սկզբներին, գաղտնի կարգը որոշում է նորից փորձել ժողովր-դի տրամադրությունը իր փիլիսոփայության մասին: Շատ հասկա-նալի պատճառներից էլեկելով, նոր կարգը չի ընդունում իր եւ տա-ճարականների միջեւ եղած կապը: Նա իր ծնունդը վերագրում է մի խորհրդավոր անվան՝ Քրիստիան Ռոզեկրեյցերին: Այս պատմու-թյունը հրատարակվում է փաստաթղթի՝ ձեռով, որ կոչվում է «Հռչա-կավոր եղբայրակցությունը» (Fama Fraternitatis) եւ տարածվում Եվ-րոպայի չորս կողմը: Ըստ պատմության, Ռոզեկրեյցերը ճամբոր-դում է Միրհա, ապա Եզիպտոս սովորելու խորհուրդը: Մերձավոր Արեւելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի մեծ վարպետների մոտ ուսա-նելուց հետո, նա վերադառնում է Եվրոպա եւ սկսում տարածել իր «Լուսավորվածությունը»: Ռոզեկրեյցերին չեն ընդունում: Նա վե-րադառնում է հայրենիք՝ Գերմանիա եւ փորձում է հաստատել մի ընկերություն՝ հիմնված իր ուսուցումների վրա:

Ըստ «Ազատ մաստնության հսկարգիցուպան»-ի, «շատեր առասպելը ընդունել են որպես իրականություն»: Ամենայնէպա,

Կարգը ժողովրդի հակազդեցությունն էր փորձում: Ռոզեկրեյցերը իսկական Վարդախաչյան կարգը չէր:

Այս լավ մտածված բայը նոր հետաքրքրություն է ստեղծում ցամաքամասի տարածքին: Բայց մի դար պետք է անցներ, որպեսզի Կարգը կարողանար բացահայտորեն անդամներ արձանագրել:

Մասնական շարժման մի շարք նշանավոր ղեկավարներ մերժում են որեւէ կապ տեսնել Տաճարական ասպետների եւ վար-դախաչյանների միջեւ: Բայց բավական փաստեր կան ցույց տալու, որ արդի ազատ մաստնությունը անցնալի կարգերի շարունակու-թյունն է: Դա հստակ է երեւում է նաեւ «Վարդականությունը եւ ուս-մունքը» մասնական գրքում: Բացահայտ օրինակ են Յորքյան ծեսի երեք վերջին աստիճանների անունները՝ Կարմիր խաչի սապետ, Մալթայի սապետ եւ Տաճարի սապետ, ինչպես նաեւ Շուտլանդա-կան ծեսի 18-րդ աստիճանը՝ Վարդ-Խաչի իշխան, որ 17-րդ աստի-ճանի հետ ծանոթ է որպես Կարմիր խաչի խորհուրդ:

ԱԶԱՏ ՄԱՍՆՈՒՆԹՅԱՆ ԾՆՈՒՆԸ

Եթե վարդախաչյաններն ուզում էին հասնել իրենց նպա-տակին եւ հաստատել «Աշխարհի նոր կարգ»-ը, պարտավոր էին բացահայտվել ժողովրդին եւ հնարավորին չափ շատ անդամ ար-ձանագրել: Տաճարականների պակասությունը շարունակվում է. արտաքնապես բարեգործական կազմակերպության երեւույթ են առնում, իսկ ներքնապես պահում են թաքուն, գաղտնի խորհրդա-պաշտությունը: Արանց միանում եւ վերջապես նրանց առաջնոր-դում են Եվրոպայի որմնադիրները՝ խորհրդանշանների մեծ մասն ընդօրինակելով շինարարությունից:

Դարեր առաջ, տաճարականները նշանավոր շինարարներ էին եղել: Այժմ թիրախը նորից շինարար վարպետներն էին, որոնք նախընտրում էին «Որմնադիր եղբայրներ» կամ «Մեծ շինարար-ներ» կոչվել:

Ժամանակի ընթացքում նվազում է կոթողային եկեղեցիներ-ի շինարարությունը, վարպետ շինարարների թիվն էլ սկսում է նահանջել: Հավաքագրում են վարպետ շինարարներին եւ 1717 թ.:

ին Լոնդրոնում հիմնում են աշխարհի առաջին Մեծ օթյակը: Ջանն անցել էր մասոններին, իսկ վարդախաչյանները՝ կառույցի նվիրապետները, կոչվում էին Ազատ մասոնության իշխաններ կամ ճարտարներ:

Նոր «կարգը» արագորեն ընդլայնվում է: 18-րդ դարի վերջերին նա հաստատուն հիմների վրա կանգնած կազմակերպություն էր արդեն: Ժողովրդի կողմից ճանաչվում էր որպես բարեգործական կազմակերպություն: Հիմնադրումը հաջողությամբ կատարելուց հետո, ճարտարները վերադառնում են իրենց հին երազին՝ «Աշխարհի սատանայական կարգ»-ի հաստատմանը: Գերագույնի կարգը վերջապես կազմվել էր:

Այս նոր կարգի մեջ գտնվող կարեւոր կարգը Լուսավորյալների էին:

ԼՈՒՍԱՎՈՐՅԱԼՆԵՐԸ

Մասն պատմաբան Ալբերտ Ջ. ՄակՔեյը հետևյալ բառերով է նկարագրում Լուսավորյալներին. «Գաղտնի կազմակերպություն. հիմնադրվել է 1776 թ. մայիսի 1-ին՝ Բեզլաուզտ համալսարանի դասախոս Ադամ Վայսհաուպտի կողմից», եւ շարունակում է. «Նա մասունական պատմության մեջ հռչակավոր է որպես Բավարիայի Լուսավորյալների հիմնադիր»:

Լուսավորյալների՝ մասոնությունից ներշնչված լինելու բոլոր կասկածները վերացան երբ կարդացի նշանավոր մասն պատմաբան Շ. Շելվուդի «Մասոններ եւ մասն նախագահներ» գիրքը, ուր Վայսհաուպտը ներկայացվում է որպես նշանավոր մասն :

18-րդ դարի պատմաբան է հռչակավոր մասն Ջոն Ռոբինսոնը 1798-ին տպագրված իր «Դավադրության փաստերը» գրքում նշում է. «Գարգի գլխավոր նպատակն է քրիստոնեությունը ջնջել եւ կառավարությունները տապալել», ու շարունակում. «Միայն գաղտնի կազմակերպությունները կարող են հաջողացնել «Աշխարհի նոր կարգ»-ը՝ աստիճանաբար ներթափանցելով պետություններին մեջ»:

Գործածելով բոլոր հնարավոր միջոցները, Վայսհաուպտին եւ նրա գործակիցներին հաջողվում է շահել գերմանական մասունական օթյակների վստահությունն ու պաշտպանությունը: Վայսհաուպտը Մյունխենի, իսկ նրա իշխանները մասնաճյուղերի մեջ հյուսում են դավադրությունը:

1782-ին գումարված Վիլհելմշտադտի մասունական համաժողովին, Վայսհաուպտի Լուսավորյալները վերջնականապես դասվում են գաղտնի հավաքականությունների շարքին որպես Մեկ-աշխարհի շարժման անտարկելի առաջամարտիկներ: Միեւնույն ժամանակաշրջանին, Վայսհաուպտը հաջողում է դաշնակցություն դրարել Լուսավորյալ ազատ մասոնների եւ Ռուսիյիցների աճող բանկային ցանցի միջև, ինչը Կարգին հնարավորություն է տալիս ծրագրների իրագործմանն սկսել:

Այսպիսով, տաճարականների նման, ազատ մասոնները հակակշռում են միջազգային բանկերին եւ սկսվում է առաջընթացը: Շելվուդը գրում է. «Նա արմատներ է գցում, ծաղկում է, շարքերը բազմանում են, նույնիսկ ցիզվիտներն են միանում»:

Քեյն տասը տարի անց լուսավորյալները խայտառակվում են, բայց նրանց ձեռք բերած հաջողությանը ազատ մասոնությունը չէր կարողացել հասնել անցյալ 50 տարիներին: Նրանք համոզում էին քրիստոնյա ղեկավարությանը միանալ Կարգին, ստեղծվ թե՛ «Լուսավորյալները»՝ քրիստոնեական կազմակերպություն է, որի նպատակն է քրիստոնյաներին միավորել՝ Քրիստոսի սիրույն:

Մի շարք քրիստոնյա ղեկավարներ պատմությունից պետք է դա անեն:

Քրիստոնյաներին միավորելու դիմակի տակ աշխատում են հասնել իրենց նպատակին իրենց տիրապետության տակ անել մարդկությանը: Եկեղեցիների համաշխարհային խորհրդի այսօր քաջալերած միջերոնական միությունը ազատ մասոնության գործակատարներից է: Այնքան արտե, որ քրիստոնյաները չեն միանա մյուս կրոններին, Աշխարհի կառավարություն չի կարող գոյանալ: Քրիստոնյաների անգիջող կենցաղը գլխավոր արգելքն է:

Վայսհաուպտն ուրախանում էր երբ խաբում էր քրիստոնյաներին: Մի անգամ երբ նրան հաջողվում է համոզել մի ղեկավար

րի, եւս գրում է. «Ո՛վ կարող էր երեւակայել, թէ եւս նոր կրօնի հիմնադիրը պիտի լինեմ»:

Թեւ «Լուսավորյալներ»-ի ճիգերը կանգ են առնում 1780-ին, բայց գործունեությունը շարունակվում է Լուսավորյալ մատենական օբյեկտների միջոցով: Այս բոլորի գլխավոր մղիչ ուժն էր «Ֆրանսիայի Մեծ Արեւելք» օբյեկտը, հետագային Իտալիայի, իսկ այժմ՝ ԱՄՆ-ի մատենական օբյեկտները:

ԱՄԵՐԻԿԱՆ ՀՈՂՈՒՄ

Եվրոպայի քաղաքակառուցության տիրապետելուց հետո, Մատենական կարգը 18-րդ դարու վերջերին կարեւոր առաջընթաց է արձանագրում ԱՄՆ-ում: Փաստ է, որ այս երկրի քաղաքակառուցությունը մատեններն են որոշել: Մատենների մեծամասնությունը, ինչպես Ջորջ Վաշինգտոնը, եղել են պարկեշտ անձեր եւ Կարգի հետին նպատակները չեն հասկացել: Շատեր քննադատել են Լուսավորյալների գործունեությունը: Այնուամենայնիվ, մատենական օբյեկտները հավաքագրում են անդամներ եւ սկսում են աշխատել իրենց նպատակին հասնելու համար: 1801-ին Չարլստոնում (Հարավային Կարոլինա) հիմնում են ազատ մատենական առաջին «Շոտլանդական ծեսի Գերագույն խորհուրդ»-ը:

Ըստ «Շոտլանդական ծեսի իրավանդությունները» մատենական հրատարակության, «աշխարհի բոլոր գերագույն խորհուրդները այս օբյեկտից են սերում»: «Աշխարհի նոր կարգ»-ը կարող է հաջողվել՝ եթե ԱՄՆ-ի հիանալի հնարավորությունները հակակշռի տակ առնվեն: Հետեւաբար, երբ 1800-ականներին հայտնվում է նոր ուժը՝ Լուսավորյալները, երանք իրենց ուշադրությունը եվրոպայից դանդաղորեն այս կողմ են ուղղում:

Ազատ մատենությունը զգալի աճ է արձանագրում մտնական 19-րդ դարի երկրորդ կեսին: Այդ տարիներին բազմաճանաչում են մատեններից ներշնչված կրոնական աղանդները: Աստվածիմաստության ընկերության կողքին, ազատ մատենությունը օժանդակում է «Քրիստոս սայենս»-ի, «Միադաճություն»-ի, «Մատենական Տոլարանդ»-ի եւ Ռասելի հիմնած «Եհովայի վկաներ»-ի ստեղծ-

մանն ու տարածմանը: Իսկ ամենամեծը Մորմոն աղանդն է՝ հիմնված ժողով Սմիթի կողմից, որը եւս բարձր աստիճանի մասուն էր: Սմիթը, Կարգին միանալուց 12 տարի անց, 1830-ին հրատարակում է «Մորմոնի գիրք»-ը: 1842 թ. մարտի 15-ին Սմիթը ստանում է ազատ մատենության առաջին աստիճանը, իսկ հաջորդ օրն իսկ նրան շնորհում են «Թագավորական գաղտնիքի վսեմ վարպետ» աստիճանը, որն աննախընթաց էր եւ է: Վեց շաբաթ անց՝ մայիսի 2-ին սկսում է, որպես անձնական հայտնություն, մորմոն ղեկավարներին մատենական գաղտնիքներն ուսուցանել: Օգտվելով ազատ մատենության սկզբունքներից, եւս հիմնում է իր աղանդը, ասելով թէ այդ «հայտնությունը» վերելից է եկել: Մորմոն ղեկավարների մեծամասնությունը մասուն է եղել:

Նախկին մորմոններ մի շարք գրքեր են հրատարակել, ուր բացատրվում են մորմոնականության եւ ազատ մատենության կապերը: Այդ գրքերը փաստում են, որ մորմոնականությունը մատենական ժառանգություն է: Մորմոնները գործածում են մատենական նշանները, ծեսերը եւ գաղտնի ուսմուսը:

Մորմոնականությունն ունի ավելի քան չորս միլիոն անդամ եւ աշխարհի ամենից հարուստ «Եկեղեցին» է: Լրա ազդեցությունը քաղաքակառուցության եւ այլ ազգային հարցերում ահավոր է:

Մատենները ԱՄՆ-ում 1813-ին հիմնում են Հյուսիսային Գերագույն խորհուրդը (Հյուսիսային իրավասություն), որն իշխում է 15 նահանգների վրա, կենտրոնատեղին Քոստոնն է: Հարավային իրավասությունը, որի կենտրոնատեղին Չարլստոնից տեղափոխվել է մայրաքաղաք Վաշինգտոն, 35 նահանգների վրա է իշխում: Վերջինս այսօր Աշխարհի Մայր Գերագույն խորհուրդն է:

ՆՈՐ ԳԵՐ-ՄԵՍԸ

Նույն տարիներին, Մատենական կարգը թափանցում է ամերիկյան քաղաքակառուցության եւ տնտեսության մեջ: Շարժումը 18-րդ դարի վերջերին այնքան է մեծանում, որ դառնում է անարդյունավետ ու դժվար կառավարելի: Մասնաճյուղերը, աղանդներն ու ծեսերը անկարելի էր միատեղել եւ ղեկավարել: Ռաստի, 1870 թ.

սեպտեմբերի 20-ին հիմնում են «Նոր Գեր-գաղտնի կառավարող խումբ»-ը, որը կենտրոնացնում է Տիեզերական ազատ մասնու-թյանը: Մա առաջին մեծ վերակառուցումն էր (Գերեստրոլյա): Գլխավոր մոլիչ ումն էր Ալբերտ Փայթը:

Փայթը ծնվել է Բոստոնում 1809 թ.-ին: 1850-ին միանում է Մասնական կարգին: Նա փաստաբան էր: Քաղաքացիական պա-տերազմի ժամանակ կոմիտ էր դաշնակիցների կողքին և ստանում գորավարի աստիճան:

Փայթը նշանավոր ճարտասան էր: Նա 16 հին լեզուներ է սո-վորել, ուսումնասիրել է գրադաշտակաևությունն ու «Ձենդ Ավկա-սա»-ն: Համարվում է Կաբբալայի աշակերտ: Գրել է մի շարք գր-քեր, որոնցից շատեր ազատ մասնուրթյան գրականության դասա-կաններին են: Ամենից նշանավորը 861 էջանոց «Քարոյականու-թյունն և ուսմունք»-ն է գրված 1871-ին, որին անվանում են «Շուտ-լանդական ծեսի Մուքթ գիրք»: Փայթը 1859-ին ընտրվում է Հարա-վային Գերագույն խորհրդի Բշխանական մեծ հրամանատար: Նա մնում է Շուտլանդական ծեսի ղեկավարը մինչև իր մահը 1891 թ.-ին: Իտալական հեղափոխության ղեկավար էր Լուսավորչյալ ազատ մասնուրթյան Համաշխարհային տնօրեն Ջուզեպպե Մացցինին (1834-1872) 1860-ական թվականներին կապ է հաստատում Փայթի հետ և նրան կարգում ԱՄՆ-ի «Լուսավորչական»-ի ղեկավար: Փայթն ու Մացցինին 1870 թ. սեպտեմբերի 20-ին ստորագրում են Նոր Գերագույն ծեսի սահմանադրությունը:

Փայթը Կարգը կոչում է Նոր և փոխված Բալլադյան ծես: Պատմաբանները այն կոչում են գնտախկություն, որ սովորեցնում է, թե աստվածությունը երկուսն է և թե Լուցիֆերը (սատանան) հավասար է Ադոնային (քրիստոնյաների Աստծուն): Մասունների սուրբ մայրաքաղաքը Չարլստոնն էր, իսկ Փայթը՝ Բշխանական քա-հանայալետը, այսինքն՝ Գերագույն ուսմունքի ուղեցույցի նախա-գահը, որ կազմվել էր տասը բարձրագույն աստիճան ունեցող եղբայրներից: Մասնուրթյան Բշխանական գործադիր ուղեցույցը մնում է Հռոմում՝ Մացցինիի ղեկավարության տակ:

Գերագույն կամ Բալլադյան ծեսի կողքին Փայթը և Մացցի-նին հիմնում են չորս Մեծ կենտրոնական ուղեցույցներ՝ Նյուսիսա-

լին Ամերիկայի Մեծ կենտրոնական ուղեցույցը - Վաշինգտոն, Հա-րավային Ամերիկա - Մոնտեվիդեո, Եվրոպա - Նեապոլ, Ասիա և Ովկիանիա - Կակաթա: Հետագային հիմնում են Աֆրիկայի կենտ-րոնը - Պորտ Լուիս, Մորիս կղզիներ:

Այս նոր ծեսի անդամները - 33-րդ աստիճան - ընտրվում էին Հին և ընդունված Շուտլանդական ծեսից:

Բալլադյան թյակներին տրվում է «Շոանկյունիներ» անվա-նումը:

1859 թ. հուլիսի 14-ին Փայթը աշխարհի 23 գերագույն խոր-հուրդներին հրահանգում է. «Ասացե՛ք ժողովրդին, թե մենք մեկ Աստված ենք պաշտում, բայց մենք այդ Աստվածը պաշտում ենք առանց նախապաշարունների ...Ասացե՛ք, որ մասնական կրոնը պիտի հիմնվի»:

Այս հաստատումը կատարելիս Փայթը գրադեցնում էր Վա-շինգտոնի Կենտրոնական ուղեցույցի Մեծ վարպետի, Չարլստոնի Գերագույն խորհրդի Մեծ հրամանատարի և Տիեզերական ազատ մասնուրթյան Բշխանական քահանայալետի պաշտոնները: Հե-տևաբար, խոսելով որպես ազատ մասնուրթյան ղեկավար, նա Կարգի իսկական նկարագիրն էր բացահայտում:

Դավադրության հաջողությունը կախյալ է ճշմարիտը թաք-ցնելու անդամի կարողությունից: Հետևաբար, հավաքագրել այն-քան՝ որքան պետք է հաջողելու համար: Յուրաքանչյուր նոր անդա-մի հետ բացահայտվելու վտանգը մեծանում է: Ավիրապետությունը շատ գոյուշ է թեկնածուների ընտրության մեջ: Վստահելի են մի-այն 33-րդ և ավելի աստիճանավորները: Տրամաբանությունը պարզ է. ինչո՞ւ հավաքագրել հայրուր հազար մարդ, երբ նույն գոր-ծը կարելի է կատարել տասը հազարով:

Ավիրապետությունը օգտագործում է միլիոնավոր անմեղ ապուշներ որպես վահան իր և ժողովրդի միջև: Այս մարդիկը օ-րեր են տրամադրում հիվանդանոց կառուցելու, հաշմանդամներին օգնելու և այլ բարեգործություններ անելու համար, բայց նրանք պարզապես թողածածկույթ են: Շողովրդին խաբելու հույակապ հնարք: Ո՞վ կարող է կանխաձեռն, թե այսպիսի բարեգործական հաս-

տատույթունը մի հսկայական դավադրության ետին է կանգնած: Քչեր են հավատում, որովհետև գաղափարն իսկ ընդվզեցուցի է:

«Բարոյականություն և ուսմունք»-ը հաստատում է.

«Հարստանալ, ազդել, մեքենայել և եթե պետք է կռվել...

Պատկանությունն ու մրցակից թագավորությունները խարխլած են ու քայքայում են իրար: Աշխարհը պետք է մե քը լինի: Մե նք պիտի պահպանենք Տիեզերքի հավասարակշռությունը և մե նք պիտի լինենք Աշխարհի վարպետները»:

Փայքի աշխատանքը հաջողությամբ է պսակվում, ղեկավարի դերը 1880-ականներին Եվրոպայից ԱՄՆ է անցնում:

Ըստ մատենների և «Լոր դար»-ականների՝ ԱՄՆ-ը «Լոր Ատլանտիս»-ն է:

Դժբախտաբար, պատմությունը կրկնվում է, վերադառնում ենք նույն օրերին. պարտադրելու են «Աշխարհի նոր կարգ»-ը, որ բաղկացած պիտի լինի տարբ վարչական շրջաններից:

ԽՈՐՀՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՐԿ

Այս բոլորից հետո մի հարց տակավին տանջում էր ինձ... Ի՞նչ էր Խորհրդային Միության դերը այս բոլորի մեջ: Ռուսմասի-րությունները ցույց տվեցին, որ Ամերիկայի վրա հակակշիռ հաս-տատած ուժերը հակակշռում են նաև Խորհրդային Միությանը, և, թե խորհրդային պետությունը նրա նք են հիմնել: Կատարենք կո-մունիզմի և Խորհրդային Միության պատմության համառոտ վե-րաքաղը:

Սովորական մտավորական Կարլ Հայնրիխ Մարքսը 1847-ին միանում է «Լուսավորյալներ»-ի մասնաճյուղերից մեկին, որ «Ճշտի միությունը» կոչվում էր: Փաստ է թե որոշ ժամանակ Մաց-ցինին (Լուսավորյալ ազատ մատենների Եվրոպայի ղեկավարը) և Մարքսը գործակցել են: Մացցինին և միջազգային մատենությունը օգտագործել են Մարքսին, որպեսզի նա աճող սոցիալիստական աշխատավորական շարժում ներթափանցի և այն քանդի:

19-րդ դարի կեսերին, Ֆրանսիայի աշխատավորական շար-ժումը կազմակերպվում է և փորձում է աշխատավորների կյանքը

բարելավել: Լույսը պատանում է Անգլիայում. Արիեստակցական միությունները փորձում են փոփոխություններ մտցնել իրենց երկ-րում: Լուսավորյալ ազատ մատենությունը որսում է պահը ու դրա մեջ տեսնում իր ծրագիրների հաջողության երաշխիքը:

Կարլ Մարքսն այդ օրերին ապրում էր Լոնդոնում և լավ կապեր էր մշակում աշխատավորական շարժումների հետ: 1864 թ. սեպտեմբերի 28-ին, Մեկը Մարտին սրահում կայացած ժողովի թ-որսող հռչակվում է «Գոմունիստական Միջազգայնական»-ը – Մարքսը ընտրվում է Հանձնաժողովի անդամ: Հանձնաժողովի մյուս անդամներն էին Մացցինիի անձնական քարտուղարը՝ Ֆրան-սիացի ազատ մատեն Գուլֆ լը Լուրեզը և անգլիական մատենների միության քարտուղար Կրեմլըրը: Հանձնաժողովի առաջին նիստին Գուլֆը ներկայացնում է Մացցինիի պատրաստած Աշխատավոր-ների միության հիմունքները: Մարքսն ու Մացցինին այնքան մոտ էին իրար, որ Մարքսն անմիջապես ընդունում է առաջարկությու-նը:

Ազատ մատենությունն ու մանավանդ «Մեծ Արևելք»-ի օթ-յակները գորակցում են Միջազգայնականին:

Աշխատավորական շարժումները ամբողջությամբ ղեկա-վարվում են գաղտնի կազմակերպությունների կողմից:

Ռուսական օթյակների միջոցով և Տրոցկու ու Լենինի օգ-նությամբ և միջազգային կապիտալիզմի գորակցությամբ, Ռուսա-կան հեղափոխությունը պարտադրվում է ռուս ժողովուրդին:

Վիստոն Զերչիլը 1920 թ. փետրվարի 8-ին գրում է Լոնդոնի «Մանդեյլ» թերթում.

«Սպարտակուս-Վայսիաուպտի օրերից մինչև Մարքս և Տրոցկի... քաղաքականությունը տապալելու միջազգային դավադ-րությունը շարունակվում է: 19-րդ դարի բոլոր խաթարված շար-ժումները ստեղծողներն ու այժմ սրանք արտակարգ անհաստակա-նություններ են, ովքեր պիտի բռնեն ռուս ժողովուրդի կոկորդից և հսկայական կայսրության պիտի տիրանան»:

Զերչիլն անպայման մի բան իմացած պետք է լինի այս բո-լորի մասին, քանի որ ինք էա մատն էր:

Տրամաբանական հետևությունն այն է, որ էթե ազատ մատուցությունն է հիմնել խորհրդային Միությունը, ուրեմն նա է կացության տերը, վարագույրի ետևից: Մակայն ո՞րն է այսպիսի բռնատիրության հիմնումին դրդապատճառը: ԱՄՆ-ի դերն է մեզ աղաջնորդել դեպի «Աշխարհի նոր կարգ»-ը, իսկ Ռուսաստանի դերը՝ մարդկության վրա ճնշելով արագացնել գործընթացը:

Որպեսզի նվիրապետությունը կարողանա հաջողացնել աշխարհի կառավարումը, մարդկությունը պետք է համոզվի և ընդունի այդպիսի կառավարության օգուտը: Պայմաններ պետք է ստեղծվեն: Եթե մարդկությունը համոզվի, որ պատերազմների պատասխանատվությունը ընկնում է ազգերի վրա և խաղաղություն կարող է հաստատվել միայն ազգերի ոչնչացումով, ապա կարող է պատահել, որ նա աշխարհի մեկ իշխանությունն ընդունի որպես այլընտրանք: Ուրեմն, պատերազմներ պետք է հնարվեն, ահաբեկչական գործողություններ և նախահարձակումներ պետք է կատարվեն: Վեճ, բախում, բռնություն աշխարհի չորս կողմը և զենք էլ տրամադրվի:

1980-ականների սկզբին, աշխարհի ժողովուրդների չորսից մեկը պատերազմում էր: Խորհրդային Միությունը միշտ օգնողի դերում էր:

Ձինված ընդհարումները ատոմական պատերազմի վերածվելու վախը հոգեբանորեն ազդում է ժողովուրդների վրա: Ամեն բանից առաջ մարդկությունը խաղաղություն է ցանկանում:

Մահմանափակ ատոմական զգվոտուքի պատճառած վընասներն որ մարդկային զոհերը մարդկությանը կհամոզեն, որ հանձնի ազգային ինքնիշխանությունն ու ընդունի Աշխարհի մեկ կառավարությունը, որը խստատևում է այսպիսի դժբախտությունների կրկնությունն արգելել: Գործածելով Ամերիկային, Եվրոպային և Ռուսաստանին, թաքուն ուժերը ձգտում են այնտեղ հասնել:

«ԱՇԽԱՐՀԻ ՆՈՐ ԿԱՐԳ»-Ի ԳԱՂՏՆԻ ՈՒՍՄՈՒՆԸ

Մասունների մեծամասնությունը չցիտի իր կազմակերպության թաքուն ծրագրերի մասին: Իմ խստակցությունների ընթացքում ես իսկապես ս համոզվեցի, որ նրանք մասունության էությունը չցիտեն: Մեղրում եմ այս խարված մարդկանց ներողամտությամբ վերաբերվել: Մենք բոլորս էլ հանցանք ունեցել ենք:

Ամիսներ պետք են Կարգը ճիշտ և լավ հասկանալու համար: Եթե անդամ չես, գաղտնի գրքերը չես կարող ունենալ, իսկ անդամներից շատ քչեր ժամանակ են տրամադրում ուսմունքը քննելու համար: Ումանք 30 տարի անդամակցել են օթյակին, բայց մեկ ժամ չեն տրամադրել գրականությունն ուսումնասիրելու համար: Այդպիսիներին օգնելու համար ես պատրաստեցի հետևյալ ամփոփ մասնական սկզբունքները:

ՄԱՍՈՆԱԿԱՆ ԱՍՏՎԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1986-ին, հեռուստատեսության մի հաղորդավար խնդրում է ազատ մատուցությունն ուսումնասիրող մի զույգից, գրել Ամերիկայի 50 մեծ օթյակներին՝ իմանալու համար թե մատնական ո՞ր գրքերը լավագույն ձևով են ներկայացնում ազատ մատուցության հավատալիքները:

Մեծ օթյակներից 25-ը պատասխանում են: Ըստ Մեծ վարպետների՝ հետևյալ գրքերն են հանձնարարվում. «Մասունական հանրագիտարանը» (Շեյրի Վիլսոն Քոյլ), «Շինարարները» (Շոգեֆ Ֆորդ Նյուտոն), «Ազատ մատուցության հանրագիտարանը» (Ալբերտ Կ. ՄակՔեյ), «Օստոթացնել ազատ մատուցությունը» (Կարլ Հ. Կլոդի), «Նոր մատուց» (Հ. Լ. Շելվուդ), «Մասունական ուղեցիքը» (Ալֆոնս Քերզ), «Ազատ մատուցության պատմությունը» (Ռոբերտ Ֆ. Գուլդ), «Ճարտարությունը և նրա խորհուրդը» (Ալան Ե. Ռոբերտս), «Քարոյականությունը և ուսմունք» (Ալբերտ Փայք) և մի քանի հար-

գլխած մասն հեղինակներ, ինչպես Մանլի Փ. Հոլ, Կ. Ստայնեց, Թոմաս Սմիթ՝ Կեր, Լուիս Լ. Ուիլյամս:

Քանի որ այս գրքերն են ազատ մասն դեկավարների կողմից հանձնարարված աղբյուրները, արդար է, որ մաստնական աստվածաբանությունը քննենք այս գրքերից օգտվելով: Գլխավոր փաստաբույժը պիտի լինի Ալբերտ Փայթի «Բարոյականություն և ուսմունք»-ը, որովհետև գիրքը կարելի է գտնել մասնական բոլոր գրադարաններում: Մասունները կարող են այս տեղեկություններն ստուգել:

Սկսենք հետևյալով. ԱՋՏՄ ՄԱՍՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԴՈՆ Է!

«Յուրաքանչյուր մաստնական օթյակ կրոնի տաճար է, իսկ ուսուցումները կրոնի հրահանգ են» («Բարոյականություն և ուսմունք», էջ 213):

«Նա (Մաստնությունը) տիեզերական, հավիտենական, անհեղի կրոն է, որը Աստված է սերմանել մարդոց սրտում:

Որն է հանգանակ չի կարող երկար պարել եթե կառուցված չէ այս հիմքի վրա» (Նույնը, էջ 219):

Փայթը շարունակում է եկարագրել ազատ մաստնությունը հետևյալ բառերով.

«Նա փիլիսոփայական և կրոնական ճշմարտությունների խնամակալն ու ավանդապահն է, որ թեև անձանոթ է աշխարհին, սակայն փոխանցվել է սերնդից սերունդ՝ միախմբելով խորհրդապատկերը, խորհրդանշանն ու այլբանությունները» (Նույնը, էջ 210):

ՄԱՍՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱՔՐԻՍՏՈՍՈՒԹՅՈՒՆ Է

Մաստնական աղոթքներում գեղչված է Հիսուսի անունը: Հիսուսի անունով աղոթելը հակառակ է մաստնության տիեզերականության (Պենսիլվանիայի Մեծ օթյակ):

«Ուսուցիչները, նույնիսկ քրիստոնեական, ընդհանրապես սոգես են և չգիտեն իրենց ուսուցածի ճիշտ իմաստը:

Սուրբ գիրքը աշխարհի ամենից ընդհանրացած գիրքն է, բայց անհասկանալի է շատերի համար: Սուրբ գիրքը իր բոլոր այլաբանություններով ամբողջական չէ, նա հրեաների գիտական

կրոնն է: Մոպսեսի և մարգարեների ուսմունքը, հար ու նման եզրպատկանին, շղարշված է: Հրեական գրքերը գրվել են ավանդությունը պահպանելու համար... դպրոցական գրքերի նման... Բուկական գաղտնիքն ու ավանդական փիլիսոփայությունը գրվել են հետո ու դեռևս թափանցիկ չեն: Ուստի ծնվել է երկրորդ Սբ. գիրքը՝ արտատոց հրեշ՝ կոչում են քրիստոնյաները, կոթող կոչում են գիտականները: Նա ամեն ինչ է, փիլիսոփայի հանձարն ու կրոնը միացել են երանում, նա մի աղաման է՝ կոչոտ, սե քարի մեջ» («Բարոյականություն և ուսմունք», էջ 745):

«Բոլոր ուսմունքները ծնվել են Կաբբալայից... Մաստնական գաղտնիքների ու խորհրդանշանների համար Կաբբալային ենք պարտական: Միայն Կաբբալան կարող է միացնել Տիեզերական դատողությունն ու Աստուծո խոսքը... Միայն նա կարող է համաձայնեցնել Պատճառն ու Հավատը, Ուժն ու Ազատությունը, Գիտությունն ու Խորհրդավորը: Նա ունի Ներկայի, Անցյալի ու Այսպայի բանալին» (Նույնը, էջ 744):

ՆԵՐՇՆՉՄԱՆ ԱՐՔՑՈՒՐԸ

«Լուցիֆեր, Լուսակիրը ... Լուցիֆեր, Առավոտի զավակը: Նա՛ է Լույս բերողը ... Չկանգնած ք» («Բարոյականություն և ուսմունք», էջ 321):

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՄՍՈՒՆՔԸ

Ազատ մաստնության համապատկան ուսմունքը բացատրվում է 1889 թ. հուլիսի 14-ին Փայթի՝ աշխարհի 23 գերագույն խորհուրդներին հղած «Հրահանգներում»: Նա գրում է.

«Ինչպե՛ս թե Լուցիֆերը աստված չէ, հապա Ադոնայն է աստված, որի արարքները փաստում են իր անգթությունը, նենգությունն ու մարդասպանությունը, զիտության դեմ վանողականությունը: Պարզ է, որ սաստանն և իր քահանաները պիտի գրպարտեն Լուցիֆերին: Այո՛, Լուցիֆերը աստված է և, դժբախտաբար, Ադոնայն էլ մեկ այլ աստված է»:

* Երկրորդ Սբ. գիրքը Կաբբալան է:

«Քրիստոնեական ուսմունքը հերետիկոսություն է. ճիշտ ու մաքուր փիլիսոփայական կրոնը Լուցիֆերիին է, Ադոնային հավասարը: Մական Լուցիֆերը լույսի Աստվածը, բարության Աստվածը պայքարում է հանուն մարդկության՝ Ադոնայի դեմ, որ Նավարի ու Չարի աստվածն է: Այդ ուսմունքն ամբողջությամբ հերետիկոսություն է»:

Սովորեցնում է Տիեզերականություն

«Նոր դար»-ի եւ ազատ մասնության գլխավոր բնաբանը տիեզերականությունն է, այսինքն՝ աշխարհի կրոնները միավորել: Ազատ մասնության համար՝ Հիսուս Քրիստոսը Աստուծո Որդին չէ, այլ՝ պարզ հոգեւոր վարպետ ինչպես Բուդդան, Մուհամմեդը կամ որեւէ այլ կրոնի ղեկավար:

«Մասնությունը մի կրոն է, ուր բոլորը միանում են եւ նույն հավատքն ունեն: Եթե մասնությունը միայն քրիստոնեական հաստատություն լիներ, հրեան, մուսուլմանը, բրահմինը եւ բուդդայականը պիտի չկարողանային օգտվել նրա լուսավորությունից ... եւ պարծենալ նրա տիեզերականությամբ»:

«Մասնությունը, որի խորանի շուրջ հավաքվում են քրիստոնյան, հրեան, մուսուլմանն ու բրահմինը, նաեւ Կոնֆուցիուսի ու Ջրադաշտի հետեւորդը, եւ եղբայրաբար աղոթում են մի Աստուծո, որ բոլոր Բահադներից վեր է»:

«Հրեաներից բաղկացած օթյակում խորանի վրա Հին Կտակարանն են դնում, թուրք ազատ մասնը Ղուրանը կարող է օգտագործել, իսկ բրահմինը՝ իր Վեդան, որ մասնականության տեսակետից պարփակվում է նույն գաղափարը: Աստվածային կամքը պիտի հայտնվի բոլորին» (ՄակՔեյի «Ազատ մասնության հանրագիտարան», էջ 133):

ՄԱՐԴԻ ԱՍՏՎԱԾՈՒՄԸ

Մասունների խորհրդանշաններից մեկը աստիճանն է, որն օգտագործվում է խորհրդագրության համար, կոչվում է առաջադիմության խորհրդանշան եւ ներկայացնում է մասունների եր-

րորդությունը՝ հավատք, հույս եւ բարեգործություն, որ միջոց է երկրից դրախտ գնալու:

Մասնությունը պարզապես Նաբեություն է:

Պատվական անհատներ մասնություն են ընդունվել կարծելով, թե քրիստոնեական հաստատություն է: Այդ է փաստում հետևյալը.

«Ճշմարտությունները ժամանակավոր ճշմարտություններ են, հավիտենական ճշմարտություն չկա («Բարոյականություն եւ ուսմունք», էջ 39) եւ հրահանգ՝ կույր հնազանդությամբ ընդունելու այս «ժամանակավոր» ճշմարտությունները»:

«Մասնի առաջին պարտականությունն է հնազանդվել Վարպետի հրահանգներին... Ազատ մասնությունը ավելի զինվորական, քան քաղաքական կազմակերպություն է» (ՄակՔեյի «Ազատ մասնության հանրագիտարան», էջ 525):

Մասնը կուրորեն երդվում է հնազանդվել, բացարձակապես անզիտակ, թե՛ ի՛նչ բանի: Առաջին աստիճանին անդամակցելիս, հետևյալ երդումն են տալիս.

«Ես հանդիսավորապես եւ անկեղծորեն խոստանում եմ եւ երդվում առանց երկդիմության, մտային վերապահության կամ որեւէ հնարքի հնազանդվել եւ ընդունել բոլոր հրահանգներն ու նաւսուցումները: Եթե սխալվեմ՝ կոկորդս կարեք ու ինձ թաղեք ծանծաղ ջրում, ուր օրական մակընթացություն եւ տեղատվություն է տեղի ունենում: Ուստի Աստված թող օգնի ինձ կատարելու իմ խոստումը» (Հրամանատար Վիլյամ Մորգան, «Ազատ մասնության մեկնությունները», էջ 21):

Յուրաքանչյուր աստիճան ունի իրեն հատուկ երդումը. որքան աստիճանը բարձրանում է, երդումն այնքան խստանում է:

Երդումները գրվել են 1820 թվականին: Այսօր նույնն են, ո՛չ մի բան չի փոխվել:

Շատ քչեր կարողացել են խույս տալ կազմակերպությունից ու բացահայտել նրա նպատակները:

Հրամանատար Վիլյամ Մորգանը (Լյու Յորք) երեսուն տարի եղել է մասն, ապա գրել է «Ազատ մասնության մեկնությունները» գիրքը, ուր բացահայտում է Մասնական կարգի գաղտնի

ծեսերն ու երգումները: Այդ բացահայտումները արժեցել են նրա կյանքը: Երբ հայտնի է դառնում, որ Մորգանը ուզում է գիրք հրատարակել, մասն ղեկավարությունը գործի է անցնում: Մորգանին առեւանգում են, եւ 1826 թ. սեպտեմբերին մի խումբ մասնուներ նրան խեղդում են Լիագարա գետում: Հրատարակչին էլ առեւանգում են, բայց ժողովրդի ճնշման տակ ազատ են արձակում: Գիրքը լույս է տեսնում 1827 թ.-ին:

Ազատ մասնությունը դիմել է զանազան պատճառաբանությունների եւ ձեւերի՝ իրեն անպարտ համարելու այս ոճրից: Սակայն, արեւելյան նահանգները մոլեզուել էին: Չաջորդ տասնամյակում 45 հազար մասններ լքում են օթյակները: Շատեր Եղբայրություն ընդունել էին անգիտակցաբար, բայց նրա էությունը հասկանալուց հետո, ընդզվելով, լքել էին Կարգը:

ԱՄՆ-ի մի շարք նահանգներ ազատ մասնությունը դատապարտել են:

Մերունդներ եկել են ու անցել, յուրաքանչյուր սերունդ զգուշացրել է Ամերիկային ու աշխարհին: Այսօր փորձում են փաստել, թե իբր նա 18-րդ դարու Կարգը չէ:

Տեսնեք թե այսօր ինչ են անում:

Մասնական Հյուսիսային իրավասության Գերագույն խորհրդի օրգան «Նորբորն լայք»-ի («Հյուսիսային լայք» - խմբ.) 1987 թ. փետրվարի համարում 33-րդ աստիճանի մասնն Էռիսա Լ. Ուիլյամսը գրում է.

«Տիեզերականություն չի նշանակում քրիստոնեություն: Որոշ մասններ այդպես են կարծում... Աշխատանք է տարվում մասնությունից քրիստոնեական արտահայտություններն անջատելու ուղղությամբ»:

Ժամանակին որոշ չափով օգուագործում էին քրիստոնեական ակնարկություններ: Ազատ մասն ղեկավարությունն այսօր հակաքրիստոնական է:

Պարզ է ուրեմն, որ մասնությունը քրիստոնեություն չէ: Չարք է ծագում. իսկ ինչի՞ են հավատում:

Մասնությունը կրոն չէ կամ՝ նրանց կրոնը տիեզերակա-նությունն է: Նրանք չեն հավատում Հիսուսին, Մուհամմեդին կամ

Բուդդային, հավատում են «Տիեզերքի մեծ ճարտարապետ»-ին, որին կոչում են (անշուշտ գաղտնի է պահվում) ՅԱՀԲՈՒԼՈՆ կամ ՅԱՈՒԲՈՒԼՈՆ: ՅԱՀ-ը հունական Եհովան է, ԲՈՒԼ-ը հին չաստված ԲԱԱԼ-ն է, ՈՆ-ը գործածվում էր բարեկեյան խորհուրդների մեջ եւ նշանակում է գերագույն էակ: Մասնական գաղտնի գրքերում գրվում է Յ. Բ. Ո. (Y. B. O.):

Մասնը առանձինն չի կարող արտասանել այս անունը, թերեւս վախենալով, որ իր հոգին հավիտենապես կանիծվի: Երեք մասններ կարող են արտասանել՝ յուրաքանչյուրն արտասանելով մեկ վանկ:

Ավելին՝ «Մատանայի եկեղեցու» հիմնադիր ու ղեկավար Անտոն լա Վեյը իր «Մատանայական ձեւեր» գրքում նշում է, որ նոր սատանայապաշտությունը մասնական ձեւերից եւ ուսմունքներից է օգտվել:

Սակայն ո՞րն է այս բոլորի միտք բանին, ինչո՞ւ այսքան բան գրեցինք մասնության մասին:

Մասնական ուսմունքը քաջալերում է միակրոնությունը, եւ եթե նա հաջողի՝ գաղտնի ուժերի համար ավելի հեշտ պիտի լինի ստեղծել «Աշխարհի նոր կարգ»-ն ու Աշխարհի կառավարությունը՝ ջնջելով ազգերի ինքնիշխանությունը, ճզմել մարդու կամքը, վերացնել հոգին եւ ստրկացնել մարդկությանը:

Վերջապես, այդ գաղտնի ուժերի համար՝ միջոցներից մեկն է նաեւ մասնությունը:

Գլուխ 7

ՊԱՏՐԱՍՏՎՈՂ ԿՃԱՄԲԱՍԸ

1980-ականների կեսերին կարողացել էի բավական համոզիչ տվյալներ հավաքել, որոնք փաստում էին, որ իսկապես հաստատելու են «Աշխարհի նոր կարգ»-ը: Բայց տակավին չէի կարողանում պատկերացնել, թե ինչպե՞ս պիտի հիմնվի Աշխարհի կառավարությունը այս սերնդի օրերին:

Ալսել էի հավատալ, որ Աշխարհի կառավարությունը կարելի է, նույնիսկ հավանական է հաջորդող մի քանի տասնամյակներին: Բայց, ինչպե՞ս:

1987 թ. հունիսին պատրաստեցի հետևյալ բեմադրությունը, որ արդեն երկու անգամ փոխել եմ՝ արագորեն զարգացող դեպրեսի հետ քայլ պահելու համար:

Պարտավոր էի իրականի մոտ օրինակ տալ, առիթ տալով ժողովրդին, որ ավելի լուրջ վերաբերվի հարցին:

Ուզում եմ ձեզ վստահեցնել, թե վերջը ինձ համար էլ հստակ չէ: Այդ՝ միայն Աստված գիտի: Ես միայն այն գիտեմ, որ Աստվածաշունչ մատչանում գրվել է, թե Աշխարհի կառավարությունը պիտի իրականանա: Ես պատրաստեցի այս բեմադրությունը, գաղափար տալու համար ձեզի, թե թշնամին ինչպե՞ս է մտածում: Պատգամս է զգույշ եղեք եւ ծուղակը մի՛ ընկնեք:

Կան մի շարք անորոշություններ: Մի բան հստակ է. մենք տակավին չգիտենք Պարսից ծոցի պատերազմի հետևանքները (*հեղինակը նկատի ունի այսպես կոչված «Պարսից ծոցի երկրորդ պատերազմը», որն ավարտվեց Սադդամ Հուսեյնի գորբերից Քուվեյթի ամերիկյան «ազատագրությանը» - խմբ.*)։ Ներառվոր է, որ գաղտնի ուժերը այս ճգնաժամը ստեղծել են որպես վերջին արար հաստատելու «Աշխարհի երր կարգ»-ը: Բայց ուսումնասիրողների մեծամասնությունը կարծում է, որ շատ ավելի մեծ վերջնական ճգնաժամ հարկավոր է եւ շատ ավելի կազմակերպված աշխատանք մարդկությանը պատրաստելու այսպիսի «հսկա քայլից» առաջ: Ես էլ այս տեսակետի կողմն եմ թեքվել:

Իրաքի հետ վերջին պատերազմը փորձ է. ավելի մեծ մի բանի են պատրաստվում: Սադդամ Հուսեյնը տակավին պաշտոնի վրա է, եւ ինչպես գրում ու ասում են, նա իր տրամադրության տակ ունի երեք կամ չորս ատոմական ռումբեր, նշան՝ որ ավելի վատ օրեր են սպասվում: Եթե ծրագրել են մերձավորարեւելյան շատ

ավելի մեծ բախում, այս անգամ դա կարող է շրջանային կամ նույնիսկ համաշխարհային պատերազմի վերածվել՝:

«Աշխարհի երր կարգ»-ը պիտի գործադրեն աստիճանաբար: Նախ ԱՄՆ-ը ազգերին պիտի ասաջնորդի համաշխարհային թույլ դաշնության (ինչ որ ներկայիս կատարվում է)՝ Միավորված ազգերի կազմակերպության հովանու տակ, ապա համաշխարհային ճգնաժամ պիտի հեղարեւ, եւ, որպես այլընտրանք, Աշխարհի կառավարությունը պիտի հաստատեն:

Հիմնական պատճառ պետք է հնարել. մարդկությունը պետք է համոզվի, որ վերջնական խաղաղություն չի կարող հաստատվել առանց կենտրոնական հզոր կառավարության, որը կարող է պաշտպանել երկրներն իրարից ու զոհի ներկայի վիճակը: Դարասկզբից (*հեղինակը նկատի ունի 20-րդ դարը - խմբ.*) կարելու քայլեր առնվել են այս ուղղությամբ, եւ եթե պատմությունը կրկնվի, շուտով «ասաջընթաց» պիտի լինի:

20-րդ դարում համաշխարհային պատերազմներ տեղի ունեցան: Հրահրեցին նախահարձակ ուժին, որ համաշխարհային ճգնաժամ ստեղծի ու աշխարհը պատերազմի մեջ միարժի: Երկու դեպքում էլ նախահարձակը պարտվեց: Յուրաքանչյուր պատերազմից հետո ազգերի համախմբումն հիմնեցին, որի կարծեցյալ պարտականությունն էր աշխարհի խաղաղությունը պահպանելը. Նախ՝ Ազգերի լիգան, ապա Միավորված ազգերի կազմակերպությունը: Յուրաքանչյուրը մեզ մի քայլ առաջ մղեց դեպի մեկ-աշխարհի կառավարություն:

ՄԱԿ-ը նախնական մեկ-աշխարհի կառավարություն է:

Ազգերի լիգան ուներ 63 անդամ երկիր. ԱՄՆ-ը մաս չէր կազմում: ՄԱԿ-ը կազմվել է 159** երկրներից (2006 թ.-ի դրությամբ շուրջ 200 պետություն - խմբ.), այսինքն՝ աշխարհի զրեթե բոլոր երկրները: ՄԱԿ-ն ընդգրկում է Աշխարհի դատարանը, ՄԱԿ-ի

* Ննեց այս պատճառով Թորիդային Միությունը քայքայեցին, որպեսզի համաշխարհային պատերազմ չլինի:

** Այսօր շուրջ 190 երկիր:

խաղաղարար ուժերը եւ մասնագիտական կազմակերպություններ, ինչպէս Միջազգային արժութային հիմնադրամը, Համաշխարհային բանկն ու Համաշխարհային առողջապահության կազմակերպությունը, նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ՅՈՒՆԻՄԵՖ-ը, այսպիսով կյանքի յուրաքանչյուր երեւոյթ հակակշռի տակ առնելով: ՄԱԿ-ն իր ծրագիրները գործադրելու եւ պարտադրելու իսկական ուժ չունի:

Երրորդ աշխարհում տեղի ունեցող մի պատերազմ կարո՞ղ է մարդկությանը դեպի «Աշխարհի նոր կարգ»-ն առջնորդել: Եթէ այո՞, այդ պատերազմը ինչպէս պետք է սկսի, ովքե՞ր են լինելու դերակատարները եւ ի՞նչ են լինելու հետեւանքները: Այս կարելու հարցերին պատասխանելու համար պետք է քննարկենք այն տարածաշրջանները, որտեղ գոյություն ունեն թշնամություններ եւ ամենից կարելուը՝ դավադիրների շահերի համընկնումներ:

ՀԱՐԱԿՈՐ ԲԵՄԱՂԲՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային ճգնաժամը, դրան գումարած, սովը, պարսերին ու կլիմայի փոփոխությունները պիտի ստիպեն մարդկությանը, որ նոր համակարգի ընդունի: Ուղղակի հայտարարում են. «Համաշխարհային հարցերը համաշխարհային լուծումներ են պահանջում»:

Պատմականորեն՝ պատերազմները մեծ փոփոխություններ են առաջացրել:

Անցյալին՝ պատերազմների օջախը Գերմանիան էր, այսօր այն տեղափոխվել է մեկ այլ տաք շրջան՝ Մերձավոր Արեւելք, եթէ ոչ Իրաքը երկրորդ անգամ, ապա, շատ հավանաբար, Իրանը կամ Սիրիան:

Գարծում եմ, որ «Աշխարհի նոր կարգ»-ը հաստատելու ճանապարհին Սիրիան կարելուր դեր ունի կատարելիք, եթէ ոչ որպէս պատերազմ հրահրողի, այլ՝ որպէս խաղաղության գլխավոր միջնորդի: Սիրիան երկար ժամանակ շատ լավ էր խաղում իր դերը, եւ, հակառակ ընդունված կարծիքի, Սիրիան է - Իրաքը չէ - Մերձավոր Արեւելքի մուսուլմանական զինվորական գլխավոր ուժը, եւ, հետեւաբար, արժանի՝ լուրջ ուշադրության:

Սիրիան պարտաստվում է հարվածել Իսրայելին: Ըստ ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության հրատարակած տվյալների՝ Սիրիան 19 միլիարդ դոլար արժողությամբ ռուսական ռազմամթերք է գնել: Սա Երրորդ աշխարհի ամենամեծ ռազմական գործարքն է: Նաեւ այդ երկրում է գտնվում խորհրդային ռազմական խորհրդականների մեծագույն բանակը:

Սիրիական կառավարությունը կարողացել է խաբել ու վախեցնել իր ժողովրդին խաբայելական հարձակումից, թեւս Իսրայելը միշտ մերժել է այդպիսի ամբաստանությունները:

Այս պատճառների համար ընտրեցի Սիրիան որպէս օրինակ հնարավոր թատերական բեմադրության (թեւս այս նույն բեմադրությունը գործադրելի է Իրանի, Իրաքի կամ Լիբիայի համար):

Սիրիայի հարձակումը Իսրայելի վրա, նույն զարտիկ ուժերի թույլտվությամբ, ճակատագրական սխալ է, որովհետեւ համաշխարհային ճգնաժամի պատճառ պիտի լինի: Անակնկալի զայով, հրեական պետությունը պատասխանելու արիթ պիտի չունենա: Սիրիական «Միգ»-երը չորս րոպեից պիտի հասնեն Երուսաղեմ: Իսրայելը շատ դժվար երկընտրանքի առաջ պիտի կանգնի, հանձնվել, թե՛ հակադարձել ատոմական ռումբերով հարվածելով Սիրիային, նույնիսկ Իրաքին: Լոնդոնում լույս տեսնող «Մանդեյլ թայմ»-ը՝ 1986-ին հրատարակել էր մի հոդված, որտեղ ասվում էր, թե Իսրայելը 200 ատոմական մարտաքայիկ ունի: Ուրեմս, մի բան պարզ է. ատոմական փոփոխազդույուն է տեղի ունենալու:

Հին Կտակարանում Դամակոսին վերաբերող մարգարեություն է գրվել, որ դեռ պիտի կատարվի: Իսահակն ասել է. «Դամակոսը ավերակների կույտի պիտի վերածվի»: Դամակոսը աշխարհի ամենահին մայրաքաղաքն է ու դեռեւս չի կործանվել: Մարգարեությունը իրականանալու է Քրիստոսի վերադարձից առաջ*:

* Չուգաղիպությունն է, որ Մերձավոր Արեւելքի հզորագույն անհատները ազատ մասունքներ են: Այս մարդիկը պիտի իրականացնեն Փայքի նախատեսությունները: Ազդեցիկ արար թրիստոնյա դեկավար ...-ն ինձ ասաց, որ ըստ իր լիբանանյան կապերի, Սիրիայի Ասադ թագավորն ու Հորդանանի Հուսեյն թագավորը ազատ մասունքներ են: Եթէ դա

Վորցնելով հազարավոր խորհրդականներ եւ օգտվելով Բարայելի դեմ կազմված համաշխարհային կյառիքից՝ խորհրդայինները պիտի հարձակվեն Բարայելի վրա, իրենց առաջ գտնելով ԱՄՆ-ին: Թե ի՞նչ կարող է պատահել դրանից հետո, աներևակայելի է: Մարդկությունը պիտի հայտնվի բնաջնջման եզրին:

Չար մարդիկ հին ժամանակներից այսպիսի ճգնաժամ են երազել: 1871 թ. օգոստոսի 15-ին Ալբերտ Փայքը գրում էր Մացցի-նիին.

«Մենք պետք է թիկունք կանգնենք նիհիլիստներին ու անաստվածներին եւ նրանց միջոցով հրահրենք ազդիական փոփոխություն, որի պատճառած անավոր դժբախտությունը ազգերին փաստելու է վայրենության ծնունդ անաստվածի իսկական դեմքը: Այս ժողովուրդը պիտի փորձի ոչնչացնել քաղաքակրթության ավերողներին եւ պիտի հուսահատվի բրիտանությունից, որ պիտի կորցնի իր ուղղությունն ու ղեկավարությունը ... եւ ընդունի Լույսը, Լուցիֆների ուսմունքը, որ վերջապես պիտի հայտնվի մարդկության իր ամբողջ մարքուխման եւ ջնջի բրիտանությունն ու անաստվածությունը»:

Այսպիսի ճգնաժամի հետևանքներն անավոր են: Նկատի առեք, որ երեսունից ավելի երկրներ առումական ներուժ ունեն: Ոչ ոք անմասն պիտի չմնա այս արհավիրքից: Հուսահատություն է.

ձիշտ է, ապա շատ ավելի մոտ ենք «Աշխարհի նոր կարգ»-ին: (Ըստ վատահ չեք, թե Մադդամ Հուսեյն էլ է պատկանում նույն գաղտնի կազմակերպության):

Մի օր այս նույն արքայ բրիտանոյա ղեկավարի որդին ինձ տվեց լիբանանյան «Փյունիկ» օթյակի մի մատնական փաստաթուղթ՝ օթյակի անդամակցության վկայագիրը: Փաստաթղթի վրա նշվել էր, որ «Փյունիկ» օթյակը «Հորդանանի Մեծ Օթյակ»-ի իրավասության տակ է որը, իր կարգին, ենթակա է Արաբական Գլխավոր խորհուրդին: Հորդանանը հին ժամանակներից եղել է Մերձավոր Արևելքի գաղտնի ղեկերությունների ամբողջ եւ շատ մեծ ազդեցություն ունի վարագույրների ետին կատարվող քաղաքականության վրա: Փաստաթղթի վրա նկարվել էր մեծիանների եւ մեր դուրսի վրա գտնվող մատնական խորհուրդը՝ ամենատեսն աչքը:

անորոշություն պիտի տիրեն: Բայց մուշ ուժերը որքան էլ դավադրեն ու ծրագրեն, պիտի հաջողին այնքան՝ որքան Աստված թույլ տա: Ցարը, Աստված այդ մուշ ուժերին արգելել է կատարել իրենց քայլը: Բայց մարդիկ այնքան պիտի չարանան, որ Աստված պիտի ասի՝ «բավական է» եւ թույլ պիտի տա չար ուժերին, որ ժամանակավորապես կատարեն իրենց ուզածը: Իրական ճգնաժամը այդ ժամանակ պիտի սկսվի:

ԵՔԵ ԿԱՌՈՒՑԵՄ ՊԵՏԻ ԳԱՄ

Գաղտնի կազմակերպությունը դարեր սպասել էր. վերջապես հասել էր նպատակին: Բարելոնի աշտարակը կրկնվում էր: Հազարավոր «Լոր դար»-ականներ Մեկ-աշխարհ կառավարությունը պիտի պահանջեն: Նրանք պիտի ասեն՝ հին կարգը պետք է փոխվի, որպեսզի ողբերգությունը չկրկնվի: Ջանգվածային լրատվամիջոցները պիտի գործակցեն նրանց: Նրանք պիտի ասեն՝ «Աշխարհի նոր կարգ»-ը պետք է հաստատվի, որովհետև ազգերը անկարող են աշխարհի խրթին հարցերը լուծել: Եվ այս բոլորը աշխարհի խաղաղության համար:

«Աշխարհի նոր կարգ»-ը պիտի կառուցվի ներքեւից դեպի վերեւ, ինչպես ժողովուրդներն ընդհանրապես երազել են: Ըստ պիտի գա ժողովրդավարության անվան տակ, ոչ այն ձեւի, ինչ մեր քաղաքագետները պարտադրում են մեզ: Մարդկությունը պիտի խորհի, թե ինքն է իր ճակատագրին տեղը, անգիտակ վարագույրի ետին աշխատողների ծրագրերին:

Խորհրդավոր գաղտնի կազմակերպությունները պիտի իշխեն: «Լոր դար»-ի հավատացողները մի ասացվածք ունեն. «Եթե կառուցես պիտի գամ», այսինքն էթե իմանք «Աշխարհի նոր կարգ»-ը, եւ (հակաքրիստոսը) պիտի գամ եւ գրավեմ իշխանական աթոռը:

Շարժումն արագորեն պիտի ընդհանրանա: Ամեն մարդ աշխարհի ժողովրդավարական կառավարությունը պիտի պահանջի: Եվ օրերից մի օր Գազանը կամ նրա ներկայացուցիչներից մեկը պիտի հայտնվի եւ ներկայացնի Մերձավոր Արևելքի խաղա-

դուրջյան ատերերույժ հոյակապ ծրագիրը, համաձայնություն հրեաների և պաղեստինցիների միջև, որ պիտի ապահովի Բարայելի ապահովությունը, առիթ պիտի տա հրեաներին կատուցելու երկար սպասված տաճարը եւ թույլատրի պաղեստինցիներին՝ ապրել իրենց ինքնավար հողերի վրա: Գազանը պիտի հաջողի այնտեղ, որտեղ ուրիշներ ձախողվել են:

Գազանը պիտի հայտնվի որպես ժողովրդավար դեկավար եւ խաղաղության ջատագով: Պարզ չէ, թե նա որպես ի՞նչ պիտի երևա՝ քաղաքագե տ կամ կրոնական դեկավար՝ (պա՛պ, թե՛ Պալալ Լամա): Նկատի ունեցեք, որ նա անձանոթ է մարդկությանը: Երբ նա եւ սուտ մարգարեն ամեն բան գրավեն, այն ժամանակ քրիստոնյաները պիտի իմանան, թե ով է նա:

Հակաքրիստոսը պիտի իշխի ՄԱԿ-ի կամ նոր կազմված ազգերի դաշնության վրա եւ աշխարհը վերածի տարբեր շրջանների: Աշխարհի Սահմանադրությունը պիտի առաջարկվի եւ «ժողովրդավար» Աշխարհի խորհրդարանը պիտի ստեղծվի: Աշխարհի քաղաքացիները պիտի կարծեն, թե ասելիք ունեն, միջնդեռ աղանդավոր գաղտնի ընկերությունները պիտի հակակշռեն ամեն բան: Օրինակ՝ եթե «Աշխարհի նոր կարգ»-ը հիմնված լինի երկու կամ երեք կուսակցության համակարգի վրա, միևնույնն է՝ «Լոր դար»-ականները պիտի հակակշռեն բոլորին, քանի որ նրանք են Աշխարհի կառավարություն առաջարկողները: Նրանք պիտի լինեն առաջնորդները եւ աշխարհը նրանց պիտի հետևի:

Ժողովուրդը գոհ պիտի լինի, որովհետև իրավունք պիտի ունենա ընտրելու, ինքն իրեն պիտի զգա ընտրվածի կողքին: Բայց կարելու չէ, թե ո՛վ է ընտրվում, արդյունքը նույնն է: Հակաքրիստոսի հետևորդները պիտի հակակշռեն համակարգը: Աշխարհը՝ մեկ համակարգ, փախչելու տեղ չունես:

Ինքնիշխան ազգերը պիտի դադարեն գոյություն ունենալուց: Հաստատելու են համաշխարհային տնտեսական համակարգը: Ինչ որ մնացել էր հին կարգերից՝ ինչպես լեզուները, մշակույթները, երկրների անունները, էայլև, ներկային չեն պատկանելու: Միայն մեկ միջազգային իշխանություն՝ սատանայի հակակշռի տակ:

Վիճաբանող կրոնները պիտի միանան, եւ սատանան, որպես հողեւոր վարպետ, անհավանական չէ, որ ինքն իրեն Քրիստոս՝ հռչակի: Նա կարող է ինքն իրեն հռչակել հրեաների երկար ժամանակ սպասված Մեսիան, բուդդայականների հինգերորդ Բուդդան, մուսուլմանների Իմամ Մեհդին, հնդկիկների Կրիշնան: Որոշ քրիստոնյաներ պիտի ընդունեն նրան որպես Քրիստոսի երկրորդ գալուստը:

Աստվածաշունչ մատյանն ասում է մեզ, որ աշխարհի բնակչության մեծամասնությունը պիտի խաբվի, եւ բոլոր նրանք, ովքեր լավ չեն պատրաստվել եւ լավ չեն հետևել Աստուծո խոսքին, պիտի կարծեն, որ դա Քրիստոսի երկրորդ գալուստն է:

«Լոր դար»-ի սկզբունքները մտել են մեր Եկեղեցիները, դրա համար էլ չենք կարողանում զանազանել հակաքրիստոսին ու Քրիստոսին: Եթե նա գալու լիներ որպես սատանայի ճառա, քչեր պիտի հետևեին նրան, բայց նա գալու է Քրիստոսի անունով որպես Լույսի հրեշտակ: Խորատես քրիստոնյաները պիտի զարմանան երբ իմանան, թե ո՛ւմ են հետևում՝ հիմնելու «Աշխարհի նոր կարգ»-ը, հավանաբար նրան, ում երբեք չէին կասկածել:

ՀԻՍՈՒՍ ԱՋԴԱՐՄԵՆ ԵՐ

«Սուտ Քրիստոսն ու սուտ մարգարեները պիտի երևան, կատարեն մեծ նշաններ ու հրաշքեր խաբելու նույնիսկ ընտրյալին: Տես՛ք, Ես ձեզ ասում եմ ժամանակից առաջ»: (Մատթեոս 24: 24, 25)

Հակաքրիստոսը չի կարող ներկայացնել քրիստոնեությունը, որովհետև նրա ուսմունքը համաստվածությունն է, հիմնված արեւելյան խորհրդապաշտության ու հին խորհրդավոր կրոնների – «Լոր դար»-ի հավատի - վրա:

Աստուծո փոխարեն Ես-ը պիտի պաշտեն: Ես-ության սուտ ուսմունքը նույնիսկ Եկեղեցի է ներթափանցել: Շատեր չեն հասկանում, թե անձնապաշտությունն ու խորհրդապաշտությունը նույն

* Հակաքրիստոս նշանակում է նաև Քրիստոսին փոխարինող:

բաներն են: Քրիստոսի անուսով սուտն եք պաշտում: Մա բացարձակ խաբեություն է:

Սկզբնական շրջանին հակաքրիստոսը պիտի հաջողի մոլորակի խաղաղությունը պահպանել, որովհետև այդ խեղդիները նրա հետևորդներն էին հնարում: Երբ Խավարի իշխանը բազմի աթոռին, նրա հետևորդները պիտի դադարեն պատերազմներ հրահրել և «խաղաղասեր» մակդիրը պիտի շնորհվի նրան: Ըստ Աստվածաշունչի մատյանի՝ չարը յոթ տարի պիտի իշխի: Իրա առաջին կեսի ընթացքում իր իշխանությունն է հաստատելու և երկրագունդն է հակակշռելու: Երկրորդ երեքուկես տարիներին պիտի պահանջի, որ մարդկությունը պաշտի իրեն: Ահա այս ժամանակ էլ պիտի սկսի մեծ փորձությունը:

Դժբախտությունն այն է, որ մարդկության մեծամասնությունը կամավոր պիտի ծառայի այս անօրենին, նրա մեջ տեսնելով Փրկչին: Ըստ մարդկանց տվորեցնելու է, թե ինչպե՞ս կարող են գերուժ լինել: Մարդը պիտի կատարի բոլոր արգելված չարիքները: Զարը պիտի հաջողի լավի անվան տան: Մատանայի ժամանակաշրջանն է: Ըստ պիտի ստանա այն ամենը, որին Աստուած է միայն արժանի: Աստուծո՞վ փոխարեն մարդը պաշտելու է ստատանային:

Մարդկանց վրա բացարձակ իշխանություն և հակակշիռ ունենալու համար, յուրաքանչյուր անհատի աջ թևին վրա պիտի դրոշմվի նշան ու համար: Առանց այդ համարի մարդ չի կարող գնել կամ ծախել: Եշանն ու համարը ընդունողը պիտի պաշտի ստատանային, իսկ մերժողի հետ պիտի վերաբերվեն անասունների նման. շատեր պիտի սպանվեն: Բոլոր այն ընտանիքները, ովքեր հող կամ արժեքավոր մետաղներ ունեն, նախ լավ վերաբերմունքի պիտի արժանանան, սակայն թե՛ իրենց տուրքերը չկարողանան վճարել պիտի հալածվեն ու ամեն բան կորցնեն:

Մարդ զարմանում է, թե ինչպե՞ս կարելի է այս ձեռի ապրել: Սակայն, պետք չէ հուսահատվել, որովհետև, նախ՝ այդ շրջանը միայն երեքուկես տարի է տևելու, և երկրորդ՝ մեկը այդ հալածվողներին մի ինչ-որ տեղում պիտի պատսպարի և հոգա նրանց: Բոլոր նրանք, ովքեր ընդունել էին նշանը, տեսնելով ազդու կարգի

վայրենությունները, պիտի հասկանան, որ սա Աստուծո՞ւ արածը չէ և պիտի փորձեն օգնել հալածվողներին և պատժվողներին:

Վերջապես, բոլոր նրանք, ովքեր հաստատուն են մնալու իրենց հավատքում, նույնիսկ թե՛ գոհվեն, Աստուծո՞ւ հավիտենականությանը պիտի արժանանան:

Շատեր կարող են այս գլուխը շատ երեսկայական գտնել: Բայց ես ազդարարում եմ ձեզ, մանավանդ քրիստոնյաներին. **շատ վատ ժամանակներ են գալու. և դուք այսօրվանից պետք է պատրաստվեք դրանց:** Ես պարտավոր եմ զգուշացնել ձեզ, անկախ նրանից, թե աշխարհն ինչ է ասում կամ մտածում:

ՓԼԿՈՒԹՅՈՒՆԸ

Հիսուսն ասել է, որ ո՛չ որ գիտի Իր վերադարձի ճիշտ օրը. «ո՛չ իրեշուակները, ո՛չ նույնիսկ Որդին, այլ՝ միայն Հայրը», բայց պետք է պատրաստ լինեք:

Անցյալին, Աստուծո՞ւ հավատացյալների փրկության մասին եղել են երկու տեսակետներ. առաջին, Աստված պիտի փրկի իր հավատացյալներին մեծ փորձությունից առաջ, որ ընդունվել էր շատերի կողմից 1800-ականներին: Մա կոչվում է *Նախափորձության փրկություն* տեսություն: Ըստ երկրորդ տեսության, քրիստոնյաները պիտի ապրեն փորձության շրջանը և պիտի փրկվեն Քրիստոսի զալուստով, այս տեսությունը ծանոթ է որպես *հետփորձության փրկություն*, որն ավելի ժողովրդական է:

Մա միշտ էլ հարց է եղել Եկեղեցու համար, որովհետև Սբ. գրքից կարելի չէ գիտնել, թե՛ ե՞րբ է լինելու փրկությունը:

Ասում են նաև, որ Աստված երբեք թույլ պիտի չտա, որ Եկեղեցին ենթարկվի փորձության, իսկ քրիստոնյաները հալածանքների, չարչարանքների ու սպանությունների: Սակայն մարդիկ մոռանում են, որ Եկեղեցու սկզբնական շրջանին շատեր մարտիրոսացան: Հիսուսի առաքյալները բոլորն էլ սպանվեցին: Ի՛նչ կարծում եք, թե՛ Նա մոռացն էլ էր նրանց:

Մեր սերնդի միլիոնավոր քրիստոնյաներ մահացան կոմունիստների ձեռքով: Նրանք կարելուք չէի՞ն Աստուծո՞ւ համար:

Շատեր շփոթում են սատանայի հալածանքների և Աստուծո ղատաստանի միջև: Աստուծո ղատաստանը նրա նց համար է, ովքեր անտեսում կամ ըմբոստանում են Իր ղեմ, իսկ սատանան սպանում է բոլոր նրանց, ում չի կարողանում խաբել կամ գրավել: Սատանայի պատիժը միայն և յս հողի վրա է, մինչդեռ Աստուծո ղատաստանը հավիտենական է:

Աստուծո և սատանայի միջև եղած պայքարը մեր հոգիների համար է մղվում:

Խաչը բույրբույս համար է: Եկեղեցիներում գոհողությունների ու չարչարանքների մասին այլևս չեն խոսում:

Չարչարանքը միայն փորձության շրջանի համար չէ. ես ամենօրյա երևույթ է աշխարհի տարածքին, մինչև կգա փրկությունը՝ երբ էլ որ դա պատահի:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Եթե շուտով պիտի ենթարկվենք հալածանքի, խաբեության, սպա ինչպե՞ս կարող ենք պատրաստվել դրան: Հարկավոր է ո՛չ միայն ֆիզիքապես, այլ հոգեպես և պատրաստ լինել:

Ենթադրելով որ դու հավատացյալ ես, անավասիկ մի քանի խորհուրդ՝ պատրաստվելու ղժվար ժամանակներին:

Եղի ի կրթված ու գիտակից քրիստոնյա:

Իմացի յ զանգանել լալին ու վատը, ճշմարիտը՝ խաբկանքից: Փորձի յ հասկանալ, թե ի՞նչ է տեղի ունենում աշխարհում, մանավանդ ուշադիր եղի սատանայի ռազմավարությունից ու ծրագիրներից: Քարոզչին մի՛ վստահիր. առանձինն սովորիր, թե ի՞նչ է ասում Աստվածաշունչ մատյանը:

Ապրի յ կյանքը այնպես ինչպես որ է:

Մարդն արարվել է կատարյալ: Նրան տրվել են խելք եւ կողմնորոշվելու կարողություն. հետևաբար, ոմանք մարդու են սպրում, ուրիշներ նախընտրում են հետևել Լուցիֆերին (սատանային):

Մի ժամանակ սատանան հրեշտակ էր, բայց ըմբոստացավ Աստուծո ղեմ. ուզում էր Աստված լինել: Աստված հեռացրեց նրան

երկնքից: Նա օգտագործեց մարդ արարածին, նրան ստիպեց, որ կատարի նույն սխալը՝ աստվածանալ փորձել: Պատուը կերան մեղանչեցին:

Մեղք գործելը ոչ միայն սովորում են, այլև՝ ժառանգում: Մեղքը աշխարհ եկավ Ադամի հետ. մանր հաջորդեց, որովհետև ժառանգները մեղավոր էին:

Ով որ կատարյալ մարդու կյանք է ապրում, դրախտ կգնա:

Իմ պայքարը մարդ արարածի ղեմ չէ, այլ՝ սատանայական գաղափարների և այդ գաղափարները գործածող ուժերի ղեմ, որոնք աշխատում են մարդկանց գերեվարել, նրանց ճորտի վերածել:

ԵՐԿՐՈՐԴ ՍԱՍ

Գերի Գահը երկրորդ մասն ամբողջությամբ նվիրվել է փաստագրական տվյալներին: Նա ներկայացրել է Աշխարհի Սահմանադրություն, Խորհրդարանական Ընկերակցություն, Աշխարհի Ժամանակավոր Գառավարություն և Աշխարհի Ժամանակավոր Դաշնություն կազմելու ուղղությամբ տարված աշխատանքները, տվել կազմակերպողների անունները (հայ չկա), փոխանակված նամակների պատճենները, կազմակերպված ժողովների տեղն ու թվականները, հրավերների պատճենները, ընդունված որոշումները, ընտրված անձերի անունները (հայ չկա), ժողովներում էլույթ ունեցողների անունները և ազգային պատկանելությունը (հայ չկա), հավաքների մասնակցող կազմակերպությունների անունները (հայ չկա – սա այնքան էլ պարզ չի, որովհետև այսօր Երեւանում մոյա է հայաստանյան ընկերությունների անունները օտար անուններով կերելը), մասնակցող հոչակավոր անհատների անունները (հայ չկա):

Այս մասը մասնագիտական է. եւ ովքեր այս հարցերով ուսումնասիրություն են կատարում՝ կարող են նրանց տրամադրել այս տվյալները:

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս բաժնում, որպես գրքի թարգմանիչը, տալիս եմ որոշ տեղեկություններ՝ դուրբմբունի դարձնելու համար Գերի Կահի գրքում արձարծված հարցերը: Օգտագործել եմ Հայկական սովետական եւ Բրիտանական հանրագիտարանները:

ԱՆՏՈՆ ԱՎԵՑ

Լա Վեյը եղել է աղյուծ ընտելացնող եւ կրկեսի նվագաձու: Սովորել է կախարդություն եւ այն վերածել կրոնի: 1966 թ. ապրիլի 30-ին ԱՄՆ-ում հիմնադրել է «Մատանայի եկեղեցին», որի ուսմունքն ու ձեսերը ներկայացված են «Մատանայական Սբ. Գրքում» (1969):

Լա Վեյի հետատեսիլային ելույթները հետաքրքրել են որոշ անհատների, որոնք միացել են «Եկեղեցուն», բայց նրանց թիվը երբեք մի քանի հազարից չի անցել:

Լա Վեյի՝ Սան Ֆրանցիսկոյի տան մեջ կատարած գունավոր ձեսերը (նա իր տունը ներկել էր սեւ) լցնում էին լրատվական միջոցների առաջին էջերը:

«Մատանայի եկեղեցին» սատանային չի պաշտում եւ չի ընդունում «չար»-ի քրիստոնեական բացատրությունը, ոչ էլ սատանայի գոյությունը: Լա Վեյի համար Դժոխքի իշխանը խորհուրդ է սատանան ինքնատիրապետության, պետությունն օգտագործողների դեմ ըմբոստության, գոյության շարունակության եւ իմաստության խորհուրդ է:

«Մատանայի եկեղեցու» հետերդներին համար Լա Վեյի իմաստությունն անսխալական է: Ըստ նրանց՝ ձեսերը հոգեբանական թատերախաղեր են, որոնց նպատակն է գաղափարները Ես-ը եւ անտեսել խեղճ-տկար կյանքը: Մեսերում կատարվում է Սեւ պատարագ, որին մասնակցում է մերկ եզ որպես բազին:

Այսօր «Մատանայի եկեղեցին» քաջշքում է իր գոյությունը:

Լա Վեյի մահից հետո (1997) «Եկեղեցին» ղեկավարում է Բլանշ Բարտոնը:

ԱՄՆԱՏՄԱ

Ըստ հին հունական ավանդության, Ատլանտիսը մի մեծ կղզի էր Ատլանտյան ովկյանտում, բնակեցված քաղաքակիրթ ցեղով՝ ստլանտներով: Ատլանտներն իբր գավթոդական պատերազմներ էին մղում Եվրոպայում ու Աֆրիկայում, եւ միայն աթենացիներն էին, որ կարողացան նրանց դեմն առնել: Ատլանտների մասին միակ տեղեկությունը մեզ է հասել Պլատոնից: Ըստ նրա՝ Ատլանտիսը գտնվել է Ջիբրալթարից արեւմուտք եւ անհետացել է 10-12 հազար տարի առաջ երկրաշարժի հետեւանցով: Բազմաթիվ անգամ փորձեր են արվել երկրաբանական եւ պատմական փաստերի հիման վրա մեկնաբանել Ատլանտիսի վերաբերյալ եղած ավանդությունը, ներկայացվել են զանազան ենթադրություններ, սակայն դրանցից ոչ մեկը գիտականորեն չի հիմնավորվել:

ԱՐՄԱԳԵՂՂՈՆ

Նշվել է Նոր Կտակարանի «Հայտնության գրքում»:

Արմագեղոնը Պաղեստինում գտնվող ռազմավարական նշանակություն ունեցող մի տեղ է, ուր երկրային թագավորները սատանայի ղեկավարությամբ պիտի պատերազմեն Աստուծո գործերի դեմ՝ աշխարհի պատմության վերջավորության:

ԲՈԳՈՄԻՆՆԵՐ

Առաջացել է Բոգոմիլ քահանայի անունից:

Բոգոմիլների շարժումը 8-րդ դարում տարածվել է Բյուզանդիայում: Բոգոմիլները մասնակցել են Բյուզանդիայի դեմ բուլղար ժողովրդի պատմամբություններին (1040 եւ 1072 թթ.):

Բոգոմիլները կոչ էին անում չնեազանդվել պետական իշխանությանը եւ պայքարել քրիստոնեական եկեղեցու ճնշման դեմ:

Բոգոմիլների ուսմունքի հիմքը երկվությունն էր Բարոն եւ Չարի պայքարի գաղափարը: Ելնելով մեղսալից աշխարհի պատկերացումից բոգոմիլները մերժել են սեփականությունը, եկեղեցական նվիրապետությունը, ձեսերը, յաչքը, սրբապատկերները, պսակը, թեւեւ քչերն են իրագործել այդ գաղափարները: Նրանք ընդունել են միայն Ավետարանը, մի մասը՝ Նոր Կտակարանը:

Ուժեղ հալածանքների պատճառով շարժումը բաժանվել է մանր աղանդների և կորցրել ինքնությունը: Գոյատևել է մինչև 17-րդ դար:

Բոգոմիլները կրել են Հայաստանում և Բյուզանդիայում հանդես եկած պավլիկյանների ազդեցությունը և, իրենց հերքին, ազդել Արեւմտյան Եվրոպայում առաջ եկած մի շարք աղանդների վրա:

ԲՈՒՂԱՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի երեք գլխավոր կրոններից մեկը, որը ծագել է Հնդկաստանում (Նևպալում): Բուդդան ծնվել է Ք. ա. 563 թվականին, մահացել՝ 483-ին:

Դավանանքը շարադրված է «Մբ. գրքում», որ բաժանված է երեք մասի: Այս կրոնի հիմնադիրը՝ արքայազն Մուտխադան Գաուտաման, վեց տարի ապրել է մեկության մեջ, որի ընթացքում նրան հայտնի է դարձել «չորս ազնիվ ճշմարտությունների» մասին ուսմունքը՝ մարդկանց փրկելու և կիրականային հասնելու ուղիները: Նա քարոզել է այդ ուսմունքը, համարվել Բուդդա՝ «լուսավորված», «պայծառության հասած», և մահից հետո՝ աստվածացվել:

Բուդդայականությունը տարածված է Օայրագույն Արևելքի երկրներում, ունի 500 միլիոն հետևորդ:

Բուդդայականության յուրահատկությունը նրա գործնական սկզբունքներն են: Այն մերժում է կրոնի արտաքին ձևերը, վերացական մտածողությունը և դասակարգային սահմանափակումները, և որպես կենտրոնական հարց առաջ է քաշում անհատի կեցությունն ու «փրկությունը»: Այս ուսմունքի համաձայն, կյանքը տառապանք է, և դրա պատճառը մարդկանց ցանկություններն ու կրքերն են: Տառապանքներից կարելի է փրկվել խեղդելով ցանկություններն ու կիրքը, հետևելով կիրական տանող փրկության ուղուն: Մահը ողբերգություն չէ և ոչ էլ ազատություն, այլ փոխարկում է նոր կյանքի, և, հետևաբար, նոր տառապանքների: Նոր ծնունդը կապված է նախորդի հետ: Ուստի, յուրաքանչյուր մարդ պատասխանատվություն է կրում ո՛չ միայն իր, այլ՝ իր նախորդի արարքի համար:

Բուդդայականության բարոյականության հիմնական պահանջը ներքին «ինքնակատարելագործումն» ու «ինքնախորհասուցումն» է, հոգեկան և մարմնական զանազան պահանջների արհամարհումն ու «խեղդումը», որի շնորհիվ մի շարք վերածնունդների ընթացքում կարելի է հասնել հավիտենական ու բացարձակ անդորրի, երանելի վիճակի՝ նիրվանային և միանալ Բուդդային:

Ի տարբերություն իսլամի և քրիստոնեության, բուդդայականությունում չկան արարիչ աստուծո և փրկիչ գաղափարները: Աստված, որպես բարձրագույն էություն, հավասար է կիրվանային հասած մարդկանց բուդդաներին:

1950-ին, բուդդայականների միջազգային հավաքին (Շի Լանքա) ստեղծվել է Բուդդայականների համաշխարհային եղբայրությունը:

ԲՐԱՀՄԱՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հին հնդկական կրոն, որը ծագել է Ք. ա. առաջին հազարամյակում: Բրահմայականության հիմնական սկզբունքները շարադրված են վեդաներում: Ըստ այս ուսմունքի, մարդու մահից հետո նրա հոգին, լքելով մարմինը, վերաբնակվում է մեկ այլ մարմնում, համապատասխան նախորդ կյանքում ունեցած արարքին կամ արատավոր վարքագծի: Դա կրկնվում է այնքան ժամանակ, մինչև հոգին մաքրվում ու միաձուլվում է ընդհանուր հոգու հետ ազատվելով նորանոր վերակենդանացումներից:

Բրահմայականությունում մեծ տեղ է հատկացվել ճգնաժամային կյանքին: Բրահմայականության մեջ տեղ է գտել աստվածային երրորդության (Բրահման, Շիվա, Վիշնու) մասին ուսմունքը: Բրահման գլխավոր և արարչագործ աստվածն է (ստեղծել է երկրագունդը), Վիշնուն՝ պահպանողը, իսկ Շիվան՝ ավերողը: Բուդդայականության առաջացմամբ, բրահմայականությունը զիջեց իր իշխող դիրքը, բայց հետագային վերածնվեց հինդուականության տեսքով:

Հինդուականության մեջ Բրահմանը բացարձակ ճշմարտություն է կոչվում է «Աշխարհի հոգի» կամ «Բացարձակ էակ»:

Բրահմանները հնդկական սրբազան ծիսակատարությունների նկարագրությունն է, գրված 8-6 դդ. Ք. ա.: Բրահմանան արտացոլում է քրմերի անսահմանափակ իշխանությունը:

ԳՆՈՍԻԿՈՒԹՅՈՒՆ

Հին կրոնական շարժում, որի հետևորդները պնդում են, թե փրկության գաղտնի խնամությունն ունեն: Անուրը գալիս է հունական «գնոսիս» բառից, որ նշանակում է «գիտենալ»:

Այս ուսմունքը փորձել է քրիստոնեական աստվածաբանությունը միացնել Արեւելքի դիցաբանության: Օգտվել է հունական փիլիսոփայությունից, հեթանոս կրոններից, հուլյայականությունից և քրիստոնեությունից:

Առաջացել է Հռոմեական կայսրությունում և գոյատևել է Ք. ա. 1-3 դդ.:

Գնոստիկները հավատում են գերազույն Աստուծո, որ հոգի էր, եւ երկրորդ աստուծո՝ որ ստեղծել էր «չար» աշխարհը: Նրանք հավատում էին, որ մարդկությունը կյուրական է եւ դատապարտված է ոչնչացման, բայց Աստված ուղարկել է ոգեկան Քրիստոսին, որպեսզի փրկի հոգիները:

Տարբերում են «հեթանոսական» և «քրիստոնեական» գնոստիկությունը, որոնց համար ընդհանուրը կատարյալ աստվածությունն է:

Գնոստիկությունը թշնամաբար է վերաբերվել քրիստոնեության մեջ հրեականության տարրերին, մերժել է Հին Կտակարանը: Քրիստոնեությունը հաղթահարել է գնոստիկությանը, սակայն ավանդույթները շարունակվել են մինչև ուշ միջնադար: Քրիստոնեության համար՝ գնոստիկությունը աղանդ է, հետևաբար, ուղղափառ քրիստոնեությունը գնոստիկական երկերը հիմնականում ոչնչացրել է:

1945 թվականին Վերին Եգիպտոսում հայտնաբերվել են գնոստիկների 44 ձեռագիր երկեր:

Ներառվում է, որ գնոստիկությունը հետևորդներ է ունեցել նաև Հայաստանում:

ԷՆՈՎԱ

Հուդայականության գերազույն աստվածը: Սկզբնապես համարվել է Հուդա ցեղի, իսկ հրեական ցեղերի միաձուլումից ու նստակյաց կյանքի անցնելուց հետո (Ք. ա. 11-րդ դար)՝ բոլոր ցեղերի գլխավոր աստվածը: Պատկերվել է առյուծի, ցուլի, ապա մարդու կերպարանքով:

Հուդայական պետության և թագավորական իշխանության ծագումը պայմանավորվել է Եհովայի՝ որպես միակ աստուծո եւ «երկնային թագավորի» գաղափարի վրա: Դրան համապատասխան Եհովան՝ տիեզերքի արարիչն ու տերը, անեղ է վրիժառու, ամենակարող, մարդու, հատկապես հրեա ժողովրդի ճակատագրի որոշողն ու տեսիլնողը:

Ք. ա. 10-րդ դարու կեսերին, Սողոմոն Իմաստունը Երուսաղեմում կառուցել է Եհովայի տաճարը. միայն այնտեղ է թույլատրվել գոհ մատուցել Եհովային: Ք. ա. 7-րդ դարից ավելի է շեշտվել Եհովայի բացարձակ իշխանությունը, արգելվել է մյուս ցեղերի աստվածների հանդիսավոր պաշտամունքը:

ԷՆՈՎԱՅԻ ՎԿԱՆՆԸ

Աղանդ, որը հիմնադրել է Չարլզ Թեյզ Ռասելը 1872-ին՝ ԱՄՆ-ում: Այսօր տարածվել է աշխարհի գրեթե բոլոր երկրներում:

«Եհովայի վկաներ» անունը որդեգրել է Ռասելի հաջորդը՝ ժողեֆ Ֆրանկլին Ռուդերֆորդը (1869-1942), 1931-ին: Նա Ռասելի ժողովրդավարական սկզբունքները փոխարինել է աստվածապետական համակարգով: Ռուդերֆորդի քաղաքականությունը շարունակել է նրա հաջորդը՝ Նաթան Հունթը Նորթ, որը հիմնել է «Աստվածաշնչի դիտարան դպրոցը» (Բրուկլին, Նյու Յորքի նահանգ), ուր քարոզիչներ ու դեկավարներ են պատրաստվում: Նորի տեսիլնայամբ՝ մի խումբ «վկաներ» նոր ձեռով են թարգմանում Մ. գիրքը:

Մրանք հավատում են, որ Եհովան ճշմարիտ Աստվածն է, իսկ «վկաները»՝ Աստուծո ընտրյալ հետևորդները: «Վկաները» որևէ կապ չունեն քրիստոնեական մյուս աղանդների հետ և հակառակ են պետություններին: Նրանք աշխարհի ղեկավարությանն

ու քաղաքական կուսակցություններին համարում են սատանայի դաշնակիցներ: Նրանք չեն ուղջունում որևէ երկրի դրոշակ, մերժում են գինվորական ծառայությունը և չեն մասնակցում ընտրություններին: Ըստ նրանց՝ Եկեղեցիներն ու մյուս աղանդները գործադրում են սատանայի կամքը, այդ պատճառով՝ քահանա, եկեղեցի, ուխտ եւայլն բառերը չեն օգտագործում:

Եհովայի վկաների նպատակն է հաստատել Աստուծո թագավորությունը: Նրանք կարծում են, որ Աստուծո պետությունը պիտի իրականանա Արմազեղանից հետո: Ընդունում են Դանիել մարգարենի և «Հայտնության գիրքը» որպես աշխարհի գործերի Աստուծո ժամանակացույց և մարդու ճակատագրի որոշիչ:

Ըստ Հայտնության հաշվարկների՝ Ռասելը հաստատել է, որ 1874-ը պիտի լինի Քրիստոսի «անտեսանելի վերադարձի» տարին, իսկ 1914-ին՝ Քրիստոսի երկրորդ գալուստը ու վերջ «հեթանոսական ժամանակներին»:

Նրանց համար Քրիստոսը Աստուծո ներկայացուցիչն է. Նա եկել է հաստատելու Աստուծո պետությունը և վերահաշտեցնելու մարդին՝ Աստուծո հետ: Եհովայականները մերժում են դժոխքի գաղափարը, իսկ հավիտենական կյանքը համարում են անխուսափելի: «Վկաների» համար՝ մահը շիջում է միայն:

«Վկաները» Գերմանիայում և Առանցքի երկրներում են թարկվել են հալածանքի: Շատ երկրներում նրանց գործունեությունն ընդհանրապես արգելված է:

«Վկաներն» իրենց հավաքատեղին կոչում են «Թագավորության սրահ»: Մկրտվում են սուզվելով ջրի մեջ, չեն ընդունում ամուսնալուծումը՝ բացի խարդախության (շնության) դեպքերից, դեմ են արյան փոխներարկման:

«Վկաները» պարտավոր են շաբաթական հինգ ժամ մասնակցել «Թագավորական սրահի» հավաքներին և երկր ժամեր - որքան հնարավոր է - տրամադրել տուն առ տուն քարոզելուն:

Յուրաքանչյուր «Թագավորական սրահ» ունի իր շրջանը, իսկ յուրաքանչյուր «վկա» քարոզելու և գիրք ու գրականություն բաժանելու իր շրջանակը:

Հրատարակում են «Դիտարան» կիսամյա հանդեսը և երա հավելված «Արթնացիր»-ը, որը 1980-ին տպագրվում էր 10 միլիոն օրինակ տպաքանակով՝ 80 լեզուներով:

ՕՐԱՐԱՄԱՍԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրանում տիրապետող նախաաննդական կրոն: Հիմնադիրը Ջրադաշան է (Ք. ա. 630-553): Ըստ զրադաշտականության, գոյություն ունի երկու սկզբունք՝ բարի, ստեղծարար ոգին՝ Ահուրամազդան՝ միակ գերագույն աստվածությունը, և չարն անձնավորող Ահրիմանը: Ահուրամազդան ստեղծել է յոթը աստվածային գորություններին, բնաշխարհի առանձին մասերի արարիչներին ու հովանավորողներին և աստվածային էակներին, ինչպես Միթրան, Անահիտը, եւայլն: Ահուրամազդայի արարչագործությունը հանգեցրել է չար սկզբունքի գործունեությանը: Ահրիմանը գործի է դրել Չար Միտքը, Ցատուրը, Կեղծիքը: Նրան են հարել դեները, որոնք ձգտում են ավերել Ահուրամազդայի արարչությունները: Այսպես են առաջացել մահը, հիվանդությունները, աղետները: Այս պայթարում, որ պիտի վերջանա Ահուրամազդայի հաղթանակով, մեծ տեղ հատկացվում է մարդուն: Մարդն ունակ է ընտրություն կատարել չարի և բարու միջև: Հիշտ ընտրության դեպքում, որը համապատասխանում է զրադաշտական բարոյական երրորդությանը՝ «բարի խոսք», «բարի միտք», «բարի գործ», մարդն իր կյանքի նպատակն է համարում չեզոքացնել, ոչնչացնել չարիքը, օժանդակել՝ աշխարհում արդարության վերականգնմանը: Կրոնաբարոյական կանոնների խախտումով՝ մարդն օժանդակում է չարիքին և մեղակցում է իր հոգու դեմ: Մահացածի հոգին, համապատասխան մարդու արդար և անարդար խոսքերի, մտքերի և արարքների, ուղարկվում է դրախտ կամ դժոխք:

Ջրադաշտականության կրոնափիլիսոփայական համակարգում կան Անգրական և Եզրական ժամանակներ: Վերջինը, իր հերթին, բաժանվում է երկու հատվածների՝ Արարչագործության, երբ Ահուրամազդան ստեղծել է աշխարհը, և Միախառնության, որ սկսվել է Ահրիմանի հարձակումով Ահուրամազդայի արարչության վրա և ավարտվելու է Ջրադաշտից 3000 տարի հետո՝

Փրկչի գալստյամբ, վերջին դատաստանով, Չարիքի ոչնչացումով և Անեզրական ժամանակի վերադարձով:

Ջրադաշտականությունը Իրանում պետական կրոն է դարձել Մասանյանների օրոք: Շապուհ Բ և Հազկերտ Բ քաղաքական նպատակներով դաժան, բայց անարդյունավետ փորձեր են կատարել գրադաշտական կրոնին դարձնելու իրենց տիրապետության տակ գտնվող ժողովուրդներին՝ հատկապես ասորիներին և հայերին:

Ջրադաշտականությունը ազդել է քրիստոնեության, մանիքեականության, իսլամի, ինչպես նաև ստոյիկյան ու գնոստիկյան ուսմունքների ձևավորման վրա:

Ջրադաշտականությունն իր տեղը զիջեց իսլամին, սակայն Իրանում (Քերմանի նահանգ) և Հնդկաստանում (Բոմբեյ և շրջակայք) պահպանվել են գրադաշտականների փոքր համայնքներ:

ՅԵՑԱՐ ԴԵ ՇԱՄՆԵՆ, ՊԻՆՈ

Մեկել է 1881 թ. մայիսի 1-ին՝ Ֆրանսիայում, մահացել 1955 թ. ապրիլի 10-ին՝ Լյու Յորքում: Հնեաբան, փիլիսոփա, աստվածաբան, սինանտրոպոսը (պեղածո հնագույն – ք. ա. Մոտ 400,000 տարի – մարդկանց ներկայացուցիչ, որի կմախքի մնացորդները առաջին անգամ հայտնաբերվել են Չինաստանում՝ հայտնաբերողներից: Նրա ուսմունքի հիմքը քրիստոնեական եղափոխության (էվոլյուցիա) գաղափարն է: Ըստ նրա՝ մարդը եղափոխության զարթոնակետն է: Փորձելով վերացնել հավատի և գիտելիքների հակադրությունը, նա գտնում էր, որ կրոնը պետք է միանա գիտության կադրությունը, նա գտնում էր, որ կրոնը պետք է միանա գիտության կետ և դառնա առաջընթացի որոշիչ գործոն, գործողության կրոն:

ԿԱՔԲԱԼԱ

Կաբբալան հրեական հին, խորհրդավոր հավատք է, սերնդից-սերունդ փոխանցված բերանացի ավանդություն և կիրառումներ, որոնք փոխան իմացության, զգացումով են ընդունում Աստուծան:

Կաբբալայի հիմքը պղատոնական սկզբունքներն են, այսինքն՝ հոգին անմահ է, և նրա գոյությունը մարմնի մեջ թեև

դժբախտություն է, բայց ժամանակավոր է: Կաբբալայականները հավատում են հարության: Հավատում են նաև, թե Աստված է տալիս երկրային հմտությունը: Նրանք պնդում են, որ Աստվածաշունչ մատյանը պարունակում է կարեւոր նշաններ, որ եթե ձիշտ մեկնաբանվեն, կարելի է հայտնաբերել տիեզերքի ստեղծման գաղտնիքը:

Կաբբալայի հավատացողները կարծում են, որ ունեն գաղտնի գիտությունը «աստվածային հայտնության», որ Աստված փոխանցել էր մարդկության Մովսեսի միջոցով: Թեև մովսիսականությունը հուդայականության հիմքն է, բայց Կաբբալան հնարավորություն ու նոր ձևեր տվեց ուղղակիորեն մտնելու Աստուծա: Կաբբալան հուդայականությանը տվեց կրոնական տարածություն: Այդուհանդերձ, Կաբբալայի խորհրդավորությունը շատեր փտանգավոր համաստվածության և հերետիկոսության նշան են համարել:

Կաբբալան սկսել է ծաղկել առաջին դարում, Պաղեստինում: Կաբբալայականները սպասում են հիանալի և խորհրդավոր աստվածային գահին՝ «կաբբին», որ երազել էր Եզեկիլ մարգարեն: «Երջինս գրել է ամենից հին ուսումնասիրությունը կախարչության և տիեզերաբանության մասին:

Կաբբալայական «Արարչագործության գիրքը», որ կազմավորվել է 3-6-րդ դարերում, Արարչագործ Աստուծո արարչագործությունը բացատրում է աստվածային 10 թվերով և հրեական 22 տառերով, որոնք միասնաբար սահմանում են «գաղտնի իմաստության 32 ճանապարհները»:

Կաբբալայի ուսմունքը ներկայացված է 12-րդ դարում գրված «Պայծառության գրքում», որ խոր է վերջնական ազդեցություն է ունեցել հրեական գաղտնի ուսմունքի առաջացման և ընդհանրապես հուդայականության վրա: «Պայծառությունը» ոչ միայն բացատրում է «արարչագործությանը»՝ ստեղծել և պահպանել տիեզերքը – այլ հուդայականությանը տալիս է հոգեփոխության այնպիսի ըմբռնում, որ գորացնում է Կաբբալայի հիմքերն ու նրան տալիս ավելորդ խորհրդավոր խորհրդապաշտություն:

Կաբբալայականները միայն իրենց հայտնի, գաղտնի ձեռնարկով փորձում էին բժշկել հիվանդներին և արագացնել Մեսիայի գալուստը:

Կաբբալան Եվրոպա է մտել 9-րդ դարում:

Երբ հրեաներն արտաքսվեցին Իսպանիայից 15-րդ դարի վերջին, Կաբբալան արագորեն տարածվեց Եվրոպայի տարբեր մասերում:

ՀԻՆՂՈՒԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հինդուականությունը հնդկի ժողովրդի կրոնն է:

Հինդուականության սաղմերը առկա են հին արիացիների դիցաբանական պատկերացումներում, մասնավորապես վեդայական կրոնում: Առաջին հազարամյակի առաջին կեսին բրահմայականությունը Հնդկաստանում վերածվեց հինդուականության:

Հինդուականությունը բազմաստվածյան կրոն է. պաշտվում է աստվածային երրորդությունը Բրահման, հատկապես Վիշնուն և Շիվան: Հինդուականության դավանաբանության համար բնորոշ է հոգու վերամարմնավորումը, ըստ որի՝ մարդու մահից հետո նրա հոգին մարմնափոխվում է բույսի, կենդանու կամ մարդու ձեռով: Հինդուականությունում սրբացված են լեռներ, գետեր (հատկապես Գանգեսը), բուսականություն (Լոտոսը), կենդանիներ (կապիկը, փիղը, օձը, և հատկապես կովը): Հինդուների պաշտամունքի կենտրոնները տաճարներն ու սրբավայրերն են (օրինակ՝ Գանգեսը), հետևաբար, որպես հավատացյալների ղեկավարներ և դատախարակներ հանդես են գալիս տաճարային քրմերը, գյուղական բրահմաները (իմաստունները), թափառական վանականները: Հինդուականության սուրբ գրքերն են վեդաները:

19-րդ դարու երկրորդ կեսին առաջացել է Նորհինդուական ընկերություններ (Բրահմա Մամա, Արիա Մամա, և այլն): Նորհինդուական կրոնափոխության և ուսմունքների համաձայն, բոլոր կրոններն իրենց ներքին էությունը միասնական են և տարբերվում են լիկ արտաքին, պաշտամունքային կառուցվածքով: Հետևաբար, հանելով արտաքինը, ոչ էականը, տարբերակիչը, ընդհանրական հիմքով կարելի է ստեղծել «նոր», «միասնական»,

«ընդհանրական» կրոն, որը մարքված է և ազատված կլինի որոշակի կրոնների և բնորոշ մոլեռանդությունից ու խավարամտությունից:

ՄՈՐՄՈՆՆԵՐ ԿԱՄ ՎԵՐՋԵՆՈՒՄԵՐԻ ՍՐԲԵՐ

Քրիստոնեական աղանդ՝ հիմնված 1830-ին ժողով Սմիթի կողմից: Ավելի քան չորս միլիոն մորմոն կա աշխարհում, որոնց մեծամասնությունը հետևում է ԱՄՆ-ի Յութա նահանգում հաստատված կենտրոնին:

Մորմոն հավատալիքները հիմնվել են իտալականության և քրիստոնեության սկզբունքների վրա և ամփոփվել են «Մորմոնի գրքով» (հեղինակվել է 1830 թվականին): Մորմոնները հավատում են, որ այս գիրքը աստվածային հայտնություն է: Ըստ այս գրքի՝ Ք. ա. 600 թվականին հրեաները եկել են Նոր Աշխարհ և դարձել ամբիկյան հնդկների նախահայրերը: Մորմոնների մյուս երկու սուրբ գրքերն են «Վարդապետություն և ուխտ» և «Արժեքավոր մարգարիտը», որոնք պատմում են ժողով Սմիթի կյանքն ու ուսմունքը՝ ըստ նրա հայտնությունների: Մորմոնները հավատում են, որ կապ գոյություն ունի Աստուծո և մարդի միջև, որը կատարվում է «Մորմոն եկեղեցու» մարգարե-նախագահների միջոցով: Հակառակ քրիստոնյաների կողմից ընդունված Երրորդության, նրանք ընդունում են հարություն առած Աստված Հայրը և Աստված Որդին, մինչդեռ Մուրք Հոգին անմարմին է (ոգեղեն): Մորմոնները հավատում են, որ Քրիստոսը սահացավ՝ մարդկությունը փրկելու համար և թե հարություն առած Քրիստոսը քարոզել է Նոր Աշխարհի հրեաներին, բայց նրա պատգամը մտացվել է կամ սխալ թարգմանվել, հետևաբար, ուղարկվել է ժողով Սմիթը: «Մորմոն եկեղեցի»-ն և նրա նախագահը Աստուծո վերականգնված եղևիսկությունն են (իշխանությունը):

Մորմոնները հավատում են, որ մարդ չձեռք է հղում: Հետևաբար, մորմոնների պարտականությունն է բազմակուսությունը, որպեսզի շատ երեխա բերեն սպասող հոգիների համար: Մարդը ծնվում է մաքուր, նա Աստուծո գավակն է, անմեղ է: Ապագային մարդն է պատասխանատու իր արարքների համար: Հավատում են փրկության: Մարդու հոգին և հարություն անող մարմինը պիտի

միանան երբ Քրիստոս վերադառնա Երուսաղեմ եւ այնտեղից Ամբիկա (տակավին անհայտ մի տեղ), դրանից հետո լավ մորմոնը պիտի աստվածանա եւ Աստուծո ինտ ապրի դրախտում:

Մորմոնի պարտականություններն են եկամտի 10 տոկոսը նվիրել «Եկեղեցուն», իր կյանքից երկու տարի գոնե քարոզչական աշխատանքին, չծխել, չխմել ոգելից ըմպելիներ, թեյ եւ սուրճ:

«Եկեղեցին» ղեկավարվում է 12 առաքյալներով: Նվիրապետության գազաթը նախագահն է՝ երկու խորհրդականներով:

1820-ին ժողով Միթիին իբր այցելել են Աստված ու Քրիստոս եւ նրան սանել, որ գոյություն ունեցող Եկեղեցիներից եւ ո՛չ մեկը Աստուծո պատգամն է փոխանցում: Միթը խոսում է երկնային հրեշտակ Մորմոնի հետ, որը Միթին իբր տվել է ոսկյա աղյուսակները, որոնք թարգմանելով Միթը գրել է «Մորմոնի գիրքը»: Ժողով Միթը 1830-ին հիմնում է Հիսուս Քրիստոսի Վերջին օրերի սրբերի «Եկեղեցին»: Երկար տարիներ հալածվելուց եւ թափառելուց հետո, նա իր հետևորդներով հաստատվում է Իլլինոյզ նահանգում, որտեղ ժողովն ու իր եղբայրը բանտարկվում են: 1844 թ. հունիսի 27-ին խուժանը սպանում է նրանց:

Այսօր «Մորմոն եկեղեցի»-ն շարունակում է ծավալվել: Նա աշխարհի ամենահարուստ Եկեղեցիներից է եւ մտել է առևտրական մեծ գործարքների մեջ:

«Եկեղեցու» եկամտի 50 առ հարյուրը գալիս է հավատացյալներից:

ՇԽՆՈՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Շինտո» չինարեն նշանակում է «աստվածների ուղի»:

Ճապոնիայի ամենատարածված երկու կրոններից մեկն է (բուդդայականության կողքին): Ենթադրվում է, որ սկզբնավորվել է Ք. ա. 4-րդ դարում, թեև որոշ առասպելներ գոյություն ունեն Վաղ անցյալում:

Շինտոյականությունը առաջացել է բնության ոգեղենացման եւ մահացած նախնիների աստվածացման հնագույն պաշտամունքից: Ըստ շինտոյականության, մարդն առաջացել է անթիվ

ոգիներից, ազդեցիկ աստվածներից մեկից: Մահացածի հոգին որոշ պայմաններում կարող է աստված դառնալ:

Շինտոյական արարողակարգը բաղկացած է չորս տարրերից՝ մաքրագործում, գոհաբերություն, աղոթք եւ հեղուս:

Շինտոյականության բնորոշ է հավատը ճապոնական ոգու բացառիկության եւ ճապոնացիների աստվածային միասնության նկատմամբ: Նրա մյուս առանձնահատկությունը բնության եւ գեղեցիկի պաշտամունքն է: Նրան խորթ է երկրայինի եւ երկնայինի, մարդու եւ Աստուծո խիստ հակադրությունը:

5-6-րդ դարերում Շինտոյական եկեղեցու ղեկավար է դարձել Ճապոնիայի կայսերական տունը, կայսրը հայտարարել է գերագույն թուրմ: Բուդդայականության մուտքը վերացրել է Շինտոյի մենաշնորհը: Շինտոյականությունը բուդդայականության հետ վալել է պետության իովանավորությունը, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ծառայել է ազգայնամոլական եւ ուսմանտեղյ տրամադրություններ բորբոքելուն: Ճապոնիայի պարտությունից հետո Շինտոյի ազդեցությունը թուլացել է, այն անջատվել է պետությունից: Սակայն 1950-ից սկսած, նա նորից վերելք է ապրում. հռչակվել է գերերոն, պարտադիր բոլոր ճապոնացիների համար:

ՊԱՎԼԻԿՑԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ծագել է Հայաստանում, ապա տարածվել Բյուզանդական կայսրության փոքրասիական շրջաններում:

Ըստ Բյուզանդական աղբյուրների «պավիլյան» անվանումը առաջացել է հայագգի Կալինիկեյի որդի Պողոսի (Պավղոս) անունից: Ենթադրվում է, որ Պավիլյան շարժումը առաջացել է 5-րդ դարի վերջին: Պավիլյաններն առաջին անգամ հիշատակվում են Ղլիկի 554 թվականի եկեղեցական ժողովի ընդունած «Ուխտ միաբանության Հայոց աշխարհիս» թղթում: Հայկական եկեղեցին դաժան պատիժներ է սահմանել եւ խիստ կանոններ է մշակել Պավիլյան շարժման դեմ: Հայածանքներից խուսափելու համար, Պավիլյանները 7-րդ դարու սկզբից կենտրոնացել են Հայաստանի արևմտյան շրջաններում՝ Բյուզանդիայի եւ Արաբական խալիֆա-

յության սանձանում, և օգտվելով երկու տերությունների հակամարտությունից, վաղ քրիստոնեական հավասարության սկզբունքով համայնքներ են հիմնել: Այս դարում շարժումը հասնում է այնպիսի չափերի, որ Բյուզանդական կայսրությունը զինված արշավանք է կազմակերպում նրանց դեմ: 8-րդ դարում շարժումը վերածվել է ժողովրդական ապստամբության, ստեղծվել են կանոնավոր զինված ուժեր: 872-ին պավլիկյանները պարտվում են, բայց մինչ այդ բազմաթիվ հաղթական կռիվներ են մղում կայսերական բանակների դեմ: Պավլիկյան շարժման մասնակցում էին Հայաստանի և հարեան երկրների ժողովուրդների ներկայացուցիչներ:

Պավլիկյան շարժման գաղափարախոսության կրոնափիլիսոփայական հիմքը բարու (տեր երկնի) և չարի (արարիչ աշխարհի) աստվածների ընդունումն էր: Նյութական աշխարհն ստեղծողը չարի աստվածն է, որը աշխարհը լցրել է չարիքով ու անարդարությամբ: Բարու աստվածը իշխանություն ունի միայն հոգու վրա և չարի իշխանության վերացումից հետո իշխելու է աշխարհին:

Հակադրվելով Եկեղեցուն՝ պավլիկյաններն իրենց անվանել են «իսկական քրիստոնյաներ»: Վկայակոչելով վաղ քրիստոնեական սկզբունքները, նրանք ժխտել են Աստվածամոր, մարգարեների, սրբերի պաշտամունքը, հաղորդությունը, խաչը, մկրտությունը, ծեսերն ու խորհուրդները, եկեղեցական եկեղեցականությունը և ընդհանրապես Եկեղեցին ու վանականությունը: Աստվածաշունչն աստայանից ընդունել են Նոր Կտակարանը (առանց Պետրոս առաքյալի թղթերի), կնոջը համարել են հասարակության հավասար անդամ, ամուսնությունը իրականացրել են աշխարհիկ ձևով:

Պավլիկյան շարժման ճնշումից հետո, գաղափարները պահպանվել են Հայաստանում, ծնունդ տվել Թևոդոսյան շարժմանը: Բյուզանդական կայսրությունը Պավլիկյան շարժման շատ մասնակիցների բռնի գաղթեցրել է Թրակիա և Մակեդոնիա, որտեղ նրանց ազդեցությամբ բռնկվել է Բոգոմիլների շարժումը: Պավլիկյաններին են կապվում նաև Արեւմտյան Եվրոպայում միջնադարում սկիզբ առած մի շարք շարժումներ:

Անգլիացի պատմաբան է. Գիբբոնի բնորոշմամբ՝ «Բավլիկյան շարժումը ցնցեց Արեւելքը և լուսավորեց Արեւմուտքին»:

Բովանդակություն

Նախերգանք	էջ 3
Ո՞վ է Գեորգի Կան	էջ 27
Խմբագրի խոսքը	էջ 28
Առաջին մաս	
Գլուխ 1 – Աշխարհի տնտեսությունը	էջ 32
Գլուխ 2 – Աշխարհի քաղաքականությունը	էջ 42
Գլուխ 3 – Ամերիկայի սովերային կառավարությունը ..	էջ 58
Գլուխ 4 – «Նոր դար» շարժումը	էջ 70
Գլուխ 5 – Ազատ մասնությունը – թաքնված ուժը	էջ 87
Գլուխ 6 – «Աշխարհի նոր կարգի» գաղտնի ուսմունքը ...	էջ 109
Գլուխ 7 – Պատրաստվող ճգնաժամը	էջ 115
Եզրակացություն	էջ 126
Երկրորդ մաս	
.....	էջ 127
Չտևողագրություններ	
.....	էջ 128

ՅԱԿՈՐ ՊՈՏՐՈՒՄԵԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ՆԱԽԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

32 H
Գ-16



ՏԻԵՁԵՐԸ
(1986)



ՀԱՅԵՐԸ 1986-ից
(1987)



ԻՆՉ ԸՆԵՆ-Բ
(1991)



ԱԳԱՐԱԿ (թարգմանություն)
(1993)

